



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝


Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am



Ամպի Գահաբ

Խաղաղ
Զգասրի
արկածներ



„ԳԻՏԵԼԻԲ“
1990 թ.
ԵՐԵՎԱՆ

Կազմեց և առաջաբանը գրեց՝
ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԶԻԿՅԱՆԸ

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Սուրեն Վահունու դիմանկարը՝
ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ 1958

Վահունի Ս. Վ.

Բարեղամ Իզնատիչի արկածները: Երգիծական երկերի ընտրանի: Կազմեց և առաջաբանը գրեց Ա. Խաչիկյանը.— «Գիտելիք» հրատարակչություն 1990. 224 էջ:

Ժողովածուն ընդգրկում է հեղինակի լավագույն երգիծական պատմվածքները, ֆելիետոնները, հրապարակախոսական և գրաքննադատական սրամիտ հոդվածները:

Գիրքը հրատարակվում է Սուրեն Վահունու ծննդյան 80-ամյակի առթիվ:

ISBN 5—8079—0117—7

© «Գիտելիք» հրատարակչություն, ձևավորման, առաջաբանի, կազմելու համար, 1990, Երևան:

ժամանակակից հայ երգիծական գրականության զարգացման ասպարեզում իր ուրույն տեղն ունի անվանի բանաստեղծ, երգիծարան ու հրապարակախոս Սուրեն Վահունին: Գրական ֆենադատությունը բազմիցս եջել է նրա սուր լեզուն, ինֆնատիպ ոճը: Կյանքից առնված հասարակ առօրյա փաստը նա կարողանում էր հասցնել գեղարվեստական ընդհանրացման, ստեղծել երգիծական այնպիսի կերպարներ, որոնք ընթերցողի հիշողության մեջ մնում են որպես տվյալ երևույթի բնորոշող, հանրանշանակ անուններ: Իր երգիծական երկերով ու սրամիտ հոդվածներով խորհրդահայ գրականության մեջ, Նաիրի Զառյանի խոսքերով ասած, «նա քստեղծեց Վահունիական անկրկնելի մի ոճ», որի շնորհիվ ընթերցողները նրա ֆելիետոններին սպասում էին անհամբեր, կարգում հետաքրքրությամբ ու գեղագիտական հանույժով:

Վահունին անողոք ծաղրում էր մեր իրականության սովբոտ կողմերը, խորթ երևույթները՝ կաշառակերությունը, սրնապարծությունը, հանոյակատարությունը, գոեհկությունը, ֆենադատում էր խորհրդային ապարատում, տարբեր ձեռնարկություններում ու հիմնարկներում աշխատող բյուրոկրատներին, սրտացավ անաշառությամբ պայքարում էր գրական խոտանի, գրագողերի ու ապաշնորհ թարգմանիչների դեմ: Նրա «Բարեղամ Իզնատիչի արկածները», «Բաց նամակ հանդերձյալ աշխարհից», «Ընկեր դահլիճը», «Միծաղելը բա-

վական չէ» և այլ ֆելիետոններն ու երգիծական հողվածները. սրամիտ գրախոսականները ժողովրդային արվեստի մարտնչական մնայուն գործեր են, որոնց համար Վահունին առաջինն արժանացավ «Մեսրոպյան գրիչ» մրցանակի:

Անհատի պաշտամունքի տարիներին, նույնիսկ դրանց հաջորդած ձևերի ու լեզուների շրջանում երգիծանքի գարգացման համար ստեղծվել էին խիստ աննպաստ պայմաններ: Խորհրդային իրականությունը գունազարդված պատկերելու ժամանակի պահանջը ոչ միայն լուրջ խոչընդոտներ հարուցեց երգիծարանների համար, այլև նրանցից ոմանք հալածանքի ենթարկվեցին: Եղան ժամանակներ, երբ երգիծարաններին մեղադրեցին գաղափարագրկություն և արտգրկում, խորհրդային իրականությունը «չարամտորեն» ներկայացնելու մեջ: Հենց այդպիսի մեղադրանքով ռուս խոշոր երգիծարան Միխայիլ Զոլոտենկոն վտարվեց ԽՍՀՄ Գրողների միությունից:

Հալածանքի ալիքը հասավ Հայաստան: Այստեղ ևս գրողները մարտնչի, որոնք «Բարեղամ Իգնատիչի արկածները» ֆելիետոնների շարքի համար Սուրեն Վահունուն մեղադրեցին խորհրդային իրականությունը սև գույներով ներկայացնելու, իրական կյանքը ծուռ հայելում անդրադարձնելու մեջ: Բանը հասավ այնտեղ, որ այդ ֆելիետոնները տպագրող թերթը հարկադրված եղավ խմբագրական մի հողվածով, մեղանշելով թույլ տված իր «սխալի» առթիվ, վերահիշյալ ֆելիետոնների հեղինակին խիստ ֆենադատել «վնասակար ընդհանրացումներ կատարելու համար»:

Անցան տարիներ, գրկանքներն ու տառապանքներն անցյալ դարձան: «Բարեղամ Իգնատիչի արկածները» հեղինակը շղթավանակեց ստեղծագործական իր դավանանքին, շարունակեց զբաղվել իր սիրած ժանրի գարգացման գործով: Հան-

րապետական թերթերի էջերում, թեկուզ մեծ ընդմիջումներով, կրկին երևացին Վահունու սրամիտ ֆելիետոնները, հրապարակական ու գրաֆենադատական հողվածները: «Ոգնի» երգիծական հանդեսի ստեղծման օրից մինչև իր մահը նա խմբագրական կոլեգիայի անդամ էր, օգնում էր երիտասարդ երգիծարաններին՝ հմտանալու այդ ժանրին տիրապետելու դժվարին գործում:

Կյանքի վերջին երեք տասնամյակում երգիծարանի իր բնատուր շնորհիք Վահունին օգտագործեց ռուս և եվրոպական գրականության լավագույն նմուշների թարգմանության համար: Հայ ընթերցողները նրա թարգմանությամբ ստացան Յարոսլավ Հաշեկի «Քաջարի գինվոր Շվեյկի արկածները» հումորով հագեցած վեպը, որի համար նա արժանացավ Հայ-հրատպետկոմի լավագույն թարգմանության մրցանակին: Նույնպիսի վարպետությամբ նա իրականացրեց Բոկաչչիոյի «Դեկամերոնի» թարգմանությունը, որի մասին գովեստի խոսք ասելու մեջ իր ժլատությամբ հայտնի Դերենիկ Դեմիրճյանը գրեց. «Հայերեն «Դեկամերոնը» այնքան հեռու է արհեստականությունից, որ մոռանում եմ սրա թարգմանված լինելը: Ամենաուշագրավ հատկությունը թարգմանության մեջ՝ սահուն, անսայթալ շարադրությունն է: Կարծեմ կարդում եմ հեղինակի ինֆևուրույն ստեղծագործություն»:

Վահունու համարձակ ու սուր ֆելիետոնների պակասը միշտ էլ զգալի է եղել: Ընթերցողները ցավով էին նշում, թե ինչու նա չավարտեց ընդհանուր նախաշում գտած իր գրական հերոսին նվիրված ֆելիետոնների շարքը: Այդ հանգամանքը չէր վրիպել նաև Ավետիս Խահակյանի ուշադրությունից:

Տարիներ անց իր հուշագրություններից մեկում Վահունին գրել է.

«Հիշում եմ, Վարպետը հանախ էր ինձ հորդորում շարունակել իմ պատմվածքուման ֆելիետոնների շարքը, որի հերոսի անունն էր Բարեղամ Իգնատիչ: Ասացի, թե մահակային ֆենեղատությունը, որի պատճառով ընդհատվել էր այդ շարքի տպագրությունը, ինձ այնքան է վշտացրել, որ որոշել եմ Բարեղամ Իգնատիչին մեղցնել և բաղել՝ գրելով վերջին ֆելիետոն՝ «Բարեղամ Իգնատիչի մահը»:

— Այդպիսի բան չանես,— ասաց Վարպետը,— ժողովուրդը այդ հերոսին սիրել է: Էլ ի՞նչ ես ուզում: Ման ածիր նրան, տար զանազան գավառներ, կոլխոզներ, նորանոր արկածների մեջ գցիր և այդ միջոցով ցույց տուր բարեք, սովորություններ... Իսկ երբ ժամանակը գա, ժողովուրդը ինքը կմեղցնի ու իր ծախսով կթաղի, ֆառասունեն ու տարին էլ կտա: Մի զարմացիր, այդպիսի բան եղել է: Սպասում էի, որ պիտի պատմի, թե այդպիսի ի՞նչ բան է եղել, բայց այստեղ խոսքն ընդհատվեց:

Երբ մի այլ անգամ Վարպետը նորից անդրադարձավ ֆելիետոնների այդ շարքը շարունակելու հարցին, ասացի.

— Գրելը կգրեմ, բայց հիմա ո՞վ կտալի նման բաներ:

— Իսկ ես ֆեյ խելոֆ մարդ եմ կարծել,— պատասխանեց Վարպետը,— թող շտպեն, գրիր ու թող, երբ գա ժամանակը՝ կտպեն»:

Ժամանակը եկավ: Չկա երգիծաբանը, չկա նաև նրան հորդորանքի խոսք ստող իմաստուն Վարպետը:


Սուրեն Վահունին իր կենդանության օրոք չհասրցեց կազմել ու ընթերցողներին ներկայացնել իր տպագիր ու անտիպ երգիծական երկերի ժողովածուն: Ստանձնելով այդ պարտականությունը՝ հարկ եղավ հավաքել ու սխտեմավորել մամուլի տարբեր օրգաններում տպագրված գործերը, դրանք խմբավո-

րել չորս բաժիններում՝ երգիծական պատմվածքներ, ֆելիետոններ, պատճասական կատակներ, հրապարակախոսական ու գրաֆենադատական սրամիտ հոդվածներ: Յուրաֆանչյուր բաժնում պահպանել ենք երկերի տպագրության ժամանակագրական կարգը: Առանձին դեպքերում հանվել են որոշ անձնանուններ: Հրատարակվող երկերի մի մասը տպագրվում է առաջին անգամ: Գրքի վերջում տրված է հեղինակի երգիծական երկերի, հրատարակած գրքերի ու թարգմանությունների, ինչպես նաև գրողի ու նրա ստեղծագործությունների մասին գրված հոդվածների համառոտ մատենագիտական ցանկը:

Մեր հասարակության հրապարակայնության ու դեմոկրատացման ժամանակը հնարավորություն ընձեռեց կազմելու սույն ժողովածուն, որտեղ ներկայացված է անվանի երգիծաբանի ստեղծագործության ընտրանին: Սուրեն Վահունու՝ ներշնչանքով ու հուզմունքով գրած սրամիտ ֆելիետոնները շեն կորցրել իրենց արդիականությունը: Դրանք կօգնեն ժամանակակից հայ ընթերցողին պատկերացում կազմելու ստալինյան դարաշրջանից մեացած դառը ժառանգության մասին, վարչա-հրամայական համակարգի տարբեր ոլորտներում եղած այն խորք բարեքի մասին, որոնց վերացման համար իր վնասական պատրաստակամությունն է հայտնել մեր ինֆեռիշիան պետության՝ Հայաստանի Հանրապետության ներկայիս սերունդը: Նրան անշուշտ գորավիզ կկանգնեն ժամանակակից հայ երգիծաբանները, որոնց՝ ստալինիզմի, ձևհալի ու լնացման տարիներին գրած իր սրամիտ ու համարձակ երկերով կմիանա նաև Բարեղամ Իգնատիչի արկածների հեղինակը:



Երգի ծանփան
պարտաճանաչ



ԲԱՐԵՂԱՄ ԻԳՆԱՏԻՉԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

1. ԱՐԹՆԱՑՆՈՂ ԺԱՍՆՈՒՅՑԸ

Բարեղամ Իգնատիչը շատ է սիրում քնել: Թեև հաշվապահի պաշտոն ունի, բայց քնում է դիրեկտորական քնով, 10—15 ժամից ոչ պակաս: Եթե նա աշխատանքից չէր ուշանում, ապա դրա պատճառը հարևանուհու աքաղաղն էր, որն ամեն օր ժամը 6-ին արթնացնում էր նրան այնպիսի մի ծղրտոցով, որ կարծես ջագ նվազախմբից էր սովորել: Չլիներ այդ ճշտապահ թռչունը, մեր հաշվապահը օրերով չէր արթնանա, որովհետև ո՛չ կովարար կիև ուներ, ո՛չ էլ ուրիշ արթնացնող: Բայց պատահեց այնպես, որ աքաղաղի վարքագիծը գայրացրեց բակի դռնապանին. այդ հիմարը (այսինքն աքաղաղը) շարունակ փորփրում, ցրիվ էր տալիս այն աղբակույտը, որը դռնապանը երկու տարուց ավելի խնամքով պահում էր պատշգամբի տակ: Վերջապես ցախավելի մի հարվածից հետո աքաղաղը հավիտյան լռեց, խոր վիշտ պատճառելով բակի հավերին և Բարեղամ Իգնատիչին:

Խեղճ հաշվապահը ամբողջ գիշեր չքնեց, մտածելով, թե ով պիտի փոխարինի հանգուցյալին: Վերջապես հաջորդ օրը գտավ մի շատ վստահելի փոխարինող. դա մի արթնացնող

ժամացույց էր, մի իսկական ժամացույց՝ պատրաստված Երևանի ժամացույցների գործարանում:

Աշխատանքից վերադառնալով, նա ժամացույցի զանգահարող մեխանիզմի սլաքը կանգնեցրեց 6-ի՝ այսինքն իր արթնանալու ժամի վրա, մտավ անկողին և անմիջապես խոնփացրեց: Թե որքան քնեց՝ հայտնի չէ: Միայն այն կարող ենք ասել, որ Բարեղամ Իգնատիչը երազում արդեն կազմել էր բոլոր ամիսների ոռճկացուցակները, 1945 թվի դեկտեմբերից մինչև 1976 թվի դեկտեմբերը՝ ներառյալ, իսկ ժամացույցը դեռ չէր զանգահարել: Այնուամենայնիվ Բարեղամ Իգնատիչն արթնացավ: Արթնացավ հարևանուհիների ամենօրյա կովի աղմուկից և իսկույն նայեց ժամացույցին: 5-ից պակաս էր 15 րոպե: Հավատալով դրան, վերմակը քաշեց գլխին և նորից քնեց: Արթնացավ երկրորդ անգամ՝ դարձյալ 5-ից պակաս էր 15 րոպե: Ա՛յ քեզ զարմանք. ինքը կազմել էր նույնիսկ 2001 թվականի ոռճկացուցակները, իսկ ժամանակը մի վայրկյան էլ առաջ չէր շարժվել: Դեռ կարգին չէր զարմացել մեր հաշվապահը, երբ դուռը թակեցին: Բարեղամ Իգնատիչը վերմակը գլխին օգեց, վերկացավ անկողնուց, բացեց դուռը և այս անգամ իսկապես զարմացավ: Դռան առջև կանգնած էր հիմնարկի ամբողջ կոլեկտիվը՝ դիրեկտորի տեղակալից սկսած մինչև հավաքարարուհին:

— Ես չասացի՞, թե ծանր հիվանդ կլինի, որ աշխատանքի չի եկել, — ասաց դիրեկտորի տեղակալը, գլխավորելով ներս մտնող բազմությունը:

— Ինչո՞ւ, ժամը քանի՞սն է, — հարցրեց Բարեղամ Իգնատիչը շքմամբ:

— Ուղիղ հինգն է: Աշխատանքը հենց նոր վերջացավ: Բարեղամ Իգնատիչը համարյա ուշաթափ ընկավ մահձա-

կալի վրա: Երբ խելքը գլուխը եկավ, հիվանդատեսի եկածները սկսեցին հարց ու փորձը:

— Եղբայր, ես հիվանդ չեմ, հիվանդն այն սրիկան է, — բղավեց նա, մատը պարզելով դեպի ժամացույցը:

Բոլորը նայեցին ժամացույցի անշարժացած սլաքներին և իսկույն գլխի ընկան: Ապա որպես փորձված ժամացուցագետներ, սկսեցին իրենց խորհուրդները.

— Ոչի՛նչ, Բարեղամ Իգնատիչ, փորի վրա պառկեցրու՝ կաշխատի: Բուդիլնիկի խասլաթն էդպես է:

— Գլխի վրա դնելն էլ է օգնում:

— Թաց շորով փաթաթիր, Բարեղամ Իգնատիչ:

— Սկվազնյակից հեռու պահի:

— Մի քիչ տաքացրու:

— Մի քիչ սուլֆիդին լցրու մեջը:

Նրանց գնալուց հետո Բարեղամ Իգնատիչը կատարեց բոլոր խորհուրդները, բայց բան դուրս չեկավ: Երբ համբերությունը սպառվեց, մոռացավ, որ գործ ունի անշունչ առարկայի հետ և հանկարծ, բարձրացնելով ժամացույցը, ապտակեց ամբողջ ուժով: Եվ հրաշք: Քարի պես պապանձված ժամացույցը հանկարծ հեծկլտաց և... սկսեց աշխատել:

Հաշվապահի ապտակից հետո ժամացույցը երեք օր ազնվորեն աշխատեց: Բարեղամ Իգնատիչն արդեն մոռացել էր, որ մի օր աշխատանքի չգնալու համար հրամանով նկատողություն էր ստացել: Չորրորդ օրը, որը կիրակի էր, ամբողջ կուլեկտիվը պետք է մասնակցեր մի կարևոր թաղման. մեռել էր դիրեկտորի զոքանչի հորեղբոր հարազատ որդու աղջիկը: Բարեղամ Իգնատիչը որոշեց այդ օրը մի լավ քնել, հավատացած լինելով, որ ժամացույցը ժամը 4-ին կգանգահարի, և ինքը չի ուշանա թաղումից:

Որոշ, ավելի ճիշտ՝ անորոշ ժամանակից հետո ինքն իրեն արթանանալով, հաշվապահը քիչ մնաց զարմանքից խելագարվեց: Դրսում այնքան մութն էր, որ ոչ մի խելքը գլխին մեռել չէր համարձակվի այդ ժամին թաղվել: Բավական չէր խիստ նկատողությունը, այս անգամ էլ խեղճ հաշվապահը զրկվում էր դիրեկտորի բարյացակամ վերաբերմունքից: Եվ անհնար էր ուղղել սխալը, քանի որ սովորաբար մեռելը մի անգամ են թաղում:

Հաջորդ օրը անիծելով իր բախտը, ժամացույցը տարավ խանութ, ետ տվեց և փոխարենը ստացավ մի ուրիշը: Նոր ժամացույցն աշխատում էր մարդավարի, և Բարեղամ Իգնատիչն արդեն վստահությամբ էր վերաբերվում նրան:

Մի օր, մեծ տառապանքներից հետո, Իգնատիչը բաղնիքի համար տոմս ձեռք բերեց և գնաց բաղնիք: Հետը վերցրեց նաև արթնացնող ժամացույցը, որպեսզի գոնե այս անգամ բաղնիքի հերթապահն իրեն չխաբի և ժամանակից շուտ չթափ դուռը:

Մտնելով համարը, նա ժամացույցը դրեց սեղանին, հանվեց, կանգնեց ցնցուղի տակ և հենց նոր էր գլուխը պատել օձառի փրփուրով, երբ ժամացույցը բարկացած զաւլահուրեց: Բարեղամ Իգնատիչը մոտ վազեց և սարսափով նկատեց, որ ոչ թե մեկ, այլ ուղիղ երեք ժամ է անցել: Մի կերպ շորերը վրան գցելով, վարտիքի փոխարեն հագնելով շապիկը, դուրս պրծավ համարից: Գտնելով հերթապահին, նա ներողություն խնդրեց երկու ժամ ավելի լողանալու համար:

— Ի՛նչ ավելորդ ժամեր, — զարմացավ բաղնիքի հերթապահը, — խխպեր ջան, ընդամենը 17 րոպե ես լողացել:

Նոր միայն Բարեղամ Իգնատիչը գլխի ընկավ, որ ժամացույցն աշխատել է ռեկորդային արագությամբ: Ուզեց ետ

դառնալ, շարունակել լողանալը, բայց նրան ասացին, որ համարն արդեն զբաղված է: Հենց այդ վայրկյանին նրա գըլխում մի հանճարեղ միտք փայլատակեց... Եվ Բարեղամ Իգնատիչը դուրս պրծնելով բաղնիքից, քայլերն ուղղեց դեպի կոլխոզ-շուկա: Թե ինչ արավ նա կոլխոզ-շուկայում՝ հայտնի չէ պատմությանը:

Հայտնի է միայն, որ այդ դեպքից հետո Բարեղամ Իգնատիչն այլևս չի ուշանում աշխատանքից, առաջվա նման առույգ է, ծիծաղում է, կատակներ անում, մասնակցում է բոլոր կարևոր թաղումներին: Բայց... բայց այն բակում, որտեղ ապրում է նա, մի արտասովոր բան է կատարվում: Ամեն օր առավոտյան ժամը 6-ին այնտեղ լսվում է մի սրտաձմիկ ծուղրուղու: Ամեն անգամ բնակիչները զարմացած իրար են նայում, դրոնապանը դեռ ու դեռ է ընկնում, բայց ոչ մի տեղ աքաղաղի հետք չկա:

Սակայն վերջերս հարևանուհիներից մեկը որոշ չափով լույս սփռեց այդ խորհրդավոր առեղծվածի վրա: Նա պնդում է, որ աքաղաղի ծղրտոցը լսվում է Բարեղամ Իգնատիչի սենյակից: Այդ ենթադրությունը հաստատվում է նաև նրանով, որ հավերժ չեն հեռանում հաշվապահի լուսամտի տակից: Հարևանուհին նույնիսկ պատմում է, որ ինքը տեսել է, թե ինչպես Բարեղամ Իգնատիչը կերակրում է աքաղաղին: Պատմելիս չի մոռանում այն մանրամասնությունը, որ Բարեղամ Իգնատիչը աքաղաղի համար կուտաման է դարձրել արթնացնող ժամացույցը, միջից հանելով մեխանիզմը:

Լավ է, որ այդ մանրամասնությունը հայտնի չէ ժամացույցի գործարանի դիրեկտորին: Խնդրում եմ դուք էլ ոչինչ չասեք, որպեսզի չնեղանա Բարեղամ Իգնատիչից:

2. ԲԱՐԵՂԱՄ ԻԳՆԱՏԻՉԸ ԹԱՄԱՐԱ

Հարսանիք էր:

Երբ խմում էին նորափեսայի կենացը և ապացուցում, թե աշխարհում նրանից լավ պլանավիկ չկա, հանկարծ էլեկտրական լույսը հանգավ: Հանգավ և այլևս չվառվեց: Ստեղծվեց մի այնպիսի խավար, որ կարող էր հիացնել մեր շքամուտքերում բնակվող չղջիկներին:

— Ես գնացի, բավակա՛ն է,— խավարի մեջ հայտարարեց հաշվապահ Բարեղամ Իգնատիչը, որը դիրեկտորի հիվանդության պատճառով կատարում էր թամադայի պարտականությունը, և հագնելով վերարկուն՝ դուրս եկավ փողոց:

Մինչև հիւրերը էլեկտրական խավարի մեջ քննարկում էին Բարեղամ Իգնատիչի այդ տարօրինակ արարքը, նա, ոտքից գլուխ ցեխոտված, քայլում էր Նարիմանովի փողոցով: Անձրև էր գալիս, գալիս էր այնպես հորդառատ, որ կարծես երկինքն էլ ծակծկվել էր բաղնիքների ջրամանների պես: Չըփչըփացնելով փողոցի առաջին տեսակի ցեխը, անցնելով Գետառ-Չայի ջրառատ կամուրջը, նա հասավ այն խորհրդավոր շենքը, որ կոչվում է էլեկտրացանցի ենթակայան: Այս շենքը նա այցելել էր նաև երկու ամիս առաջ, երբ լույսը հանգրիս պլանավիկի նշանդրեքի ժամանակ:

— Այս անգամ լույսը մտքիցդ հանի,— պատասխանեց մոնտյորը, ճանաչելով նրան:

— Բայց հարսանիք է, ինչպե՛ս անենք:

— Գնացեք լուսնյակով լուր տարեք:

— Անձրև է, լուսինը դուրս չի գա:

— Լավ էլ կանի, քեֆն իրե՛նը չի:

Փորձից իմանալով, թե ինչու է հարցը տիեզերական բնույթ

ստանում, Բարեղամ Իգնատիչը դիմեց նույն մեթոդին, ինչ որ երկու ամիս առաջ:

— Կներեք, որ ձեզ չենք հրավիրել:

— Ոչի՛նչ, շնորհակալ եմ,— մեղմացավ մոնտյորը ինչպես երկու ամիս առաջ: Լավ էր գլխի ընկաթ:

Բանակցությունները տևեցին մի քանի կիլովատ-րոպե և ավարտվեցին կողմերի լիակատար փոխըմբռնումով: Մոնտյորը խոստացավ լույս տալ և մասնակցել հարսանիքին, իհարկե, հեռակա կերպով, այսինքն վայելելով այն ամենը, ինչ պիտի ուղարկեն այնտեղից:

— Զո խաթրի համար եմ միացնում, պալտոնիցդ երևում է, որ լավ մարդ ես,— եզրափակեց մոնտյորը,— բայց տե՛ս, թքում եմ գետնին. թե մինչև չորանալը գինին ու հացը չստացա՝ կհանգցնեմ: Չնեղանա՛ս:

Երբ վերադառնալիս Բարեղամ Իգնատիչը Նարիմանովի փողոցի ցեխի մեջ ապարդյուն փնտրում էր իր կրկնակոշիկը, հարսնատնից արդեն լսվում էր զուռնայի ուրախ ծայր: Իսկ երբ ներս մտավ հարսանքատուն, ապա հյուրերը նրան ողջունեցին այնպիսի մի աղաղակով, որ լույսը դողաց, դողդողաց և նորից հանգավ:

— Չորացավ, չորացավ,— խավարի մեջ մրմնջաց հաշվապահը:

— Ի՛նչը, Բարեղամ Իգնատիչ:

— Թո՛ւքը, թո՛ւքը, մոնտյորի թուքը:

Բարեղամ Իգնատիչի բացատրությունը լսելուց հետո, նրա խոստումները լցրին զամբյուղի մեջ և ուղարկեցին ենթակայան, ապա այս ու այն կողմից ծայն տվին:

— Նստի՛ր, Բարեղամ Իգնատիչ, հոգնեցիր:

Հաշվապահը հանեց վերարկուն, խավարի մեջ ոտքով

աթոռանման մի բան շոշափեց և նստեց: Բայց ավելի լավ էր ցմահ կանգնած մնար: Նստելուն պես աթոռը պայթեց, որոտաց ֆուգասային ուումբի պես, ցնցելով հարսանքատունն ու ամբողջ շենքը: Մարդիկ սարսափահար քար կտրեցին, հարսն ուշաթափ ընկավ փեսայի գիրկը, ապա լսվեց դիուլչո՛ սրտապատառ աղաղակը:

— Վա՛յ, դիուս...

Հենց այդ ժամանակ լույսը վառվեց, և հարսանքավորները գլխի ընկան, որ Բարեղամ Իգնատիչը նստել է դիուլի վրա և որոշ չափով խրվել վերջինիս երախը: Մինչդեռ հաշվապահը տնքում էր կողքերին առաջացած երաժշտական ցավերից, հյուրերը մխիթարում էին դիուլչուն և դոանը խոնված հարեվաններին բացատրում, թե ոչ ոք ոչ ոքի չի սպանել, թեև նրանցից մեկն արդեն զանգահարել էր շտապ օգնության կալանը... և վատ չէր արել:

Մինչ այս, մինչ այն, Բարեղամ Իգնատիչը նորից բազմեց թամադայական գահին: Հյուրերը խմբովին սկսեցին երգել «Բարձր սարեր», բայց շատերը դեռ չէին հասել բարձր սարերի լանջերը, երբ լույսը նորից հանգավ:

Մի փոքր սպասելով, հուսահատված թամադան նորից հագավ վերարկուն և գնաց:

— Գինին վերջացավ,— բողոքեց մոնտյորը, տեսնելով նրան: Չե՛ք տեսնում ընկեր-տղերք են հավաքվել:

Նորից վերադարձավ հարսանքատուն, նորից գինի ուղարկեց, որից հետո լույսը վառվեց, հաստատելով, թե էլեկտրական էներգիան ստացվում է ոչ միայն ջրի, այլև գինու միջոցով:

Բայց գործը դրանով չվերջացավ: Վեց անգամ հանգավ լույսը, վեց անգամ Բարեղամ Իգնատիչը հորդ անձրևի տակ հարսանքատնից վազեց ենթակայան կամ ենթահարսանքա-

տուն, որտեղ հավաքված մոնստրորներն էլ նրան թամառա էին անվանում: Անընդհատ բարձրանում էր նրանց պահանջների վոլտաժը, իսկ Բարեղամ Իզնատիչի ոտքերն այլևս չէին շարժվում: Յոթերորդ անգամ գալիս նա որոշեց դիմել հնարագիտության: Մի թղթի վրա նշանակեց բոլոր սննդամթերքների և խմիչքների անունները, յուրաքանչյուրի դիմաց գրեց Մորգեի հեռագրական այբուբենի նշաններից որևէ մեկը, ապա, հանձնելով մոնստրորին և համապատասխան ցուցումներ տալով, վերադարձավ հարսանքատուն:

Եվ մինչ հյուրերը ուրախանում և իրար կենաց էին խմում, Բարեղամ Իզնատիչը, աչքը էլեկտրական լամպին հառած, անթարթ սպասում էր ինչպես խորտակվող նավի ռադիստ: Երբ լույսը հանգչում էր Մորգեի այբուբենի համաձայն, երկար ու կարճ ընդհատումներով, նա անմիջապես կոահում էր շիֆրը և բացականչում.

- Կետ-գիծ: Գինի հասցրեք մոնստրորին:
- Կետ-Կետ: Ա՛ղ է ուզում:
- Երեք կետ-գիծ: Լավա՛ջ:
- Կետ-երկու գիծ: Կանաչի՛:
- Կետ-գիծ: Գինի հասցրեք:

Վերջին կենացի ժամանակ նրա լարված ջղերն ու ամալի ստամոքսը այլևս չդիմացան, և նա ուշաթափության նման մի բան զգաց: Նրա բախտից գիշերը թյուրիմացաբար կանչված շտապ օգնության ավտոն երևաց առավոտյան, և Բարեղամ Իզնատիչին պառկեցրին մեջը:

Հիվանդանոցում Բարեղամ Իզնատիչը բժշկին պատմեց հարսանիքից հետո առաջացած զարհուրելի ծակոցների և ներվային ցնցումների մասին, գանգատվեց, թե կորցրել է հիշողությունը, չի հիշում հարսի դեմքը, հարսանքավորների խմած

կենացները և այլն: Բժիշկը լուրջ դեմքով լսեց նրան, մի երկար «դա՛» արեց և ապա նշանակեց էլեկտրական վաննաներ:

Եվ այժմ ամեն օր, աշխատանքից հետո, Բարեղամ Իզնատիչը նստում է էլեկտրական հովանոցի տակ և բուժիչ ճանապարհներ ընդունում: Ընդունում է և մտածում, թե ինչքան քիչ կլիներ էլեկտրական վաննաներ ընդունողների թիվը. եթե հարսանիք կազմակերպողներն այդ հարցը նախապես համաձայնեցեն էլեկտրացանցի մոնստրորների հետ, եթե մարդիկ ամուսնանան օրը ցերեկով կամ պարզապես չամուսնանան... Ծատ մտածելուց քունը տանում է, և ամեն անգամ, երբ բժիշկը ընդհատում է ապարատի էլեկտրական հոսանքը, Բարեղամ Իզնատիչը սարսափահար վեր է թռչում և բացականչում.

— Կետ-գիծ: Գինի հասցրե՛ք:

1946

3. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ՄԱԸ ԵՎ ԱՄՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվապահ Բարեղամ Իզնատիչը, որին դուր արդեն ճանաչում էք արթնացնող ժամացույցի պատմությունից, վերջերս իրեն կատարելապես խայտառակեց: Կոլեկտիվի համար ծուլ բերելու հանձնարարությամբ գործուղվեց Սևան, և երևու շքանցած լուր ստացվեց, թե նա այնտեղ մեռել է:

Ի՞նչ անպատասխանատվություն:

Իսկ նրա մահվան լուրն ստացվեց այսպես: Երբ հաշվապահը ժամանակին չվերադարձավ, դիրեկտորը Սևանի բաժանմունքին հեռագրով հարցում արեց այդ առիթով: Երկու օր չանցած ստացվեց մի այսպիսի կայծակ հեռագիր. **Բարեղամ Իգնատիչը առավոտյան վախճանվել է փչանում է ինչ անենք»:** Եվ ահա, հավաքված դիրեկտորի կաբինետում, աշխատակիցները տառ առ տառ ուսումնասիրում էին հեռագիրը:

— Սպասեցե՛ք, — ասաց դիրեկտորը, — այստեղ մի գաղտնիք կա: Հեռագիրը տրված է ցերեկվա ժամը 12-ին. ինչպե՞ս կարող էր առավոտյան վախճանվել, իսկ կեսօրին փչանալ:

— Դա նրանից է, որ կենդանի ժամանակ էլ փչացած էր, — ասաց ջահել գործավարուհին:

Այնուհետև սկսեցին քննել մահվան հնարավոր պատճառները:

— Երևի հյուրանոցումն է գիշերել հիմարը:

— Երևի տրամվայում քրտնել էր:

— Երևի բաղնիքում մրսել էր:

Սակայն դիրեկտորն ընդհատեց մտքերի փոխանակությունը:

— Այժմ պետք է մտածենք գործի մասին, — ասաց նա, — անհրաժեշտ է հոգատար լինել դեպի աշխատակիցը և ժամանակին թաղել:

Եվ քիչ հետո ցրիչը փոստ-հեռագրատուն տարավ հետևյալ պատասխանը. «**Տեղափոխել հնարավոր չի թաղեք այդտեղ մեր հաշվին»:** Դրանից հետո գործավարուհին հիմնարկի միջանցքում փակցրեց հերթական հրամանը, որով հանգուցյալը ազատվում էր աշխատանքից համաձայն իր դիմումի: Այնուհետև նրա անունը ջնջեցին ռոձկացուցակից, ամեն տեսակի այլ ցուցակներից. ապա իրենց անունից, բայց հիմնարկի հաշվին, տպագրեցին մի խորը ցավակցություն և գործը համարեցին ավարտված: Բայց ո՞վ իմանար, որ գործը դեռ նոր է սկսվելու...

Եվ ահա թե ինչպես սկսվեց: Բարեղամ Իգնատիչի ամուրի հարևանուհին, որը վաղուց աչք ուներ նրա սենյակի վրա, կարողալով ցավակցությունը, հոնգուր-հոնգուր լաց եղավ ուրախությունից: Առանց մի վայրկյան կորցնելու, նա Բարեղամ Իգնատիչի անունը ջնջեց տնային գրքուկից, բացեց նրա սենյակի դուռը և փառավորապես տեղավորվեց այնտեղ: Հաջորդ օրը երեկոյան այդ սենյակում, արդեն 19-րդ անգամ, նա պետք է նշեր իր ծննդյան 35-րդ տարին:

Հյուրերը դեռ չէին հավաքվել, և տանտիրուհին Բարեղամ Իգնատիչի մեծադիր հայելու առջև սրբագրում էր իր սպրտան մագերը: Այդ ժամանակ դուռը թեթև ծոռաց, և հանկարծ նա սոկոսումով նկատեց, որ հայելու միջից, չոած աչքերով, իրեն է նայում մի ծանոթ, շատ ծանոթ մեռել... Տանտիրուհին սարսափելի ծիչ արձակեց և ուշաթափվեց: Հարևանները խոնվեցին լուսամուտի առաջ և տեսան, թե ինչպես հարևանուհին թավալվել է գետնին, և ինչ-որ մի սարսափելի արարած նստել է աթոռին, երկու ձեռքով ծածկել է դեմքը և խոմփացնում է:

— Գո՛ղ է, — բղավեց մեկը:

— Մարդասպա՛ն է:

— Միլիցիոնե՛ր կանչեցեք...

— Դուռը փակե՛ք վրան՝ չփախչի:

Դուռն ամուր փակեցին վրան և վազեցին միլիցիոնների ետևից:

Մինչ նրանք միլիցիոններ էին փնտրում, Իգնատիչի հիմնարկում նույն ժամերին տեղի ունեցավ մի ոչ պակաս կարևոր իրադարձություն. դիրեկտորին հաջողվեց հեռախոսով կապվել Սևանի հետ: Եվ նա ամենից առաջ հարցրեց.

— Ի՞նչ եղավ մեր թարմ ձուկը:

— Աղեցինք, որ չփչանա:

— Ի՞նչ ես դուրս տալիս:

— Դուք չեի՞ք հեռագրել, թե աղեք:

— Եղբա՛յր, ես հեռագրել էի, թե թաղեք, ոչ թե աղեք. վերջապես դա Բարեղամ Իգնատիչին էր վերաբերվում:

— Մենք Բարեղամ Իգնատիչին չեի՞նք կարող ոչ թաղել, ոչ էլ աղել, որովհետև մեկնել էր Երևան:

— Ուրեմն հեռագիրն են աղավաղել,— բորբոքվեց դիրեկտորը,— իսկ դուք ինչու՞ էիք հայտնել, թե նա վախճանվել է:

— Ուրեմն հեռագիրն են աղավաղել,— բորբոքվեց բաժանմունքի վարիչը,— մենք հեռագրել էինք, թե առավոտյան վաղ ծանապարհվել է, և ոչ թե վախճանվել է:

— Իսկ ինչու՞ մինչև հիմա տեղ չի հասել:

— Որովհետև Հայտրանսի ավտոն նորից չէր եկել, և նա ծանապարհվեց եզան սալով: Չուկն էլ թողեց այստեղ: Այս երեկո հասած կլինի:

Ստուգելու համար, տեղկոմի նախագահը և մի քանի այլ աշխատակիցներ վազեցին հաշվապահի տունը և, բացելով կողպված դուռը, տեսան, որ մարդասպանի դափնիների վրա խոմփացնողը Բարեղամ Իգնատիչն է: Սալի մեջ երկու օր խնոցու դեր կատարելուց հետո, նա քնել էր սենյակ մտնելուն պես: Նա խոմփացնում էր նաև այն ժամանակ, երբ աշխատակիցները թևերի տակ մտած քարշ էին տալիս դիրեկտորի մոտ: Այնուհանդերձ, ամբողջ թաղամասում տարածվեց, թե հաշվապահը հարուխություն է առել և ուրվականը շրջում է քաղաքում...

Անցան օրեր: Բարեղամ Իգնատիչը գիշերում էր հիմնարկում, գրասեղանի վրա, քանի որ հարևանուհին չէր համաձայնում դատարկել սենյակը, պատճառաբանելով, թե իրեն խաբում են, թե ոչ ոք չի լսել, որ 20-րդ դարում մեռած մարդը

կենդանանա: Խեղճ հաշվապահը նույնիսկ չէր կարողանում մոտենա իր տանը, հենց որ մոտենում էր ծանոթ փողոցը՝ բակերից դուրս էին պրծնում հարյուրից ավելի երեխաներ և ձայն տալիս.

— Եկա՛վ... Եկա՛վ...

— Ուրվականը եկա՛վ...

Բարեղամ Իգնատիչը կրիայի պես գլուխը քաշում էր վերարկուի օձիքի մեջ և հեռանում ուրվականի նման:

Երկար տառապելուց հետո, որոշեց դիմել հնարագիտության: Մի գիշեր եկավ հարևանուհու մոտ, համբերությամբ սպասեց, որ նա նորից ուշաթափվի և ուշքի գա, ապա սենյակի փոխարեն խնդրեց նրա ձեռքը: Իսկ ձեռքն այնպիսի բան չէր, որ հարևանուհին մերժեր: Նրանք ամուսնացան, և այդպիսով Բարեղամ Իգնատիչը նորից սենյակի տեր դարձավ:

Երեք օր հետո կայացավ հարսանիքը, որի համար լայնուրեն օգտագործվեց Սևանում աղած ձուկը: Երբ խմում էին նորապսակների կենացը, դիրեկտորը բաժակը ձեռքրու ոտքի կանգնեց և ասաց.

— Սիրելի սեղանակիցներ՛ր, մի քնախ օր առաջ մեռավ մեր սիրելի Բարեղամ Իգնատիչը: Իհարկե, մեռավ թյուրիմացաբար, բայց դա միևնույնն է: Մեր պարտքն էր այն ժամանակ հարգել մարդու հիշատակը, հոգեհանգիստ կատարել և քելելու ուտել: Բայց ոչինչ, ավելի լավ է ուշ, քան երբեք: Ես ուրախ եմ, որ հարսանիքի այս ճոխ սեղանի վրա մենք կլրացնենք այդ բացը՝ մեր շնորհակալությունը հայտնելու Երևանի փոստ-հեռագրատան աշխատողներին, որոնց շնորհիվ երկու ծախսը մեկ եղավ: Ուրեմն, Բարեղամ Իգնատի՛չ, հանգստությունն ոսկորներիդ և շնորհավոր ամուսնություն:

Այնուհետև թամադան կարդաց հարսանիքի առթիվ ստաց-

ված հեռագրերը, որոնց մեջ բարեկամներն ու ծանոթները իրենց գլուխն էին խոնարհում Բարեղամ Իգնատիչի թարմ աճյունի առաջ:

1946

4. ԲԱՐԵՂԱՄ ԻԳՆԱՏԻՉԻ ՆՈՐ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամուսնանալուց հետո հաշվապահ Բարեղամ Իգնատիչը հաճախ էր սափրվում: Այս անգամ էլ ձեռքով շփելով դեմքը և զգալով, որ նորից է նմանվել նախամարդուն, նա հիմնարկից գնաց ուղիղ վարսավիրանոց:

Վարսավիրանոցում սպասելով հերթի, մի քանի անգամ ծայրից ծայր կարդաց ոսկեգոծ տառերով գրված «ՍԱԿԱ-ԳԻՆԸ» և բավական հարստացրեց իր գիտելիքները. այսպես օրինակ, առաջին անգամ իմացավ, որ սափրվելու համար պետք է վճարել ոչ թե 30, այլ ընդամենը 2 ուրբլի*, գլուխը պատրաստելու համար նույնպես 2 ուրբլի, անկախ պատրաստված գլխի մեծությունից, ձևից և անկախ գլխատիրոջ աշխատավարձի չափից:

* Սակագինը կազմված է 1961 թ. դրամական ռեֆորմից առաջ: Թան. կազմողի:

Վաղուց այդքան հաճելի բան չէր կարդացել, ուստի որոշեց անգիր անել ծայրից ծայր: Բայց այդ ժամանակ, վարսավիրներից մեկը, 30 ուրբլիանոց ժպիտը դեմքին, չգիտես ինչու մոտեցավ հենց նրան և հրավիրեց նստել իր բազկաթոռին: Հազիվ էր նստել, երբ ձախ ականջի տակ ինչ-որ մեկը որոտաց ինչպես փողոցային բարձրախոս.-

— Կանգնի՛ր, հերթն իմն է:

Կանգնեց, բայց վարսավիրը բղավեց ավելի ուժգին.

— Ղալա՛թ ա անում, հերթը քոնն ա:

Նորից նստեց: Վարսավիրը նրա կրծքին փոեց անորոշ գույնի մի սավան, որից հետո բարձրախոսը հեռացավ՝ անընդհատ արտասանելով միևնույն հայիոյանքը:

— Մի՞թե իր հերթն էր, — հարցրեց Բարեղամ Իգնատիչը:

— Բա հո քո՛նը չէր:

— Ապա ինչու՞ չնստեցրիր:

— Որովհետև սրիկա մարդ ա:

— Գրպանահա՞տ է:

— Չէ՛:

— Գո՞ղ է:

— Չէ՛:

— Սոյուզպեչատի լրագրատա՞ր է:

— Չէ՛, չէ՛:

— Բաղնիքի տոմսավաճա՞ռ է:

— Չէ՛, ջանըմ:

— Ուրեմն կարգին մարդ է:

— Ինչ կարգին, թրաշի համար 10 մանեթ տվողը կարգի՞ն կլինի: Փափախս վկա, ես դրան է՛լ թրաշողը չեմ: 10 մանեթ... Թյու՛:

Այդ «թյու»-ից հետո, հաշվապահը հանեց թաշկինակը և

սրբեց երեսի մի զգալի մասը: Այնուհետև ընկավ խոր մտած-
մունքի մեջ, քանի որ գրպանում 10 ոտլուց ավել չունէր:

Վարսավիրը զարեջրավաճառի խանդավառությամբ փրփուր
էր պատրաստում, իսկ նա գլուխը կախ մտածում և զննում էր
կրծքին փոփած սավանը կամ, ավել շուտ, աշխարհագրական
քարտեզը, որի վրա կեղտի պայմանական գույներով նշված
էին բոլոր մայր ցամաքներն ու ծովերը: Այն ցամաքի վրա, որը
նման էր Աֆրիկային, դանդաղորեն շարժվում էր մի փոքրիկ,
բայց ուշագրավ կենդանի, անշուշտ մի փիղ, որը քարտեզի
վրա էր վերցված 1:1.000.000.000. մասշտաբով: Բայց Բարե-
ղամ Իգնատիչին դուր չեկավ այդ մոլորված փիղը. և նա ցու-
ցամատի մի հարվածով նրան նետեց Հնդկաստան, այստեղից
էլ՝ գետին:

Երբ փայլատակեց ածելին, հաշվապահը բնագոյաբար
փակեց աչքերը և սկսեց փնջացնել: Հազիվ էր երագում տեսել
նույն օրը ստացվող թերթի մի համար, ինչպես նաև մի
քաղաքավարի անձնական քարտուղարուհի, երբ նրան թվաց,
թե ամբուլատորիայի ատամնաբուժուհին էլեկտրական բուրդուն
նորից է խրում իր այտի մեջ, և ահավոր ցավից վեր թռավ,
բղավելով.

— Ի՞նչ ես անում, ապո՛ւջ:

— Ի՞նչ եմ անում, տո,— պատասխանեց վարսավիրը
ատամնաբուժուհու փոխարեն,— ահագին պոպոքը կպցրել ես
երեսիդ և իմաց էլ չես տալիս:

Այդ ահագին պոպոքը Բարեղամ Իգնատիչի քթամերձ
խալն էր, որ այլևս չկար:

— Քիչ մնաց զագրանիչնի ածելիս ջարդվեր,— շարունակեց
բողոքել վարսավիրը:

Հաշվապահը ոչինչ չպատասխանեց, որովհետև դիմացի

պատին, գուցե հենց այդպիսի դեպքերի համար, ահագին
տառերով գրված էր՝ «Պահպանել լուրջություն»:

Վարսավիրը մի կտոր բամբակ թաթախեց ինչ-որ դեղին
հեղուկի մեջ և դրեց վերքի վրա, որից հետո հաշվապահը
ցատկեց այնպիսի ուժով, որ սեյսմիկ կայանը տեղական
բնույթի երկրաշարժ արձանագրեց: Բայց բամբակը չօգնեց:
Չօգնեց նաև շիբը: Այդ ժամանակ վարսավիրը վերքի վրա
դրեց թղթի մի կտոր, և արյունը դադարեցրեց ամեն մի գոր-
ծունեություն, որովհետև թուղթը պոկված էր, քաղխորհրդի
սանիտարական սեկցիայի որոշումներից:

— Անցա՛՛՛՛՛ լինի,— ասաց վարսավիրը:

— Շնորհակալ եմ:

— Ներողություն՛ն:

— Ոչի՛նչ, մեծ բան չէր:

— Չէ՛, մեծը՝ մե՛ծ էր, պոպոքի չափ կար: Բա՛խտ էր էլի:

Օրական 40 գլուխ քաղաքացի եմ թրաշում, ոչ մեկի խալը չի
կտրվում:

— Ո՛չինչ, կպատահի:

Լուրջություն:

— Որտեղացի՞ ես, ախպերացու:

— Նախիջևանցի՛:

— Հի՛ն, թե նոր:

— Հին Նախիջևանցի:

Հավանաբար վարսավիրին դուր չեկավ, որ նա ոչ թե նոր,
այլ հին Նախիջևանցի է, ուստի նրա ճախ այտին բացեց մի
խոր ակոս: Այնուհետև յուրաքանչյուր հարցից հետո բացում էր
որևէ խոր կամ ծանծաղ ակոս, նայած հարցի կարևորությանը:
Եթե այդ ժամանակ մեկը աստղադիտակով նայեր Բարեղամ

Իգնատիչի գլխին, նրան կթվար, թե Մարս մոլորակն է տեսնում, որի վրա, ինչպես ասում են, ջրանցքներ ու առուներ կան:

Վերջացնելուց հետո վարսավիրը նկարչի նման, երկու քայլ ետ գնաց և հեռվից նայելով իր գործին՝ ասաց.

— Անու՛շ լինի:

— Շնորհակալ եմ,— մրմնջաց հաշվապահը,— հազիվ գապելով արցունքները և ոտքի կանգնելով: Արցունքների միջից նայելով հայելուն, նկատեց իր հեռավոր ծանոթներից մեկի խոշտանգված ու այլանդակ դեմքը և շտապեց բարևել, առանց գլխի ընկնելու, որ ինքն իրեն է բարևում:

Մնում էր ամենանորբ արարողությունը՝ վճարելը: Չեղբը տարավ գրպանը, բայց հանկարծ հիշեց, որ վարսավիրին 10 ռուբլի մեկնելը նշանակում է սրիկայության վկայական ներկայացնել: Այդ մտքից արլունը խփեց գլուխը, նոր միայն զգաց սոսկալի ցավերը, կատաղության նման մի բան արթնացավ մեջը և որոշեց վերժխնդիր լինել:

— Չե՛կ գրի,— ասաց նա բարձրաձայն:

— Չե՛կ,— և վարսավիրը չափեց նրան ոտից գլուխ:— Չեկ, շա՛տ լավ, շա՛տ լավ: Կգրեմ, ո՞ւմն ես վախեցնում:

Եվ գրեց:

Գանձապահուհին,— որը խորասուզված էր մի հետաքրքիր վեպի մեջ և այն տեղին էր հասել, ուր ամուսինը իր հավատարիմ կնոջը բռնում է սիրեկանի գրկում,— Բարեղամ Իգնատիչին նկատեց միայն այն ժամանակ, երբ վերջինս ծեծեց դրամարկդի ապակին: Ի՛նչ անքաղաքավարություն: Արդեն 8-րդ վեպն էր ավարտում, բայց դեռևս ոչ ոք չէր խանգարել նրան իր կուլտուրական մակարդակը բարձրացնելու գործում:

— 15 ռուբլի,— ասաց նա, նայելով հաշվապահի ներկայացրած թղթին:

— Ինչու՞:

— Չլինի՞ մուֆթա ես ուզում թրաշվել:

— Ես միայն սափրվել եմ, ուրեմն 2 ռուբլի...

— Կոմպրես է արել:

— Ճի՛շտ չէ:

— Սարքել է գլխիդ մազերը:

— Քսան տարի է գլխիս մազ չկա:

— Իմ գործը չէ:

Աղմուկի վրա մոտ եկավ վարսավիրանոցի վարիչը և, քննելով հարցը, որոշեց, որ 10 ռուբլով էլ կարելի է լուր գնալ, քանի որ քաղաքացին ջղախիւն է...

Երկու շաբաթ շարունակ Բարեղամ Իգնատիչի դեմքը պարուրված էր վիրակապերով: Ոմանք չէին կարողանում ճանաչել նրան, և նա դրանից շատ էր տուժում. բավական էր հենց միայն այն, որ խանութի գործակատարը նրան էլ թյուրիմացաբար սպիտակ հացի փոխարեն սևն էր տալիս:

Վիրակապերը բացելուց հետո սափրվելու մեծ անհրաժեշտություն զգացվեց: Բայց հիշելով գլխին եկածը, մանավանդ վճարելու հետ կապված հոգեկան ապրումները, նա որոշեց մի հնար գտնել վարսավիրանոց չմտնելու համար և, որպես հնարագետ մարդ, շուտով գտավ միջոցը: Եվ գտավ, գիտե՞ք որտեղ,— բաղնիքում, այն նույն վայրում, ուր Արքիմեդը, մուտք գործելով առանց ազդեցիկ ծանոթների օգնության, հղացավ իր մեծ գյուտը և բացականչեց՝ «Էվրիկա՛», իհարկե, Բարեղամ Իգնատիչը այդպիսի թեթևսուլիկ բացականչության կարիք չէր զգում: Նա պարզապես կոացավ և իր ոտքերին քսված մազատար ցեխից խնամքով քսեց նաև դեմքին և երեք րոպեից հետո կանգնեց սառը ջրի տակ, որը թափվում էր տաք ջրի ցնցուղից: Էքսպերիմենտը հիանալի արդյունք տվեց. նրա

մագակալած դեմքը մի ընկալում հղկվեց, ինչպես խաշի համար մաքրված ոչխարի գլուխ...

Ճի՛շտ է, այդ արարողությունից հետո դեմքի վրա մնում էին մի քանի անհնազանդ մագեր, բայց դա — ոչինչ: Բարեղամ Իգնատիչը տուն գալով, երեսը մի քանի անգամ շուռումուռ էր տալիս կերոսինկայի վրա, մագերից մի քանիսն էլ այրում էր վառվող թղթով, ուշք չդարձնելով աննշան այրվածքներին ու խանձվածքներին:

Եվ դրանից հետո, ամեն շաբաթ օր, երբ հիմնարկում խորովածի թեթև հոտ էր տարածվում, աշխատակիցներն իրենց թուրք կուլ տալով ասում էին.

— Բարեղամ Իգնատիչը նորից է սափրվել:

1946

5. ԽՈՍՈՂ ՆԱՄԱԿԸ

Հաշվապահ Բարեղամ Իգնատիչի մանկության ընկերներից մեկը, որը հեռավոր կուլտետություններից մեկում պայթաբուրում էր կրթողների դեմ, մի սրտաճմլիկ նամակ էր ուղարկել նրան: Կարդալով նամակը՝ Բարեղամ Իգնատիչը շատ հուզվեց,

30

իսկ վերջին տողերին հասնելիս հանեց թաշկինակը և սրբեց աչքերը:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց կինը,— անհարմար է, հյուրերն ի՞նչ կասեն:

Բայց հյուրերն իրենց հերթին ցանկացան իմանալ պատճառը և հաշվապահը, չմերժելով նրանց խնդիրը, բարձրաձայն կարդաց նամակի մի մասը:

«Սիրելի բարեկամ,— գրում էր կրթողների դեմ պայթաբուրողը,— տասը տարի է, որ քաղաք չեմ եկել: Ա՛խ, կարոտել եմ Երևանին: Ծերացել եմ, գուցե շուտով մեռնեմ, և այստեղի մկներն ուրախանան: Բայց մեռնելուց առաջ մի իղձ ունեմ. ուզում եմ մեկ անգամ էլ լսել Երևանի առուների խշռոցը, քաղաքի հարազատ ձայները: Ա՛խ, եթե հնարավոր լիներ նամակի միջոցով հաղորդել այդ բոլորը: Լսե՛ի՛ նոր մեռնե՛ի:

Նկատվում է դաշտային մկների աճ»:

— Խե՛ղճ մարդ, մուրազն անկատար պիտի մեռնի,— հառաչեց Բարեղամ Իգնատիչը:

Եվ բոլորը տխրեցին:

Բայց հյուրերից մեկը, մի կատակասեր զինվորական, բարձրաձայն ծիծաղեց:

— Դատարկ բան,— ասաց նա,— էլ ի՞նչի համար է հնարված խոսող նամակը: Նստիր ձայնագրող ապարատի մոտ, խոսիր կամ երգիր «Գուրգեն ջան, Բաբկեն ջան» հետո պլաստիկան ծալիր և փոստով ուղարկիր թեկուզ Մարս: Կղնեն պատեֆոնի վրա, կլսեն և գուցե որոշեն փախչել ուրիշ մոլորակ: Հասարակ ապարատ է: Զվարճության համար մի հատ բերել եմ Կիեննայից:

Եվ զինվորականը զվարճության համար խոստացավ կատարել Բարեղամ Իգնատիչի ընկերոջ միակ իղձը: Որոշեցին

31

Ճայնագրել քաղաքի հենց այդ շրջանի մի օրվա բնորոշ ձայ-
ները: Համաձայնվեցին նաև, որ այդ յուրահատուկ տոն-ֆիլմի
մեջ դիրեկտորի դերը պետք է կատարի Բարեղամ Իզնատիչը:

Երեք օր հետո խոսող նամակը պատրաստ էր: Ուղարկե-
լուց առաջ հյուրերը նորից հավաքվեցին, որպեսզի փորձարկեն
նամակը: Լարեցին պատեֆոնը և թղթանման սկավառակը
դրին վրան:

Պատեֆոնը այնպիսի մի ձայն հանեց, որ կարծես սիրտ
եր խառնում, պալ լսվեց Բարեղամ Իզնատիչի ձայնը.

— Ուշադրություն: Սկսվում է քաղաքի երեկոն: Ուշա-
դրություն: Երեկոն սկսվեց մի տարօրինակ շրմփոցով, որից
հետո ինչ-որ մեկն աղաղակեց.

— Տիկի՛ն, լվացքի ջուրը գլխիս թափեցիք: Անհարմար է:

— Պաղումայե՛շ, — լսվեց տիկնոջ ձայնը: — Մինչև հիմա
գուգարանի ջուրն ու լվացքի ջուրը իրարից չի ջոկում:

Պատասխանը չլսվեց, որովհետև պատեֆոնի միջից տասն-
յակ մանկական ձայներ միաձայն գոռացին, կարծես դասա-
րանում դաս էին սերտում:

— Դավի՛թ, Սատունցի Դավի՛թ, հատը մի մանեթ...

Դրանից հետո լսվեց մի ծչացող կնոջ ձայն, որը գնալով
բարակում էր, որպես լսողությունը ծակող ասեղ: Նրան
պատասխանում էր մի խոպոտ տղամարդու ձայն, որն իր
հերթին հաստանում էր՝ ինչպես լսողի գլխին իջնող դազա-
նակ: Քիչ հետո դազանակն արտասանեց այնպիսի մի հալ-
իությանը, որ կանաչ սենյակից դուրս փախան:

Պատեֆոնային կինը նորից ծչաց.

— Խուլիգա՛ն, սրիկա՛, միլիցիոնե՛ր...

Մարդկային ձայները շատացան. —

— Ի՛նչ է պատահել: — Խմած է: — Ո՞վ ու՛մ տվեց: —

Խմած չի: — Ի՛նչ է պատահել: — Հե՛չ, կնոջն ուրիշի հետ է
բռնել: — Սիրեկանն ա: — Աչքն էլ հանում է: — Սվոյ տղա
յա: — Բլալամ աղջիկ ա: — Ի՛նչ է պատահել:

Միլիցիոներ կանչեք: Միլի-ցիոներ...

Դարձյալ կնոջ ձայնը՝

— Օգնեցե՛ք, չի թողնում անցնել:

— Բա խի չես ծանոթանում, — բառաչեց խոպոտը, և
խոսող նամակի այդ հետաքրքիր մասը կիսատ մնաց: Դրանից
հետո լսվեցին թքելու ձայներ, նորից՝ մեկ ուրբիանոց Սա-
սունցի Դավիթ, նորից՝ հայիությանքներ, այն էլ այնքան բազ-
մահարկ, որ վերելակի կարիք էր զգացվում:

Վերջին հայիությանքից հետո դրեցին խոսող նամակի մյուս
երեսը և դիկտորը՝ այսինքն Բարեղամ Իզնատիչը, հայտարարեց.

— Ուշադրություն: Գիշերվա ժամը 3-ն է:

Պատեֆոնի կրծքից լսվեց առվի խշռոց, հետո խոմփոց:
Ապա՝ այնպիսի մի գոգոց, որ կարծես քաղաքի տակով 10
բալանոց երկրաշարժ էր անցնում:

— Այդ մեր հարևանն է տրամբոն նվագում, — բացատրեց
Բարեղամ Իզնատիչը:

Տնքոցներ: Արթնացող մարդկանց հայիությանքներ: Ապա մի
սրտապատառ ձայն.

— Ը՛նկեր, վերջապես թույլ տվեք քնել: Վերջապես: Քաղ-
խորհրդի պարտադիր որոշումն արգելում է ժամը մեկից հետո...

Տրամբոնը լոց, և լսվեց պատասխանը.

— Մենք անգրագետ չենք, ընկեր: Քաղխորհրդի որոշ-
ման մեջ տրամբոնի մասին կետ չկա: Վերջապես արվեստի
շահերը պահանջում են...

Բայց Բարեղամ Իզնատիչի հյուրերը չլսեցին, թե ինչ են

պահանջում արվեստի շահերը, որովհետև իսկույն որոտացին այնպիսի ծայներ, որ կարծես դժոխքումն էին ծայնագրված:

— Տաշ-տու՛շ, տաշ-տու՛շ,— աղաղակում էին անքուն հրեշները,— Մակար Սամսոնիչի փափախի կենացը: Ադա մի շալախո...

Ձուռնան պզգաց-պզպզաց, դիուը դմբաց-դմդմբաց, և լսվեց ոտքերի այնպիսի մի դղրդոց, որ կարծես դոփում էին քաղաքի բոլոր ձիերն ու նրանց ազգականները:

Ապա ծայները տեղափոխվեցին փողոց, լսվեցին հայիտ-լաբանության վերջին նվաճումները և մի քանի բնորոշ թշուրոցներ...

— Ուշադրությո՛ւն,— լսվեց Բարեղամ Իգնատիչի ծայնը,— սկսվում է Երևանի առավոտը:

Դրանից հետո, առանց դիրիժորի ղեկավարության, թնդաց գերիզոր ծայներից բաղկացած մի երգչախումբ.

— Կա՛թ, ձու՛, կա՛թ, ձու՛:

— Մաժո՛ւն, սպիտակ մաժո՛ւն:

— Պերվի սորտի մաժո՛ւն:

— Մաժո՛ւն: Պանակով կտրեք, չանգալով ուտեք: Մաժո՛ւն:

— Կա՛թ, ձու՛: Ձու՛, կա՛թ...

Ապա որպես սրտակեղեք սղոռ, լսվեց մի կանացի ծայն.

— Պեմ՛զ՛ա՛, պեմ՛զ՛ա՛...

Նորից լսվեցին տնքոցներ, հայիտյանքներ:

— Այսպիսով վերջացրինք,— հայտարարեց Բարեղամ Իգնատիչը:— Բարի լու՛յս:

Պատեֆոնը խոխոաց, կարծես նորից սիրտ էր խառնում, և կանգ առավ:

Լսողներն ազատ շունչ քաշեցին:

Հաջորդ օրը Բարեղամ Իգնատիչը ծրարեց խոսող նամակը և ուղարկեց ըստ պատկանելույն:

Անցան ամիսներ, նա մոռացավ խոսող նամակը և գուցե այդ մասին չհիշեք, եթե մի օր գործուղման բերումով չընկներ այն գլուղը, որտեղ ապրում էր իր սիրելի ընկերը: Գլուղ մտնելիս առաջին իսկ պառավին հարց ու փորձ արեց ընկերոջ մասին: Պառավը զարմացած ոտքից գլուխ չափեց նրան և ասաց.

— Սպասիր, ձենդ ծանոթ ա երևում, համա միտս չի որտեղ եմ լսել: Ագրոնոմի՞ մասին ես հարցնում: Նրա անունը մի տա, բալա ջան: Մե՛ծ փորձանք բերեց մեր գլխին:

— Ի՞նչ է պատահել, մայրիկ,— անհանգստացավ Բարեղամ Իգնատիչը:

— Ի՞նչ պիտի պատահեր: Մի տեսակ նամակ էր ստացել, խոսող նամակ են ասում: Պատեֆոնով էր կարդում: Զավզակ նամակ էր, ձենը մեր գլուխը տարավ: Թաղեմ ուղարկողի գլուխը: Մկները ցանքը կերան, ինքը տանը նստած պատեֆոն էր հա քոքում, թե ինչ ա քաղաքի ձենին կարոտել եմ... Ուղարկողի ջանը քրքրվի:

— Վե՛րջը:

— Վերջը մեր էս գառան պես երեխեքը լսեցին, լսեցին ու հիմա սաղ օրը իրար ուշունց են տալիս: Խոսող նամակի ուշունց: Վերջը գլուղխորհուրդը վառեց էդ նամակը:

— Իսկ ինքն ինչպե՛ս է, մայրի՛կ:

Ինքը ոչի՛նչ, լավ ա: Մենակ վատն են ա, որ գժվեց: Ինչի՞ ես զարմանում: Գժվե՛ց: Էսօր տարան կենտրոնի հիվանդանոցը: Ինչ որ ձենդ ծանոթ ա երևում, լարաբ որտե՞ղ եմ լսել...

Վերադառնալով շրջկենտրոն, Բարեղամ Իգնատիչը շտապեց հիվանդանոց: Նրան չթողին իր ընկերոջ մոտ, որը մե-

կուսացված էր մի առանձին սենյակում: Միայն լուսամուտից տեսավ, թե ինչպես խեղճ մարդը մազերը փիտելով գնում-գալիս էր սենյակում և ընկած մի անգամ բղավում:

— Կա՛թ, ծո՛ւ: Պեմզա՛, պեմզա՛:

1946

6. ԲԱՐԵՂԱՍ ԻԳՆԱՏԻՉԸ ԲՈՒԺՎԵՑ

Հաշվապահ Բարեղամ Իգնատիչը ժամանակավորապես խելագարվեց: Աննորմալությունը բռնում էր մութն ընկնելուց հետո, երբ սկսում էին մալարիայի ու մրսաթության նույնատեղի, և հիվանդի ջերմությունը հասնում էր 41,5 աստիճանի: Հենց այդ ժամանակ, հետևելով կլասիկ խելագարների օրինակին, Բարեղամ Իգնատիչը «Գուրգեն ջան, Բաբկեն ջան»-ի եղանակով անընդհատ կրկնում էր.

- Չթքե՛լ:
- Քիչ թքե՛լ:
- Շատ չթքե՛լ:
- Հատակին չթքե՛լ:
- Խնդրվում է չթքե՛լ:

Վերջացնելուց հետո շունչ էր քաշում, ապա կրկնում նորից ու նորից, թեև լսողները ո՛չ ծափահարում էին, ո՛չ էլ բիսս աղաղակում:

Կինը հուսահատությունից մազերն էր փիտում, իսկ հարևանները, հավաքվելով լուսամուտի տակ, հազար ու մի ենթադրություններ էին անում հիվանդության պատճառների մասին: Բայց նրանց կոահուժները հեռու էին ճշմարտությունից, իսկ ճշմարտությունը հետևյալն էր:

Հիվանդությունից մեկ օր առաջ, հիմնարկի համար նոր ցուցանակ պատվիրելիս, Բարեղամ Իգնատիչը կենդանագիրների արտելում տեսել էր 2000 օրինակ «Չթքել» և սարսափից թուրք կուլ էր տվել՝ լուրաքանչյուրի համար երկու անգամ: Տեսածին գումարել էր նաև այն ցուցանակները, որոնք քաղաքի բոլոր պատերի վրայից, մարդկային մտքին մատչելի բոլոր տարբերակներով կոչ էին անում չթքել կամ արգելում են այդ զբաղմունքը: Ստացվել էր մի ահռելի թիվ: Տեսնելով, որ որոշ հիմնարկներ իրար են անցել և գումարներ չեն խնայում այդ հակաթքային միջոցների վրա մտածել էր, թե երևի քաղաքին մեծ, շատ մեծ աղետ է սպասում մեր թքելուց: Եվ տեղնուտեղը որոշել էր ձեռնպահ մնալ թքելուց, թեև մինչ այդ էլ չէր թքում: Այնուհետև այդ միտքը դուրս չէր գալիս նրա ահաբեկված ուղեղից, և եթե տաքության մեջ լսում էր առվի խշշոցը, նրան թվում էր, թե մի հորդառատ թքագետ է շարժվում շրջանի վրա: Այդտեղից էլ սկսվեց մեզ ծանոթ երգը, և հարևանները դրեցին իրենց դիագնոզը— խելագարություն՝ կապված թքագեղձերի խանգարման հետ:

Նրանք համոզված էին, որ եթե հիվանդը թքի գունն մի անգամ՝ անմիջապես խելքը տեղը կգա և այլևս չի խոսի այդ մասին: Եվ ինչ միջոցների ասեք չդիմեցին, որպեսզի խեղճ մարդը թքի իր կամքից անկախ: Ղոնապանը մարդասիրաբար աղբը հավաքեց նրա լուսամուտի տակ և վրան դրեց մի սատ-

կաժ կատու: Չթե՛ց: Համաոորեն չմաքրեցին փայտաշեն զուգարանը, որի շնորհիվ թքում էր ամբողջ թաղամասը: Դարձյալ չթեց:

Երբ սպառվեցին բոլոր միջոցները, որոշեցին հիվանդին խաբելով ուղարկել որևէ մարդաշատ վայր, որպեսզի հասարակության մեջ մոռանա իր վիշտը և վերսկսի թեյը: Եվ այդ տեսակետից ամենահարմար վայրը համարվեց կոլխոզուկան:

Եվ ահա կիրակի օրը, չմերժելով կնոջը, որը մասնակցում էր դավադրությանը, Բարեղամ Իգնատիչը միամտաբար վերցրեց զամբյուղը և ճանապարհ ընկավ, իսկ քիչ հետո անդեկ նավակի պես սկսեց տարուբերվել շուկայական ալեկոծության մեջ:

Բայց հարևանները իզուր էին կարծում, թե Բարեղամ Իգնատիչը կմտնի շուկայի կաթնամթերքի բաժինը, այսինքն այն մարդաշատ վայրը, ուր ժամանակակից ալքիմիկոսները կրախմալից մաժուն են պատրաստում, իսկ կաթը կթում ջրմուղի ծորակներից, ուր մեղրն այնպիսի համ ունի, որ ճանճերը սատկում են վրան, ուր վաճառվում է այնպիսի յուղ, որն հազիվ տապակում է իրեն խառնած կարտոֆիլի պյուրեն:

Չմտավ նաև մսի պասաժը, որտեղ այդ ժամին առևտուր էր անում միջնորդների ու ժուլիկների երրորդ հերթափոխը, որտեղ հսկիչների փոխարեն վխտում էին մոտակա զուգարանից վերադարձած ցեղական ճանճերը:

Չմտավ, որովհետև չէր ցանկանում թեյ:

Նույն նկատառումներով մոտ չգնաց գինու կրպակներին ու զովացուցիչ ջրերի երկանիվ լաֆետներին և տապակած ձըկներդենի գարշահոտ շարքին: Մտավ միայն մրգեղենի ու բանջարեղենի բաժինները: Ամենուրեք՝ կեղտ, կեղտ և կեղտ: Ամենուրեք ծանոթ դեմքեր, որոնք կրկնակի, եռակի գնով վաճա-

ռում էին կոլտնտեսային բարիքը, որը կոլտնտեսականներից գնել էին վաղ լուսաբացին, երբ շուկայի վարիչը դեռևս քնած էր... Առաջ գնալ չկարողացավ, որովհետև նորից բարձրացավ սովորական պտուտահողմը և բարիքների վրա այնքան փոշի, թղթի կտորտանք և փալասներ լցրեց, որ նրանք 100-ական գրամով ծանրացան կշեռքների վրա...

Որոշեց շտապ հեռանալ, որովհետև թքագեղձերն արդեն քոր էին գալիս:

Շաքարի փոխարեն ձեռքի վրա վաճառողներից գնեց մի տուփ ընկուլզի մուրաբա, որի թիթեղե պատյանը հույս էր ներշնչում, թե ո՛չ մի պտուտահողմ, ո՛չ մի մարդկային ձեռք կամ լեզու պղծած չի լինի ապրանքի կուսությունը: Հետևելով պատյանավոր ապրանքներ գնելու այդ սկզբունքին, գնեց նաև 6 հատ ձու, մի շիշ կոնյակ և վերադարձավ տուն:

Երբ մտավ սենյակ, հարևանուհիներից երկուսը գաղտագողի մոտեցան լուսամուտին և սկսեցին դիտել վարագույրի ձեղքից:

Մինչ կինը կխաշեր ձվերը, Բարեղամ Իգնատիչը բացեց կոնյակի շիշը, լցրեց գավաթը, բայց դեռևս կես կում չխմած, վար դրեց ու ասաց.

— Այս կոնյակը տաքացրու:

Տեսնելով, որ կինը վախից դողում է, ավելացրեց.

— Եթե չես զգվում՝ ինքդ սառը խմիր:

Դատարկելով գավաթը, կինը այլևս չզարմացավ. կոնյակի կնքած շիշը լցված էր թեյաջրով: Եվ տխրելու փոխարեն ուրախացավ, համոզվելով, որ խելագարներին բուժելու լավագույն միակ միջոցը շուկան է:

— Եղածը եղած է, ձվե՛րը բեր:

Մաքրելով առաջին ձուն, երկրորդ ձուն, երրորդ ձուն,—

Բարեղամ Իգնատիչն ամեն անգամ «պահ » էր անում, աստի-
ճանաբար ուժեղացնելով ձայնը, իսկ վեցերորդից հետո դղրդաց
ու ցնցվեց ինչպես հին սիստեմի հրացան:

— Սուսամբա՛ր, ես կգժվեմ: Սոտ արի:

Խեղճ կին: Չեր լսել, որ գիժն էլ կարող է գժվել, ուստի
սարսափահար ծչաց:

— Ի՛նչ պատահեց:

— Ճտերը, ճտերը: Նայիր:

Ջննելով ձվերը և նրանց մեջ սկսնակ հավեր տեսնելով,
կինը նորից ուրախացավ:

— Եղածը եղած է, թելը բեր, մուրաբան բեր,— ասաց
Բարեղամ Իգնատիչը, գլուխը մոտեցրեց տուփին, ապա տուփը
գլխին, հոտոտեց, նորից հոտոտեց և ապա շշնջաց շնչասպառ.

— Աղն ու կանաչին հետը բեր:

Իզուր էր կինը բացատրում, թե մուրաբան աղով ու կանա-
չիով չեն ուտի:

— Դու ինձնից լավ չգիտես, սա ուրիշ ասորտիմենտի ըն-
կույզ է,— ասաց Բարեղամ Իգնատիչը, բարձրացրեց, շուռ
տվեց տուփը, և ափսեն լցվեց խաշած լոբով:— Համեցե՛ք:

Դրանից հետո այլևս նստել չկարողացավ: Մետրանոց քայ-
լերով չափում էր սենյակը, կոկորդով ինչ-որ ձայներ էր հանում,
կարծես անտեսանելի ձվեր էր կուլ տալիս:

— Ի՛նչ ես անում,— նորից անհանգստացավ կինը:

— Ոչի՛նչ, թքում եմ:

— Այդպես էլ թքե՛լ կլինի:

— Ստքումս եմ թքում, Սուսամբա՛ր, տեսականորեն եմ
թքում:

Ֆրանսիացի գրող Լեսաժի վեպերից մեկի գլխավոր հերոսը,
որը մի կաղ սատանա է, չտեսնված սատանայություն է կա-
տարում. նա ծեռքի մի շարժումով վերացնում է Մադրիդի բո-
լոր կտուրները, որպեսզի իր ուղեկիցը վերևից դիտի, թե ինչ
է կատարվում մարդկանց բնակարաններում... Վերոհիշյալ սա-
տանան մեր քաղաքն այցելելու կարիքը չունի: Այստեղ նրա
դերը մեծ վարպետությամբ կատարեցին այս տարվա հորդա-
ռատ անձրևներն ու շրջխորհուրդների վերանորոգման բաժին-
ները, որոնց միացյալ ջանքերով քանդվեցին ու վերացան այն
հողե կտուրները, որոնք հիմարաբար կարծում էին, թե կարող
են թաքցնել իրենց տակ բնակվող մահկանացուներին: Այդ-
պիսի անկայուն և դժվարություններին չդիմացող կտուրներ
շատ կային առանձնապես քաղաքի այն շրջանում, որտեղ բը-
նակվում է նաև հաշվապահ Բարեղամ Իգնատիչը:

Եվ ահա գարնանային մի օր, կնոջ հետ զբոսանքից տուն
վերադառնալով, նա բացեց սենյակի դուռը և տանիքի փոխա-
րեն տեսավ երկնքի մի քառակուսի կտոր: Քիչ մնաց, որ խեղճ
մարդն ուրախությունից խելքը թոցներ:

— Վե՛րջ տառապանքներիս,— ասաց նա հաղթականու-
րեն,— վե՛րջ դիմումներ գրելուն: Հիմա իրենք կվազեն ու կվե-
րանորոգեն, քանի որ տունը պատկանում է շրջխորհրդին:

Նրա լավատեսությունն անհիմն չէր. շրջխորհուրդը հեռու
էր ընդամենը 100 քայլ և այնտեղից կտուրի բացակայությունը
կերևար նույնիսկ առանց հեռադիտակի: Բայց քանի որ շուրջը
անկտուր տներ շատ կային, քանի որ շրջխորհրդի աշխատող-
ներից յուրաքանչյուրն ընդամենը 2 աչք ուներ և չէր կարող

ամեն ինչ տեսնել, Բարեղամ Իգնատիչը որոշեց աչքալուսանքը տեղ հասցնել անձամբ:

Շրջխորհրդի գործկոմի նախագահը մեծ ուշադրությամբ լսեց նրան, որից հետո վճռականորեն հազաց և այցելուին ուղարկեց բնակբաժնի վարիչի մոտ, վերջինս՝ բնակբաժնի ծարտարապետի մոտ, որը կանացի քնքույշ սիրտ ունենալով՝ չմերժեց լսել, ապա դարակներից հանեց Բարեղամ Իգնատիչի բորբոսնաժ դիմումը, կարդաց և տխուր ծայնով ասաց.

— Ուրեմն ջուրը նե՞րս է լցվում:

— Հիմա ներս չի լցվում, որովհետև սենյակս այլևս ներս չունի, ամբողջովին դուրս է...

— Չեմ հասկանում: Իսկ քամին փչո՞ւմ է:

— Ինչքան ուզեք, մանավանդ այս կողմից, — ասաց Բարեղամ Իգնատիչը:

— Ոչի՞նչ, վաղը կգան կսվաղեն:

— Ի՞նչը, երկի՞նքը, — զարմացավ Բարեղամ Իգնատիչը:

— Ի՞նչ երկնքի մասին է խոսքը, քաղաքացի՛: Վաղը ձեր կտուրը կսվաղեն: Արդեն դիմումը մակագրված է:

— Բայց ախր ես կտուր չունեմ, արդեն քանդվել է: Իսկ դիմումը գրել եմ չորս ամիս առաջ, երբ կտուր կար և իսկապես սվաղելու կարիք ուներ: Հիմա ինչ՞ի վրա եք քսելու սվաղը:

— Դա մեր գործը չէ: Մենք մեղավոր չենք, որ մինչև մակագրելը կտուրը քանդվում է: Վաղը սվաղիչներին կուղարկենք: Նախագահի կարգադրությունը օրենք է:

Ա՛յ քեզ պատուհաս: Բարեղամ Իգնատիչը նորից դիմեց դեպի նախագահի կաբինետը, որպեսզի մի կերպ փոխել տա կարգադրությունը, բայց այս անգամ ներս չթողին: Մյուս օրը նախագահը նրան նորից ուղարկեց շուրջբաժինային ճանապարհորդության, որի վերջնագիծը դարձյալ նախագահի կա-

բինետն էր: Դրանից հետո. նա ամեն օր պտտվում էր այդ ծրի կարուսելի վրա և, չկարողանալով հասնել ու բռնել իր հետ պտտվողներից ոչ մեկին, սոսկալի գլխապտույտ էր զգում և վերադառնում տուն: Նա այլևս դիմումներ չէր գրում, որովհետև քնելու տեղ էր փնտրում ոչ թե դիմումների, այլ իր և կնոջ համար:

Բայց ինչի՞ ասես չի ընտելանում մարդ կոչվող արարածը: Եվ Բարեղամ Իգնատիչը մի ամսից հետո ընտելացավ բաց երկնքի տակ ճաշելու, հանվելու և քնելու հաճույքին: Շուտով դրան ավելացան ուրիշ չնախատեսված բավականություններ...

Չմոռանանք ասել, որ այդ կարծախասակ տունը երեք կողմից շրջապատված է հաղթանդամ շենքերով, որոնց պատըզգամբներն ու լուսամուտները օթյակների ու յարուսների նման նայում են Բարեղամ Իգնատիչի սենյակին, որը վերից նմանվում է քառակուսի արենայի: Օրվա բոլոր ժամերին այդ օթյակները լցված են հանդիսականներով, այսինքն հարևաններով, որոնք առանց տոմսի դիտում են Բարեղամ Իգնատիչի ողբերգությունը:

Երբ ճաշի ժամանակ նա դատարկում է գինու գավաթը, ապա շատերը պատշգամբներից ձայն են տալիս.

— Անուշ լինի, Բարեղամ Իգնատիչ:

— Բարեղամ Իգնատիչ, անուշ եղա՞վ:

Ինչպե՞ս կարող է անուշ լինել: Խեղճ մարդը գլխով շնորհակալություն է հայտնում և շարունակում ճաշելը:

Իսկ եթե գինու ազդեցության տակ որևէ երգ է մոմոում, ապա վերջացնելիս լսում է խանդավառ ծափահարություններ և ստիպված է լինում կրկնել երգը: Եթե փորձում է նարդի խաղալ, ապա խաղին հետևում են բոլոր երեք շենքերի բնա-

կիչները և իրենց բացականչություններով խրախուսում տանողին:

- Այդպե՛ս, Բարեղամ Իգնատիչ, դուռ արա:
- Բարեղամ Իգնատիչ, շեշ ու բե՛շ:
- Բարեղամ Իգնատիչը տարավ, ուռա՛:

Պատահում է նաև, որ հարևան բակից թռած ֆուտբոլի գնդակն ընկնում է ծառի ափսեի մեջ, քանի որ Բարեղամ Իգնատիչը վատ դարպասապահ է: Եվ նայելով չաղիկ գնդակին, նա ամեն անգամ ասում է կնոջը.

- Սուսամբա՛ր, սիրոս քյուֆթա է ուզում:

Ահա թե որքան ուրախ է կյանքը, երբ տունդ կտուր չունի: Ինչ հոգ թե երբեմն անծրև է գալիս: Մթնոլորտային տեղումների ժամանակ մարդ ու կին նստում են հովանոցների տակ և նմանվում անծրևից հետո բուսած գունավոր սունկերի: Սենյակից դուրս գալիս հանում են կրկնակոշիկները, որպեսզի միջանցքը չցեխտովի, իսկ ներս մտնելիս նորից են հագնում:

Այս ֆելիետոնը կարդալուց հետո շրջափորդի գործկոմի աշխատողները անպայման կգտնեն «Կաղ սատանան» վեպը և կտեղեկանան, թե նրա հերոսն ինչպես էր փակում բացված տանիքները: Վատ չի լինի, եթե գիրքը մի քանի օրով տրամադրեն նաև Երթաղխորդի գործկոմի բնակչինվարչության ղեկավարներին, քանի որ վերջերս մի ահռելի հեղեղ, խորտակելով նրանց նախագծով կառուցած ամբարտակը, խուժեց քաղաքը և բացեց ոչ միայն կտուրներ, այլև հարյուրավոր հիմքեր:

Եթե գրքում որևէ գործնական միջոցառում չգտնեն, ապա, այնուամենայնիվ, ընթերցանությունը օգուտից բացի վնաս չի բերի: Օգտակար զբաղմունք է:

1946

Ֆելիետոններ



ԳՐԱԿԱՆԱՍԵՐ ԱՐՏԵԼԱՊԵՏՆԵՐԸ*

Մի քանի ամիս առաջ հեղին սենյակս մտավ իմ հին թանոթներից մեկը: Սրբելով ճակատի քրտինքը, նա թանր քարի պես ընկավ աթոռի վրա և ապա, շունչը տեղը բերելով, հագիվ շշնջաց.

Օգնի՛ր...

Ինձ թվաց, թե մարդուն սուսկալի դժբախտություն է պատահել՝ քաղխորհրդից բնակարան է ստացել, որը միաժամանակ խոստացել են ուրիշի. կամ 5 րոպեի չափ մնացել է տրամվայի վագոնում, կամ...

— Օգնի՛ր,— կրկնեց թանոթս,— բավական է տանջվեմ այս անպիտանների ձեռքին: Տե՛ս:— Այս ասելով հարգելի թանոթս բարձրացրեց ոտքերն ու դրեց գրասեղանիս վրա: Ես տեսա մի զույգ սովորական կոշիկներ, որոնցից մեկը:

* Թ. Ն. Սույն ֆելիետոնի առթիվ Երբաղխորհրդի գործկոմը որոշում ընդունեց կենցաղսպասարկման ձեռնարկությունների անվանակոչման հարցում պետական կարգ ու կանոն սահմանելու մասին:

կրունկը չկար, իսկ մյուսի ներքանը պոկվել, բացվել էր կոկորդիլոսի երախի նման:

— Չեմ կարողանում նորոգել, հասկանում եմ: Թանոթներ, կապեր չունեմ արտելներում... Այսուհետև այս կոշիկների բախտը կապված է գեղարվեստական գրականության, չքնաղագեղ մուսաների և նրանց սիրահարների հետ: Կարծում եմ դու էլ ես նրանց հետ սիրաբանում, բանաստեղծություններ ես գրում: Դե՛, ուրեմն օգնիր...

Պատասխանելու փոխարեն ես բռնեցի Թանոթիս զարկերակը. զարկերը շատ կանոնավոր էին, ջերմաստիճանն էլ կարծես նորմալից բարձր չէր:

— Դու մի կարծիր, թե հիվանդ եմ ու զառանցում եմ: Միայն բանաստեղծներն ու գրողները կարող են ինձ օգնել: Հասկացիր: Այստեղ կոշիկ նորոգելու մի արհեստանոց կա, որտեղ գրողներին շատ են սիրում, ուղղակի պաշտում են: Այնքան են սիրում, որ արհեստանոցի վրա գրողի անուն են գրել... Խաչատուր Աբովյանի անվան կոշիկի վերանորոգման արհեստանոց... Չե՛ս լսել:

Իսկապես որ չէի լսել: Ամեն ինչ լսել էի, բացի դրանից: Ի՞նչ կապ «Վերք Հայաստանիի» անմահ հեղինակի և ինչ-որ կոշիկի նորոգման արհեստանոցի միջև: Մեծ լուսավորչի և մտածողի անունով մենք կոչում ենք մեր դպրոցները, ակումբները, նրա անունն է կրում մայրաքաղաքի լավագույն փողոցներից մեկը: Պա հարգանքի նշան է, հիշատակի հավերժացումով: Բայց այդ ո՛վ է, որ կարողացել է այդ նվիրական անունը կապել պոկված կրունկներ, քրքրված ներբաններ նորոգող արհեստանոցի հետ...

— Դե՛, ի՞նչ ես անում,— ընդհատեց Թանոթս: Ինձ մի

երկտող է պետք որևէ գրողից, որպեսզի կոշիկներս ընդունեն արտելում:

Ինձ թվաց, թե Թանոթս կատակ է անում: Որոշեցի պատասխանել կատակով: Վերցրի մի թղթի կտոր և գրեցի.

«Խաչատուր Աբովյանի անվան կոշիկի վերանորոգման արհեստանոցի վարիչին: Գրաբերս գրականություն սիրող մարդ է. հիսուն անգամ կարդացել է Աբովյանի վեպը: Մի քանի օր հետո այդ ընկերը ինձ հետ պետք է բարձրանա Պառնասի գագաթը, որտեղ հանդիպում ենք ունենալու Ջևաի, Ապոլոնի և մի շարք մուսաների հետ: Նորոգեցեք ընկերոջս կոշիկները, որպեսզի անհարմար չզգա այդ պատվարժան անձնավորությունների ներկայությամբ»:

Գրեցի, տվեցի Թանոթիս, որպեսզի կարդա, Ժիժաղի և ինձնից ձեռք քաշի: Բայց պատահեց անսպասելին: Առանց կարդալու, թուղթը շտապ խոթեց գրպանը և գնդակի նման դուրս նետվեց սենյակից:

Երկու օր հետո նորից եկավ: Այս անգամ դեմքը փայլում էր բավականությունից: Կոշիկները նորոգված էին հիսսսուլի: Թանոթս նորից նստեց աթոռին, ծոցից հանեց իմ տված թուղթը և մեկնեց ինձ: Թղթի ետևին ես կարդացի հետևյալը.

«Ընկ. Խաչատուր Աբովյանի խաթեր ձեր ընկերոջ կոշիկները փինա արեցինք: Էդ ինչ լավ տեղ եք գնում: Երևի Էդ Պառնասը լավ խորոված ուտելու, քեֆ անելու տեղ ա: Ափսոս, շատ կուզեի ես էլ գամ: Իմ և արհեստանոցի կուլեկտիվի կողմից շատ բարով արեք ընկեր Ջևաին և մնացած ընկերներին»:

Սիւս թե ինչքան լուրջ հետևանք ունեցավ կատակը: Դրանից հետո Թանոթս տնետուն էր վազվզում և բոլոր Թանոթներին պատմում, թե ինչպիսի մեծ հեղինակություն ունեն գրողները

արտելներում: Բայց նրա բերանբացությունը շատ գլխացավանք պատճառեց ինձ:

Շուտով սենյակումս հայտնվեց մի այլ ծանոթ, որը խնդրում էր միջնորդել, որպեսզի ինքը մի քանի կիլոգրամ մեխ ձեռք բերի... գրող Նիկոլայ Օստրովսկու անվան պայտի և մեխի արտելից: Մի ուրիշը ցանկանում էր սպիտակեղենը լվանալու տալ բանաստեղծ Վլադիմիր Մայակովսկու անվան լվացքատանը: Երրորդն ուզում էր գլխարկ պատվիրել գլխարկների Մուրացանի անվան կամ, հակառակ դեպքում, Նար-Ռոսի անվան արհեստանոցում...:

Իսկ ես ամեն անգամ մտածում էի միայն մի բանի մասին. այս ինչ գրողասիրությամբ են տառապում մեր արտելապետներն ու լվացքատների վարիչները: Դեռ լավ է, որ այդ մարդիկ գրաբար չգիտեն: Այլապես քաղաքում շուտով կհայտնվեն Մովսես Խորենացու անվան լիմոնադի կրպակներ, Գրիգոր Նարեկացու անվան խորտկարաններ, Ներսես Շնորհալու անվան կրպակներ:

Ահ ու դողով սպասում եմ նաև դրան: Սպասում եմ ու մտածում, ի՞նչ լավ կլինի, եթե մեր գրականասեր արտելապետները մի փոքր սանձեն իրենց մտքի հանդուգն թռիչքները: Թող սանձեն թեկուզ Պետրոս Դուրյանի անվան ձիասարքերի արհեստանոցում պատրաստած սանձերով:

1945

ՉԿԱ ԲԱՐԻՔ ԱՌԱՆՑ ՉԱՐԻՔԻ

Հայճանկամրջաբետոնշին գլխավարչության աշխատակից ընկ. Ճաղատյանը մի օրում երկու հաջողություն ունեցավ. արտելից ստացավ իր նոր գլխարկը, որը պատվիրել էր 6 ամիս 23 օր առաջ և հետո կարողացավ պետօպերայի դրամարկղից «Արշակ երկրորդի» ներկայացման տոմս գնել:

Երեկոյան արտակարգ տրամադրությամբ մտնելով օպերայի շենքը, նա իր հին վերարկուն և նոր գլխարկը հանձնեց հանդերձապահուհուն, փոխարենը ստացավ մի թիթեղի կտոր և մտավ դահլիճ:

Երբ ներկայացումը վերջացավ, հիացած ոտքի կանգնեց և, որպես կուլտուրական մարդ, սկսեց ծափահարել, բայց շտապող բազմությունը Ճաղատյանին առավ իր ալիքների մեջ և տաշեղի նման շարտեց դեպի ֆոյե: Այստեղից էլ անդիմադրելի հորձանքը նրան տարավ, տարա՛վ և դեմ արավ հանդերձարանի վանդակապատին:

Մի ժամից հետո հանդերձապահուհին նրանից վերցրեց թիթեղի կտորը և փոխարենը վերադարձրեց վերարկուն:

— Իսկ գլխա՛րկս, — ասաց Ճաղատյանը:

— Գլխարկդ կորել է, ընկե՛ր:

— Ինչպե՛ս թե կորել է:

— Կորել է, էլի՛, հայերեն չե՛ս հասկանում, — նեղացավ հանդերձապահուհին:

— Ինչպես թե: Ասե՛ղ էր, որ կորչեր:

— Մի քիչ քաղաքավարի խոսիր, ընկեր: Ուրիշներինը ասե՛ղ է, որ ամեն օր կորչում է:

Ճիշտ է ասված, թե ընկերովի մահը հարսանիք է: Բայց նա չկարողացավ մխիթարվել ուրիշների կորցրածով:

— Գլխա՛րկս,— մրմնջաց նորից, երբ արդեն շուրջը ոչ ոք չէր մնացել:

— Ընկե՛ր, ինչ աներես մարդ ես երևում. վա՛յ քո կնկան: Դեռ այդ բնավորությամբ էլ օպերա ես գալիս: Կորածը մի գլխարկ է, հո վերարկու չէ:

— Ըստ երևույթին, ձեզ մոտ մկներ կան,— ասաց Ճաղատյանը.— երկուտանի մկներ...

— Մկներ: Կային, բայց անցյալ տարի ցրտից սատկեցին,— պատասխանեց հանդերձապահուհին, չհասկանալով նրան:

— Այդ դեպքում ո՞վ է անհետացրել գլխարկս:

— Ընկեր, ինչպես երևում է դու խմած ես,— գոռաց հանդերձապահուհին,— հեռացիր քանի կարգի չես հրավիրել:

Հույսը կտրած հեռացավ և հուղարկավորի քայլերով դուրս եկավ թատրոնից: Սոսկալի անձրև էր գալիս, թեև անցյալ գիշեր Երևանի ռադիոկոմիտեն եղանակի տեսության մեջ հաղորդել էր, թե օրը պիտի պարզ լինի, առանց ամպամածության: Հանեց թաշկինակը, չորս ծայրերը հանգույց արավ և դրեց գլխին: Դեռ հինգ քայլ չարած, անձրևաջուրը թաշկինակի ծոպերից սկսեց հոսել դեպի վիզը, այնտեղից էլ՝ դեպի մեջքը և դեպի այլ բնագավառներ: Ծարահատյալ կանգնեց, մտածեց և ապա նորից ետ դարձավ: Ետ դարձավ և քայլերն ուղղեց ադմինիստրատորի սենյակը:

— Գիտե՞ք ինչ, ընկեր ադմինիստրատո՛ր, այսօր... Ասաց նա և ծայրից ծայր պատմեց եղելությունը:

— Ցավակցությունս եմ հայտնում,— ասաց ադմինիստրատորը, ոտքի կանգնելով և սեղմելով նրա ձեռքը:

Ճաղատյանը խորապես հուզվեց այդ սրտառուչ վերա-

բերմունքից: Բայց, դժբախտաբար, ցավակցությունն այնպիսի բան չէր, որ կարողանար դրանով ծածկել իր թրջված գլուխը:

— Մի խնդիր ունեմ,— կմկմաց նա,— եթե կարելի է մի բան տվեք՝ դնեմ գլխիս: Վաղն անպայման կվերադարձնեմ:

— Իսկ ի՞նչ տամ, Արշակ երկրորդի թա՛գը,— ասաց ադմինիստրատորը,— ոչ, այդ չեմ կարող: Նախ՝ թագը շատ մեծ է: Դերակատարներից մեկը նույնիսկ լրագիր է խոթում մեջը և նոր դնում գլխին: Բացի դրանից, վաղն առավոտյան փորձ ունենք: Եթե կուզեք՝ ես ձեզ կտամ «Ֆաուստի» գլխարկներից: Մի բան, որ վաղուց այդ օպերան չենք խաղում:

Քիչ հետո Ճաղատյանը քայլում էր Երևանի փողոցներով՝ Սեֆիստոֆելի փետրավոր գլխարկը գլխին:

Տպավորությունը ցնցող էր: Աբովյան փողոցում նրան հետևում էր մի հոծ բազմություն՝ մի քանի տասնյակ ծխախոտ վաճառող երեխաներ:

Երբ հասավ Ցախի մեյդան կոչվող փողոցը, բազմությունը ցրվեց, որովհետև այստեղ նույնիսկ չոր եղանակին այնպիսի ցեխ է լինում, որ շրջխտրիդի աշխատակիցներն էլ գերադասում են ուրիշ փողոցով անցնել: Մի հարյուր քայլ անելուց հետո, նա նկատեց, որ ինչ-որ տարօրինակ արարած ցեխի մեջ ցատկոտում է ու ոստոստում: Էլեկտրական լամպի լույսի տակ նկատեց, որ այդ արարածը պոչ էլ ունի, մեկն այն պոչերից, որ կրում են գրքերում նկարված և բեմերում երևացող սատանաները:

Նա սնահավատ մարդ չէր, բայց պետք է խոստովանել, վախի նման մի բան զգաց: Ըստ երևույթին, սատանան էլ նկատել էր նրա գլխարկը, որովհետև քայլերն արագացրեց և փորձեց փախչել: Բայց չկարողացավ: Հասավ մի լճի, որ անհնար էր ոտքով անցնել, և նրանք հանդիպեցին:

— Ո՞վ ես,— հարցրեց Ճաղատյանը,— չհամարձակվելով ուղիղ նայել նրա դեմքին:

— Հացի խանութի գործակատար,— պատասխանեց սատանան մարդկային ձայնով:

— Իսկ պոչդ ինչացո՞ւ է:

— Ախպեր ջան, թե որ դու էլ գործ ունենաս Պետոպերայի հանդերձապահուհու հետ՝ պոչ չէ, կոտոշներ էլ կունենաս: Վերարկուս կորցրին, փոխարենը տվին «Վալպուրգյան գիշերի» սատանաներից մեկի հագուստը:

— Ուրեմն դու՞ էլ,— բացականչեց Ճաղատյանը:

Եվ որպես բախտակիցներ, Մեֆիստոֆելն ու այդ շարքային սատանան ցեխի մեջ կանգնած գրկախառնվեցին և եղբայրական համբույրներ փոխանակեցին...

Այս դեպքն ինձ պատմողը վերջում ավելացրեց, թե անպայման Ճաղատյանը հնարել է կամ երազում է տեսել այս պատմությունը, որի մեջ ճիշտ է միայն այն, որ շատերի հետ միասին օպերայի հանդերձարանից այլևս ետ չի ստացել գլխարկը: Բայց նա այդ ասաց տարակուսանքով, քանի որ պատմությունը շատ է հավանական և սպասելի...

Բայց դա չէ կարևորը: Կարևորն այն է, որ այդ դեպքից հետո, երբ Ճաղատյանի մոտ օպերայի անուն են տալիս, հանկարծ սփթնում է, ձեռքը տանում է դեպի գլուխը և գլխարկն ամուր բռնում:

Կոնսերվի գործարանը ուներ հիանալի ակումբ: Ակումբն զբաղեցնում էր 10 սենյակ և դեռ նեղվածք էր զգում: Մի տեղ թնդում էր երգի և պարի անսամբլի զվարթ աղմուկը, մի այլ տեղ երիտասարդ բանվորներն ու բանվորուհիները եվրոպական պարեր էին սովորում, երրորդ սենյակում բուլն էր հյուսել շախմատիստների խմբակը, չորրորդում գործում էր կինո-ռադիո սիրողների խմբակը: Կար հարուստ և լավ կահավորված գրադարան: Գիշերները դահլիճում կայանում էին ներկայացումներ և կինո-սեանսներ: Մի խոսքով, իսկական ակումբ էր դա, որից գոհ էր գործարանի մեծ կոլեկտիվը: Իր վերաբերմունքը չէր արտահայտում միայն գործարանի դիրեկցիան, բայց դա չէր հուսահատեցնում ակումբի վարիչին: Եվ նա, սավառնելով ոգևորության թևերի վրա, ծրագրում էր իր հետագա անելիքները, մտածում էր կազմակերպել նոր խմբակներ և ուրիշ շատ գեղեցիկ բաներ...

Մի օր էլ ակումբի վարիչը մտավ գործարանի դիրեկտորի առանձնասենյակը, որպեսզի նրան ևս բավականություն պատճառի իր նոր մտահղացումներով: Դիրեկտորը լսեց նրան, քորեց գլուխը, հենվեց բազկաթոռի մեջքին և... կատարվեց անսպասելին: Ակումբի վարիչին թվաց, թե իր ականջի տապ ֆուգասային ումբ պայթեց:

— Վաղն ևեթ դատարկե՛լ ակումբը,— ասաց դիրեկտորը ճիշտ այն ձայնով, որով շջեդրինյան քաղաքապետի գլխում դրված երգեհոնը ծղրտում էր, — «չեմ հանդուրժի»:

Հաջորդ օրը — այդ օրն ամենասև տառերով պիտի նշվի ակումբի տարեգրության մեջ — գործարանի բանվորներն ու բանվորուհիները զարմանքով տեսան, թե ինչպես իրենց

սիրած ակումբի սենյակներից դուրս են նետվում աթոռները, քլամանչաները, պարագգեստները, շախմատի տախտակները՝ փայտագլուխ թագավորների, թագուհիների, փղերի ու գինվորների հետ միասին... Դրանից հետո սենյակներում փառավորապես տեղավորվեց դիրեկցիայի բազմամարդ ապարատը:

Ամենից վերջը ժամանեց ինքը՝ դիրեկտորը, որը տեսնելով իր հաշվապահների օկուպացիոն բանակի այդ հաղթանակը, գոհունակությամբ ժպտաց ու հաղթողի քայլվածքով դիմեց դեպի այն ընդարձակ սենյակը, որի դռանն արդեն փակցված էր «Գործարանի դիրեկտոր» ոսկետառ ցուցանակը: Այդ օրվանից սկսած ակումբի շենքում երաժշտական գործիքների աղմուկի, երգի ու ծիծաղի փոխարեն լսվում է հաշվիչների չխչխկոցը, գրիչների ծոճոցը և դիրեկտորի հեղինակավոր հազը...

Բայց գործը դրանով չվերջացավ: Գործարանի այժմյան դիրեկտորը որոշեց բարձր պահել իր նախորդների հաղթական դրոշը և չզիջել գրավված դիրքերը: Բայց այստեղ հանուն արդարության ասենք, որ նա բոլորովին զուրկ չէ խղճմտանքից, ինչպես կարծում են ոմանք. նա, այնուամենայնիվ, երեք սենյակը թողեց ակումբի տրամադրության տակ: Սակայն նկատելով, որ շատ մարդիկ են հավաքվում այդ սենյակներում և հիշողություններ են պատմում ակումբի երանելի օրերի մասին, խանգարելով դիրեկցիայի բեղմնավոր աշխատանքը, դիրեկտորը կարգադրեց փողոցի կողմից փակել ակումբի ազատ մուտքը, այցելուներին ներս թողնել գործարանի մուտքից, որտեղ կարելի է մտնել միայն անցագրերով, որոնք տրվում են դիրեկտորի հայեցողությամբ: Այսպիսով, նա փաստորեն ավարտեց ակումբի գոյության պատմությունը, ավարտեց

դիրեկտորական կարմիր թանաքով դրված մի զարհուրելի վերջակետով:

Գործարանի հասարակական կազմակերպությունների համբերության բաժակը լցվեց: Նրանք որոշեցին գործել միացյալ ուժերով, քանի որ՝ գլուղը կանգնի գերան կկոտրի: Բայց դիրեկտորի համառությունն այնպիսի գերան չէր, որ հնարավոր լիներ կոտրել: Նրա վրա այդ կազմակերպությունների ընդունած որոշումները, հիշեցումներն ու ուլտիմատումները նույն ազդեցությունն ունեցան, ինչ ազդեցություն կարող է ունենալ անձրևը քարի վրա... Գործկոմը դիմեց արհմիության Կենտկոմին, խնդրելով միջամտել այդ գործին: Միության Կենտկոմը երկու անգամ հեռագրով պահանջեց բավարարել գործարանի աշխատավորության պահանջը և շենքը տրամադրել ակումբին: Դիրեկտորը մնաց անդրդվելի: Նոր որոշումներ ընդունվեցին, որոնցից գոյացավ մի հսկա գործ, որն աճում էր նույնքան արագ, որքան և դիրեկտորի համառությունը: Նորից դիմեցին Միության Կենտկոմին, նորից... Սակայն չշարունակեց այս տխուր պատմությունը: Ո՛չ, այլևս շարունակելը միտք չունի: Արդեն բոլորի համար պարզ է, որ այդ գործարանի դիրեկտորի խիղճը քնել է Սարա-Մելիքի քնով և չի արթնանալու առանց շիկացած խոփի օգնության:

1945

ՉՄՈՌԱՆԱՆՔ ՆԱԵՎ ԿՈՃԱԿՆԵՐԸ

Կար մի դերձակ, որը հիանալի կոստյումներ էր կարում: Բայց այդ դերձակը մի զարմանալի տարօրինակություն ուներ. երբ հերթը հասնում էր կոճակները կարելուն՝ գլուխը կորցնում էր, դառնում բոլորովին անճարակ: Իրարից տարբեր հեռավորության վրա շարում էր տարբեր մեծության, տարբեր գույնի կոճակներ, որոնք հարբած մարդկանց նման երբեք չէին կարողանում ուղիղ շարք կազմել: Երբեմն էլ մոռանում էր մի քանի կոճակ կամ ոչ մի կոճակ չէր կարում: Իսկ կոճակների պատճառով, որոնց կարելն առանձին վարպետություն և ջանք չի պահանջում, փչացնում էր իր անքուն գիշերների վաստակը՝ թանկարժեք կոստյումը: Վաղուց արդեն չկա այդ դերձակը, բայց հանգուցյալի տարօրինակությունը կարժես ժառանգաբար անցել է Երթաղջինտրեստին, շրջխորհուրդների վերանորոգման բաժիններին և բոլոր այն կազմակերպություններին, որոնք կոստյումներ կարելու փոխարեն, բնակելի շենքեր են կառուցում ու նորոգում:

Վերջին տարիներս Երևանի պողոտաները և փողոցները զարդարվել են բազմաթիվ նորակառույց շենքերով: Տպավորությունը հիանալի է: Ամեն ինչ տեղին է, կարծես ոչինչ չի մոռացված՝ ճաշակավոր ֆասադներ, ճարտարապետական համարձակ հղացումներ, վարդագույն տուֆ, այնպիսի ամուր պատեր, որոնք կդիմանան ամենախիստ քննադատությանը: Բայց... բայց փորձեցեք մոտիկից զննել այդ շենքերից մի քանիսը, և ձեր առջև կցցվեն նույն կոճակային տարօրինակությունները:

Ահա մի նոր և գեղեցիկ շենք: Համեցե՛ք, մտնենք ներս: Ամենից առաջ մի զարմանք, որ շքամուտքը դռներ չունի:

Իսկ եթե դռներ էլ կան, ապա մի զարմանաք, որ ներկված չեն, չունեն բռնակներ ու ապակիներ կամ երկուսի փոխարեն միայն մի դուռ է տարուբերվում ու տանջվում քամու հարվածներից: Բարձրանա՛նք վեր: Որքան կարող եք լայն քայլեր արեք և ցատկեցեք երեքական աստիճան միանգամից, քանի որ, որպես օրենք, յուրաքանչյուր երկրորդ աստիճանը կամ ջարդված է, կամ չկա բոլորովին: Չեղքներդ չքսեք սանդուղքների բազրիքներին (եթե կան), որովհետև ունդված չեն, ունեն սվինանման փշեր: Այժմ թե՛ծենք մեկն ու մեկի բնակարանի դուռը ու մտնենք ներս: Ուներդ մի սրբեք, որովհետև հատակը ներկված չէ: Չհանեք ձեր կրկնակոշիկները, եթե չեք ցանկանում, որ դրանք անհետանան հատակի ահավոր ձեղքերից մեկն ու մեկի մեջ: Սենյակների պատուհանները ևս չունեն բռնակներ. երկտակ փեղկերի վրա ապակի չկա: Ներկված չեն ջեռուցման սիստեմի վառարանները, որոնք դեռևս չգիտեն, թե ի՞նչ է ջերմությունը: Բակի վրա բացվող պատըշյամբը ծաղեր չունի, բաց է երեք կողմից. դա առանձնապես լավ հիշեցեք, որպեսզի այդ բնակարանը գիշերով հյուր գալիս չփորձեք հենվել պատշգամբի բազրիքին: Այլապես 4-րդ կամ 5-րդ հարկից կնետվեք հավիտենականության գիրկը, որտեղից դեռ ոչ ոք չի վերադարձել...

Տեսեք այս ամենը և մի մոռացեք, որ այդ շենքը կառուցելու համար ծախսված է մեկ կամ մի քանի միլիոն ռուբլի: Պետությունը ոչինչ չի խնայել, հնարավորություն է տվել կառուցել մայրաքաղաքին արժանի բնակելի շենք, բայց ահա գտնվել են մի քանի կոճկատյաց դերձակներ, որոնք մանրուքների պատճառով փչացրել են թե՛ շենքի տպավորությունը, թե՛ բնակիչների տրամադրությունը:

Բայց դա երջանիկ շենքերից մեկն է: Ավավերդյան փողոցի

վրա կա մի նորակառույց երկհարկանի շենք, որի բնակիչները իրենց բնակարաններն են բարձրանում ինչ-որ նեղլիկ տախտակների վրայով, որոնք սարսափ են պատճառում ամենասրտոտ մարդուն: Այստեղ հարյուրավոր տղամարդիկ, կանայք և երեխաներ ամեն օր լարախաղացության վարժություններ պիտի անեն միայն այն բանի համար, որ չապրում են նոր շենքում: Հազվագյուտ բավականություն: Եթե մի օր ջարդվեն այդ տախտակներն էլ, ապա մարդիկ պետք է իրենց բնակարանները բարձրանան օդապարիկով և ցած իջնեն պարաշյուտի միջոցով... Այլ միջոց չկա:

Կան «մանրուքներ» էլ, որոնք ջղայնացնում են ոչ միայն առանձին շենքերի բնակիչներին, այլ ամբողջ քաղաքին: Այդ մանրուքներն իրենց զգացնել են տալիս անձրևային օրերին կամ ձմռանը: Հենց որ սկսվում է անձրևը՝ ջուրը տանիքներից փողոց է թափվում շենքերի պատերի վրայով և ամենայն անաչառությամբ թրջում բոլոր անցորդներին: Ի՞նչն է պատճառը: Մանրուքը: Այն, որ մի քանի միլիոն ռուբլի ծախսելուց և շենքը ավարտելուց հետո չեն ցանկացել մի քանի հազար ռուբլի ևս ծախսել ու ջրհորդաններ դնել: Եվ ահա ջրից խարխլվում, քայքայվում են շենքի պատերը: Մի քանի հազարը քանդում է միլիոնների շինածը: Այդ նույն մանրուքից ձմեռը գոյանում են սառցե լուվաներ, որոնք դանդաղ գործողության ռումբերի նման կախվում են տանիքների եզրերից և սպառնում մայթով անցնող մահկանացուներին:

Հիշենք մի ոչ մանր մանրուք ևս: Ալավերդյան փողոցի վրա, այն շենքի առջև, որի տակ գտնվում է «Կաֆետերին», կան հսկայական, անդնդախոր փոսեր: Այդ փոսերը ծածկելու մասին ոչ ոք չի մտածում, և ամեն գիշեր նրանք քառանկյունի երախները բացած սպասում են իրենց անհայտ գոհերին: Թեև ժո-

ղովրդական առածն ասում է, թե փոս փորողը մեջը կընկնի, բայց դժբախտաբար, Կիրովյան շրջխորհրդի աշխատողներից ոչ մեկը չի ընկել դրանց մեջ: Այլապես կմտածեր և մեր մասին:

Ահա այս մանրուքներն են, որ մեզ ստիպեցին հիշել այն տարօրինակ դերձակին: Բավական չէ միայն լավ ու գեղեցիկ շենքեր կառուցել: Անհրաժեշտ է նաև, որ ամեն ինչ տեղին լինի: Թող այդ մանրուքները անշնորհք կարված կամ մոռացված կոծակների նման չփչացնեն այն հրապուրիչ հանդերձանքը, որով զուգվում են մայրաքաղաքի պողոտաներն ու փողոցները:

1945

ՉՄԵՆԱՅԻՆ ԳԻՇԵՐՎԱ ԵՐԱԶ

Արվեստի գործերի վարչության թատերական բաժնի վարիչը, մի քանի նոր պիեսներ կարդալուց հետո, գլուխը դրեց վերջին պիեսի գործող անձանց վրա և քնեց: Քնեց և տեսավ մի այնպիսի երազ, որը չի կարող մեկնել ոչ մի երազահան:

Իր գրասենյակը մեծացել, մեծացել և դարձել էր մարտահաշտ: Մի կողմում, պիեսներով լցված պահարանների տեսվում, դարան էր մտել իր բանակը, որը կազմված էր թատ-

րոնների ղեկավարներից, դրամատուրգիայով զբաղվող դերասաններից և դերասանությամբ զբաղվող դրամատուրգներից: Մյուս կողմում դիրք էր բռնել հակառակորդի բանակը: Այստեղ էին մեր բոլոր նշանավոր հին ու նոր գրողները, բացի Դերենիկ Դեմիրճյանից, որը հիվանդության պատճառով ազատվել էր զորակոչից: Հրամանատարությունն իր ձեռքն էր վերցրել Րաֆֆին, որը վեպերից շինված ԴԶՕՏ-ում նստած, իր սովորության համաձայն, ծխախոտ-ծխախոտի հետևից էր վառում: Որպես դաշնակից մասնակցում էր կոմպոզիտոր Կոմիտասը. նա ղեկավարում էր ավիացիան, որը բաղկացած էր հայ երաժրշտության մեջ հայտնի «Կոունկից», «Կաքավիկից» և «Ծի-Ծեռնակից»:

Պատերազմական գործողություններն սկսելուց առաջ Րաֆֆին բարձրացավ ձեռագրերի բլուրի վրա և իր բանակին դիմեց հետևյալ ձևով.

— Գրչի եղբայրներ՝. հասել է հատուցման ժամը: Այսօր Պատանի հանդիսատեսի թատրոնում խաղում են «Սամվել» պիեսը, որը գրել են ըստ իմ վեպի: Կրեժ լուծենք, եղբայրներ, դրա համար: Բավ է ինչքան մեր վեպերն ու պատմվածքները պիեսի վերածեցին, աֆիշների վրա գրելով «ըստ այսինչ», «ըստ այնինչ» հեղինակի: Կորչի այդ «ըստը», կորչի «ըստիզմը»: Հանուն գրականության շահերի, կրա՛կ:

Եվ պատերազմն սկսվեց: Գրչակոթերը, որոնք պարզված էին հրանոթների փողերի պես, գրչածայրերի կարկուտ էին տեղում հակառակորդի վրա, թղթե ականանետներն արձակում էին Րաֆֆու կիսավառ ծխախոտները, որոնք ընկնում էին նոր ընդունված պիեսների վրա. դրանցից շատերը սոսկալի թռչում էին և գոլորշու ամպեր արձակում:

Հակառակորդի պաշտպանությունը քայքայվում էր: Դրու-

թյունն ավելի անհուսալի դարձավ, երբ սկսեց գործել Կոմիտասի ավիացիան:

Այդ ժամանակ թատերական բաժնի վարիչը դրամատուրգիայով զբաղվող մի դերասանի ուղարկեց հակառակորդի բանակը՝ հայտնելու, որ ինքն իրեն համարում է պարտված և խնդրում է մարդ ուղարկել հաշտության համար:

— Ի՞նչ եք պահանջում մեզնից,— ասաց բաժնի վարիչը,— երբ ներկայացան հակառակորդի պարլամենտուորները:

— Պահանջում ենք անհաջող «ըստերի» անվերապահ կապիտուլացիան,— պատասխանեց Րաֆֆին:

— Ինչո՞ւ, ի՞նչ վնաս է տալիս ձեզ «ըստ»-ը: Պուք տարիներով չարչարվել եք մի վեպ կամ պատմվածք գրելու համար, իսկ մեր ընկերները մի քանի ժամում այդ գործը պիես են դարձնում:

— Եվ դուք ուրախանում եք, փոխանակ նրանց ձեռքը բռնելու: Կերջապես ինչի՞ է նման ձեր բեմ հանած Սամվելը: Առանց անձնագրի ոչ ոք չի ծանաչի:

— Ծի՛շտ է, բոլորովին նման չէ իրեն: Ծատ է մաշվել խեղճ Սամվելը, երեսին գույն չի մնացել,— ասաց Ծիրվանգաղեն,— գոնե ձեր հաշվին մի ամսով սանատորիա ուղարկեք երիտասարդին:

— Հեռի լսողաց իմ Սոսի ու Վարդիթերի վրա էլ հալ չի մնացել: Աշտարակի թատրոնում հազիվ ծանաչեցի: Իմ մասին էլ չեմ խոսում,— ասաց Պոռչյանը:

— Ինը հոգի մեղրածանձի նման թափվել են իմ Սամվելի վրա, կարծես թե վեպիս էջերի վրա շաքար է քսած,— շարունակեց Րաֆֆին: Այդ մարդկանց հասկացրեք, որ այդ վեպի համար ես ընդամենը մի նախադասություն եմ փոխ առել հանգուցյալ Փավստոսից, մնացածն ինքս եմ ստեղծել: Ինչո՞ւ

են տեր կանգնել այդ բոլորին, ո՞ր ժողդատարանի վճռով: Ես հետ եմ պահանջում իմ շարժական ու անշարժ ունեցվածքը, որ նրանք վեր են ածել հոնորարի: Պահանջում եմ նաև, որ մեր գործերը պիես դարձնեն այնպիսի մարդիկ, որպիսիներից գոհ են մնացել թե՛ Մեծապատիվ Մուրացկանները, թե՛ տիկ. Աննա Կարենինան...

— Ես էլ եմ պահանջում, որ այդ մարդիկ կարդան հայոց պատմությունը, ընտրեն ցանկացած նյութը, մեզ նման քրտինք թափեն և նոր ու ինքնուրույն բաներ գրեն. այդ դրամատուրգներին մենք գրկաբաց կընդունենք մեր շարքերը, կտանք կլասիկի անդամատոմս,— ասաց Մուրացանը, որը ներկայացել էր Ռուզանի հետ թևանցուկ:

— Իսկ ես պահանջում եմ,— ասաց Ծիրվանգադեն,— որ իմ «Քառսը» պիես չդարձնեն, այլապես սոսկալի քառս չստեղծեն:

Առաջ եկավ նաև Կոմիտասը, որ մինչ այդ լուռ էր և ասաց.

— Իսկ ես որպես դաշնակից պահանջում եմ վերացնել գծիկները:

— Ի՞նչ գծիկներ,— զարմացավ բաժնի վարիչը:

— Այն գծիկները, որոնցով ինչ-որ մարդիկ փորձում են միանալ մեզ:

— Բայց չե՞ որ նրանք մշակում են ձեր գործերը, անմահացնում են:

— Անմահացնելը թող իրենց մնա, միայն թե չմահացնեն: Ահա ձեզ կենդանի ապացույց,— ասաց Կոմիտասը, ցույց տալով իր ուսին թռած ««Կոունկ»-ը:— Տեսե՞ք թե այս անմեղ թըռչունին ինչպես են փետրահան արել: Խեղճ թռչուն. սրանից հետո նա այլևս չի կարող չվել, չի կարող անցնել ծովերով ու ցամաքներով:

— Մենք կարող ենք փոխադրական միջոցներ տրամադրել և գործուղման ծախքերը դուրս գրել,— ասաց բաժնի վարիչը:

— Իսկ ինչպե՞ս կվարվեք այս մյուս թռչունի հետ, որ կոչվում է «Ծիծեռնակ»: Սրան էլ են մշակել:

Նորից եմ պահանջում «ըստերի» հետ միասին վերացրե՞ք գծիկները: Այդ գծիկները վատ հաղորդիչ են:

Թատերական բաժնի վարիչը հերոսաբար մերժեց այդ բուլոր պահանջները: Դրանից հետո դաշնակիցները նրան համարեցին ռազմագերի և երկար խորհրդակցելուց հետո, նրա համար որոշեցին պատժի խստագույն չափը, այն է՝ առանց ննջելու լսել թատերական մի քննադատի զեկուցումներից մեկը:

Իսկույն հայտնվեց վերոհիշյալ քննադատը և գրպանից հանելով ցիտատները, սկսեց խոսել: Թատերական բաժնի վարիչը սարսափահար վեր թռավ, սոսկալի ծիչ արձակեց և... արթնացավ:

— Դրսում արդեն վաղուց լույս էր, և ընդունարանից լսվում էր ինչ-որ մեկի դրամա-ողբերգական հազը:

— Ո՞վ է այնտեղ հազում,— հարցրեց բաժնի վարիչը ներս մտնող և երազից անտեղյակ քարտուղարուհուն:

— Դրամատո՛րգ է, պիես է բերել:

— Չի՞նի՞ նորից «ըստ» է,— ահաբեկված բղավեց նա:

— Ոչ, այս անգամ «ըստ-ըստ» է:

— Ինչպե՞ս թե:

— Ծատ պարզ. պիեսը կոչվում է «Գևորգ Մարզպետունի» ըստ Քաջվորյանի «Գևորգ Մարզպետունի» պիեսի, որը գրված է ըստ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի:

— Այդ արդեն ուրիշ բան է,— հանգստացավ բաժնի վարիչը: — «Ըստ»-ը շատ զահլա տարավ. տեսնենք «ըստ-ըստ»-

ից ինչ դուրս կգա: Ընդունիր պիեսը և շտապ ուղարկիր ամենամոտ թատրոնը:

Ահա թե ինչ բարի հետևանք ունեցավ չար երազը: Բայց նա մի այլ հետևանք էլ ունեցավ. այժմ թատերական բաժնի վարիչը միայնակ պիես չի կարդում: Կարդալիս ներկա են լինում վարչության աշխատակիցներից մի քանիսը, որպեսզի քննելու դեպքում անմիջապես արթնացնեն նրան, ճակատի վրա դնելով որևէ սառը ու ջրալի պիես:

1946

ԲԱԶՄԱՏԻՐՍԺ ԹՅՈՒՐԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

Մարտունու շրջանային գրախանույթը վերջերս ստացել էր մի արկղ նոր գրքեր, որոնց թվում 20 օրինակ բանաստեղծ Դանիել Վարուժանի «Երկեր»-ից: Վերջիններս սպառվեցին վայրկենապես, քանի որ շրջանի գրականության և լեզվի դասատուներն անհամբեր սպասում էին այդ նոր հրատարակությանը: Սակայն բացելով կազմը, որի վրա տպագրված էր 31 տարի առաջ գոհված բանաստեղծի անուն-ազգանունը ու դիմաստվերը, նրանք գրքի մեջ բանաստեղծությունների փոխարեն գտան... պատմվածքներ, որոնց վերնագրերն էին՝ «Առ-

վետական ոճը», «Քարհատները», «Կոմերիտականը», «Բոքոնը»...

Ինչ հրաշքով էր Վարուժանի «Հացին երգը» դարձել «Բոքոն»: Մարտունեցիներին այդ հանելուկը շատ չտանջեց, որովհետև նրանք կազմի տակ գտան նաև մի շապիկ, որի վրա կարդացին — «**Դերենիկ Դեմիրձյան, ԵՐԿԵՐ**»: Այսպիսով, պարզվեց, որ Պետհրատի տպարանի աշխատողները Դերենիկ Դեմիրձյանին ձմեռ օրով Մարտունի են ուղարկել բանաստեղծ Վարուժանի թեթև վերարկուով, թեև հարգելի արձակագիրը սոլիդ վերարկուներ շատ ունի... Դրանից հետո մարտունեցի գրասերները որոշեցին սպասել Դերենիկ Դեմիրձյանի «Երկեր»-ին, որպեսզի գոնե նրա մեջ կարդան Դանիել Վարուժանի բանաստեղծությունները:

Սակայն դրանով հարցը չի սպառվի, որովհետև նմանօրինակ թյուրիմացությունների տիրածը մեծ է, և Մարտունու գրախանույթում պատահածը պատահականություն չէ: Այդ գըլխացավանքից ազատվելու համար տպարանի աշխատողները կամ պիտի լսեն ընթերցողների բողոքները, կամ գրքերը վաճառքի հանեն առանց կազմելու, չմոռանալով բաժանել այսպիսի մասերի.

1. Կազմ կամ շապիկ.
2. Թութխալ.
3. Տպագրված մամուլներ.
4. Թել՝ վերջիններս կարելու համար:

Գնելով այդ առանձին մասերը, ընթերցողը խնամքով կը հավաքի դրանք, ինչպես հավաքում են տրակտորի կամ կոմբայնի մասերը, և կստանա ամբողջական գիրք, որը Պետհրատի տպարանից դուրս եկածներից կտարբերվի նրանով, որ հագած կլինի սեփական շապիկն ու անդրաձարտիքը...

Հակառակ դեպքում անհնար չէ, որ վաղը մենք Շիլլերի պիեսների կազմի մեջ գտնենք խորհուրդներ բուռնությի պատրաստելու մասին, անհնար չէ նաև, որ Շեքսպիրի Օթելլոն իր կնոջը սպանի «Քրեական օրենսգրքի» կազմի մեջ:

1946

ԳԼԽԱՎՈՐ ԱԳՐՈՆՈՍԻ ԱՆԳՈՒՒՆ ԱՐԱՐՔԸ

Մարտի վերջին Նոյեմբերյանի շրջանի բոլոր գյուղերը ըստացան մի այսպիսի հույժ շտապ հեռագիր.

ՇՐՋԱՆԻ ԲՈՒՐ ԱԳՐՈՏԵՆՆԻԿՆԵՐԻՆ

Առաջարկվում է վաղը առավոտյան, աքլորների կանչելուց ոչ ուշ ներկայանալ ինձ՝ վերցնելով ձեզ հետ մեկական բահ, բրիչ, փոցխ, ինչպես նաև 2 (երկու) օրվա սնունդ և համապատասխան քանակությամբ արաղ:

Շրջսովետի գործկոմի գյուղատնտեսության բաժնի գլխավոր ագրոնոմ

Ստանալով հեռագիրը, զարմացած ագրոտեխնիկները համապատասխան չափով քորեցին իրենց գլուխները: Ի՞նչ էր

նշանակում այդ ագրո-հրովարտակը: Եթե իրենց հրավիրում էին զարնանացանի հարցերին նվիրված խորհրդակցության, ապա ինչացու էին բահը, փոցխն ու բրիչը: Մի՞թե օրակարգն այդքան խոպան էր ու չմշակված: Վերջապես ինչքա՞ն պիտի խոսեին այնտեղ, որ լսողներին երկու օրվա սնունդ էր անհրաժեշտ: Իսկ արաղի հարցն ուղղակի անլուծելի հանելուկ էր: Այնուամենայնիվ նրանք ձեռք բերեցին պահանջվածը, կազմեցին իրենց ելույթների կոնսպեկտները և ճանապարհ ընկան: Դեռևս լույսը չբացված, 14 ագրոտեխնիկները, բահերով ու այլ գյուղ-գործիքներով զինված, որը ոտքով, որը ձիով, չըխկոցով ու թխկոցով մուտք գործեցին Նոյեմբերյան, քնահարամ անելով բնակիչներին:

Գլխավոր ագրոնոմը նրանց դիմավորեց իր գրասենյակի մոտ և ասաց.

— Բա՛րև, տղաներ:

Բա՛րև,— պատասխանեցին 14 հուժկու կոկորդներ, օդի մեջ նիզակների պես թափահարելով ցեխոտ բահերը, որոնց ծայրերից կախված էին սննդամթերքի գույնզգույն կապոցները: Տեսարանը ցնցող էր: Միամիտ մարդը կարող էր ենթադրել, որ ինքը ներկա է կինո-նկարահանման, որտեղ գլխավոր դերերում հանդես են գալիս որևէ միամիտ և նրան ողջունող նախարարները...

— Սկսե՛նք, ընկերներ,— ասաց գլխավոր ագրոնոմը:

— Սկսե՛նք,— որոտացին բոլորը միաբերան և հանեցին իրենց կոնսպեկտները:

— Ագրոկանոնների համաձայն,— ասաց գլխավոր ագրոնոմը,— բարձր բերք ստանալու համար անհրաժեշտ է ժամանակին հողը փորել, ցանել և այլն: Ուրեմն առա՛ջ, ընկերներ: Այո, առա՛ջ:

Լսելով այդ մարտական լուզունգը, ագրոտեխնիկները միա-
համուռ կերպով ծափահարեցին և նստոտեցին մուտքի աստի-
ճանների վրա, հենվելով իրենց բաժերին:

— Ա՛յ քեզ դամմազ մարդիկ, — հանկարծ բղավեց գլխավոր
ագրոնոմը, — ես ասում եմ «առաջ», իսկ սրանք նստում են,
եթե ասեմ նստե՞ք՝ երևի կպառկեն: Վերցրեք գործիքները և
հայրա իմ հետևից... Առա՛ջ:

Ագրոտեխնիկները զարմացած իրար նայեցին և, տեսնելով,
որ մարդը կատակ չի անում, նորից առան իրենց գենքն ու
զրահը և հետևեցին նրան: Խավարի մեջ կես ժամ քայլելուց
հետո գլխավոր ագրոնոմը կանգ առավ մի հողամասի մոտ և
նրանց առաջարկեց սկսել: Սակայն նրանք տեղից չշարժվե-
ցին, որովհետև չգիտեին, թե ինչը պետք է սկսել:

— Ի՞նչ եք շվարել, հող չե՞ք տեսել, — ասաց գլխավոր
ագրոնոմը: — Սա իմ նոր բոստանն է, որտեղ պետք է լոբի,
խիար և դդում տնկվի: Իսկ դրա համար հարկավոր է հողը
փորել և մարգեր անել: Պետք է երկու օրում վերջացնեք, ապա
թե ոչ ձեր բերած սնունդը քիչ է:

Ագրոտեխնիկները ուշքի գալով սկսեցին հասկանալ, թե
ինչու գարնանացանի այդ թեժ օրերին իրենց կտրել են աշ-
խատանքից և կանչել հույժ շտապ... Հասկացան, որ իրենք
իրենց սեփական գործիքներով և սեփական սնունդով պիտի
աշխատեն հանուն ագրոնոմի անհատական դդումների... Բայց
ի՞նչ կարող էին անել: Առան բաժերը և սկսեցին փորել: Այնպես
էին փորում, որ կարծես թե ոչ թե բանջարանոց, այլ գերեզ-
ման էին փորում իրենց զայրույթի և գլխավոր ագրոնոմի
անպատկառության համար:

Կեսօրին գործը կես էր եղել, սակայն գիշերը գլխավոր
ագրոնոմի տրամադրությունը փչացավ, որովհետև նրան հայտ-

նի էր դարձել, որ ագրոտեխնիկներից մեկը, տասնհինգերորդը,
չէր ներկայացել շրջկենտրոն: Եվ ձեռքն առնելով գրիչը, նա
անհնազանդ ագրոտեխնիկին գրեց հետևյալ նոտան, որը
նույնպես ընկավ մեր ձեռքը, և հրապարակում ենք անփոփոխ.

Բարև Դուրմիշ.

Տղաները արդեն ինձ օգնում են, ինձ տրված հողամասը
փորում: Դու ևս խոստացիր, որ երկու օրով գաս, և ես
այդ մասին խոսել եմ իշխանի հետ և թույլտվություն
ստացել: Այդ մասին նորից ասա իշխանին և ամսի 25-ին
վերցրու Սուրենին էլ Լճկաձորից ու եկ... Բայց պետք է
գաք առավուտը շուտ, որպեսզի գործ անենք: Բերում ես
հետո՞ք բահ և այլն, երկու օրվա սնունդ և եթե կարաս, մի
քիչ էլ արաղ բերես:

ՍՍՐԳՍՅԱՆ

Եթե այդ նամակը տարեթիվ չունենար և եթե մենք չգիտե-
նայինք, որ փոքրատառով գրված «իշխանը» կուխոզի նախա-
գահի անունն է, ապա պիտի ենթադրեինք, թե մեր ձեռքն է
ընկել միջին դարերից մնացած մի փաստաթուղթ, որով որևէ
հզոր ֆեոդալ կոռ ու բահրա է պահանջում իրեն ենթակա
իշխանի հպատակներից...

Ինչևիցե: 20-րդ դարում գրված այդ նամակը ուշ հասավ
ագրոտեխնիկ Դուրմիշին, և նրա բերած արաղը խմեցի՛լ այն
ժամանակ, երբ բոստանն արդեն վերջնականապես տնկված
էր: Ծառ ուրախ կենացներ խմեցին ու տուն վերադարձող ագրո-
տեխնիկները, իսկ նրանցից մեկը նույնիսկ առաջարկեց խմել
գլխավոր ագրոնոմի հաջողության և նրա ապագա դդումների

կենացը, ցանկանալով, որ նրանք ամենամեծը լինեն շրջա-
նում:

Ըստ երևույթին Նոյեմբերյանի շրջանի ագրոտեխնիկները
դեռևս շատ կխմեն այդ կենացը, որովհետև բանջարանոցի
գործը տնկելով չի ավարտվում... Նրանք երևի այստեղ կանց-
կացնեն նաև մշակության և բերքահավաքի կամայանիան,
ստիպված կխմեն նաև վարունգի կենացը, եթե միայն այս
Ֆելիետոնը չխանգարի նրանց քեֆը:

1947

ՎԻՃԵԼԻ ՍԵՆՅԱԿԻ ԵՎ ԱՆՎԻՃԵԼԻ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վիճելի սենյակ... Քաղաքի շրջանային ժողդատարանի
դատավորներից մեկի լեզվով այդպես է կոչվում այն սենյակը,
որը ձեզ է պատկանում անվիճելի կերպով: Եթե ձեր կարծատև
բացակայության ժամանակ մեկն ու մեկը բացել է դուռը և
ներս խցկվել, ապա վերոհիշյալ դատավորը հարցը կլուծի
այսպես. ըստ օրենքի վիճելի սենյակը պատկանում է ձեզ,
ստացեք դատարանի արդար վճիռը և ուրախացեք, սակայն
մի տխրեցրեք նաև ձեր սենյակը հափշտակողին և թույլ

72

տվեք, որ նա մի երկու տարի էլ ձեզ հետ վեճը շարունակի
ձեր սեփական բնակարանի լուսամուտից: Միննույն է, դատա-
վորը ոչ մի միջոց չի առնի իր վճիռն ի կատար ածելու համար:

Երեք տարի առաջ ճիշտ մի վիճելի սենյակի գործով այդ
դատավորին դիմեց Հայրենական պատերազմում զոհված մար-
տիկի մայր Նուշիկ Անտոնյանը: Վերջինս 70 տարեկան մի կին
է, ոչինչ չի հասկանում իրավաբանությունից, ուստի և համոզ-
ված էր, որ եթե սենյակն իրենն է, ապա միաժամանակ չի
կարող պատկանել ուրիշին: Ահա հենց այդ պառավի գործն էլ
դարձավ դատավորի դատավարական գործունեության թագն
ու պսակը և մինչև հիմա զարդարում է նրա գլուխը: Իսկ գործը
նույնքան հասարակ էր, որքան և զայրացուցիչ: Ահա այդ պատ-
մությունը:

Վերոհիշյալ սենյակը վիճելի է դարձել այս կերպ. 1945
թվին վախճանվում են հայցվորի աղջիկը և փեսան, այսինքն
սենյակի տերերը, իրենց հետևից թողնելով երկու անչափահաս
երեխաներ: Բարի պառավը որոշում է իր որբացած թոռներին
գարնանը տանել հայրենի գյուղը: Փակում է դուռը և թաղային
լիազորին խնդրում աչքը վրան պահել, առանց իմանալու, որ
վաղուց նրա աչքը հենց դրա վրա էր: Աշնանը գյուղից վերա-
դառնալիս նկատում է, որ իր ձեռքով փակած սենյակից
մարդկային ձայներ են լսվում:

Պարզվում է, որ թաղային լիազորը բացել է դուռը և որբերի
սենյակը վարձով տվել է իր ծանոթներից մեկին: Ոչ ոք չի
լսում պառավի բողոքն ու աղաչանքները: Երեխաների հետ
մի քանի գիշեր փողոցում գիշերելուց հետո նա դիմում է իրենց
շրջանի առաջին տեղամասի ժողդատարանին: Դատավորը
կայացնում է իր վճիռը— վիճելի սենյակը պատկանում է երե-
խաներին: Կարծելով, որ հարցն արդեն լուծվեց, խեղճ պառավը

73

թեթևացած սրտով և արդար դատավորին օրհնելով վերադառնում է տուն, ավելի ճիշտ՝ տան բակը: Այստեղ, բաց երկնքի տակ նա իր թոռնիկների հետ գիշերում է մի քանի շաբաթ ևս, մինչև որ երևում է դատական կատարածուն: Վերջինս մտնում է սենյակը և կես ժամ այնտեղ մնալուց հետո դուրս է գալիս և հայտնում, որ դատարանի վճիռն ի կատար ածելն իր ուժերից վեր է, քանի որ անկոչ հյուրը կտրականապես դեմ է վտարվելուն: Հասկանալի է, որ մատը մատին չի խփում նաև թաղային լիազորը, որի մատներն հավանաբար զբաղված էին սենյակի վարձը հաշվելով և իր գրպանը դնելով: Զուր է պառավն ամեն օր արտասվում դատավորի կաբինետում: Գիտենալով, որ ամիսներ շարունակ դատարանի վճիռը չի կատարվում, հարգելի դատավորը գլանում է նույնիսկ մի անգամ վերցնել հեռախոսը և հայտնել միլիցիայի օրգաններին: Իսկ երբ պառավը դատավորից խնդրում է վճռի պատճենը, ապա վերջինս պատասխանում է ամենայն հանգստությամբ.

— Մեր բոլոր վճիռները ջրհեղեղը տարավ...

Ըստ երևույթին ջրհեղեղը չէր մոռացել նաև դատավորի խիղճը, որի հետևանքով զոհված մարտիկի գառամյալ մայրը իր երկու թոռների հետ միասին սպասեց ևս... մեկ տարի: Նրանք իրենց սենյակը մտան այն բանից հետո, երբ ներս խցկված անձնավորությունը նրանց բախտից մի ավելի մեծ հանցագործության համար դատվեց և բանտ նետվեց:

Սակայն չկարծեք, թե դրանով գործը վերջացավ կամ որբերը տիրացան իրենց սենյակին: Երկու ամիս հետո, գարնանը, պառավն իր թոռների հետ նորից գյուղ գնաց, այս անգամ դուռը կողպելով ավելի ամուր: Աջանանը վերադարձավ և... ավելի մեծ խայտառակություն: Այս անգամ նրանց սենյակը ոչ թե վարձով էր տրված, այլ վաճառված: Նորից պառավը դիմեց

դատավորին, որը մի ամբողջ տարի ձգձգելով գործը, միմիայն «Խորհրդային Հայաստանի» խմբագրության միջամտությունից հետո, միևնույն գրչով գրեց այս նոր վճիռը, որ բերում էնք անփոփոխ.

«...Առաջին տեղամասի ժողդատարանը... քննեց դոնբաց նիստում քաղ. գործ. ըստ հայցի Անտոնյան Նուշիկ ընդդեմ Ռուդալով Ֆեոդոր սենյակի պահանջի մասին: Հայցուհին դիմել է ժողդատարան այն մասին, որ վիճելի սենյակը զբաղեցրել է աղջիկը և փեսան իր երկու երեխաների հետ: Աղջիկը և փեսան մահանում են 1944 թ. իսկ թոռները սկսում են ապրել իր խնամքին: 1946 թ. վիճելի սենյակը փակում և մեկնում է, այժմ վերադարձել է և չի կարողանում նստել սենյակում, նկատի ունենալով, որ պատասխանող կողմը ապօրինի կերպով զբաղեցրել է: Խնդրում է վտարել և սենյակը հանձնել իրեն, որ որբերին խնամի: Ժող. դատարանը գտնում է հայցը հիմնավորված այն բանի համար, որ սենյակը պատկանում է կույսեթին (!!) և հանձնված է եղել հայցուհուն, իսկ պատասխանողը գնել է ինչ-որ մի քաղաքացուց...»:

Հայերեն լեզուն չմոռանալու համար կանգ առնենք այստեղ և ասենք միայն այն, որ այդ որոշումը կայանալուց հետո էլ սենյակը չի վերադարձված տերերին: Խմբագրությունը ստիպված եղավ այդ հարցով դիմել Արդարադատության մինիստրի տեղակալին, խնդրելով ազդել դատավորի և նրա կատարածունների վրա և վերջ դնել այդ տրագիկ կոմեդիային: Մինիստրի տեղակալը խոստացավ: Խոստացավ մի քանի անգամ, և ինչ:

Մի քանի օր առաջ լրացավ ուղիղ երեք տարին, իսկ նու-

շիկ Անտոնյանը և նրա թոռները, այդ թոթովախոս աղջիկն ու տղան, որոնց դատարանը չգիտես ինչու կույսեր է անվանել, դեռևս չեն կարողացել ներս մտնել իրենց սեփական սենյակը:

Դժվար է այլևս որևէ բան ասել: Երևի այս գործով զբաղվի նաև Արրդարադատության մինիստրը...

1948

ԹԵ ԻՆՉ ՄՆԱՑ ՄԻ ԿԱԹԻԼ ՍԵՂՐԻՑ

Կան բոլորովին նոր տեսակի ճանճեր, որոնք առատորեն աճում են Պետհրատում և կոչվում են **վրիպակներ**: Սրանք ավելի շատ նստում են Կլասիկների և մեռած հեղինակների գործերի վրա: Պարզ է, որ նրանց ուշադրությունից չէր վրիպի «Մի կաթիլ մեղրը», որը հրապուրիչ լինելուց բացի՝ խիստ թարմ է— վերահրատարակվել և վաճառքի է հանվել վերջերս. Պետհրատի մանկա-պատանեկան բաժնի մակնիշով:

Եվ ահա վրիպակները եկել ու բազմել են վրան: Այն էլ ինչպես. 167 տողի վրա 61 հատ: Պարզապես գրքուկի թերթերը դարձել են ճանճ բռնելու թղթեր: Նստել են վրան ու այլափոխել բազմաթիվ վանկեր, կերել 11 շեշտ, 4 հարցական և 16 բացականչական նշան, 1 ստորակետ, 1 բուլթ, 20 հատ

76

«ը», որ հանգուցյալ բանաստեղծը տաղաչափական նկատառումներով դրել է վանկերի մեջ: Ըստ երևույթին զուրկ չեն եղել նաև կլասիկին խմբագրելու ընդունակությունից, քանի որ—

Վերին թաղից, ներքին թաղից,
Ճամփի վրից, գործի տեղից—

հատվածից մնացել է միայն՝

Վերին թաղից, ներքին Տեղից:

Հաջորդ տողը չկա ու չկա: Երևի այն նկատառումով, որ մարդիկ հանգիստ շարունակեն իրենց ճամփան ու մի կաթիլ մեղրի համար չկտրվեն «գործի տեղից»: Չորս տող էլ միացել, կպել են իրար:

Կարդում ենք ու մտածում. ինչու՞ ոչ ոք չի փորձել քշել այդ թևավոր վրիպակները: Ինչո՞վ են զբաղվել այն անձնավորությունները, որոնց պաշտոններն ու անունները կարդում ենք գրքուկի վերջում: Յուրաքանչյուրին միջին հաշվով ընկնում է 15 վրիպակ, իսկ պատ. խմբագրին՝ լրացուցիչ մի ամբողջ տող:

Եթե մի երկու անուն էլ ավելանար, ապա երևի «Մի կաթիլ մեղր»-ից մնար միայն վերոհիշյալ ցուցակը, որի վրա ճանճերը չեն ցանկացել նստել:

1948

77

«ԿՑԵԼ ԳՈՐԾԻՆ»

Հիանալի կցողներ կան Երևանի Ս. Ս. Կիրովի անվան գործարանի դիրեկցիայում: Ինչ որ ձեռքներն ընկնի՝ անմիջապես կցում են գործին և ուղարկում արխիվ: Իսկ գործարանի դիրեկտորի տեղակալը այնքան է խորացել գործին կցելու գործի մեջ, որ հեշտությամբ կարող է դիսերտացիա պաշտպանել՝ հետևյալ թեմայով. «Ինչպես կցել, որպեսզի ոչ մի կերպ չպոկվի»: Ուստի անհետաքրքրական չէ տեսնել, թե ինչպես են այդ բանն անում և նրա ղեկավարությամբ աշխատող կցողները:

1948 թ. ապրիլի 26-ին գործարանի փականագործներից մեկը դիրեկցիային դիմում է ներկայացնում՝ խնդրելով գործարանի շենքերից իրեն տրամադրել մի սենյակ: Դիրեկտորի տեղակալը դիմումի ծախ անկյունում թանաքով մակագրում է. «Կոմունալ բաժնի վարիչին. մտցնել ցուցակի մեջ, առաջին հերթին բավարարելու համար»: Կոմունալ բաժնի վարիչը դիմումի աջ անկյունում կանաչ թանաքով մակագրում է. «Քարտուղարուհուն. կցել գործին»: Վերջինս, իհարկե, կցում է ամենաամուր տեսակի մետաղե կցանով և տեղավորում արխիվում:

Դիմումը ներկայացնելու օրից անցնում է հինգ ամիս: Փականագործը, որը տեղ էր խնդրում ոչ թե դիմումի, այլ իր ընտանիքի համար, սեպտեմբերի 23-ին նորից է դիմում, խնդրելով հաշվի առնել իր նախորդ դիմումը և նրա վրա արված մակագրությունները: Հաշվի են առնում: Բայց ինչպե՞ս: Քանի որ նրա նախորդ դիմումի վրա կար «կցել գործին» մակագրությունը, ապա այս դիմումն էլ են կցում գործին և ուղարկում արխիվ:

Փականագործի երրորդ դիմումն իր ծանապահորդությունն սկսում է գործարանի դիրեկտորի մակագրությամբ, որով նա կոմունալ բաժնի վարիչից պահանջում է անմիջապես կատարել իր տեղակալի հրամանը: Դրան հետևում են նրա տեղակալի և կոմունալ բաժնի նոր վարիչի մակագրությունները՝ 1. «Մըտցընել ցուցակի մեջ, առաջին հերթին բավարարելու համար» և 2) «Կցել գործին»: Անմիջապես կցում են:

Նրանք կցում են, իսկ դիմողը սպասելով՝ շարունակում է պոկել օրացույցի թերթիկները, որոնք նրա բախտից 1948 թվին 366-ից ավել չէին: Եվ առանց սպասելու դիրեկտորի տեղակալի համապատասխան մակագրությանը, գալիս է 1949 թիվը: Փականագործը որոշում է ներկայանալ անձամբ, որպեսզի այլևս կցելու ոչ մի նյութ չտա նրանց: Տեղակալը լսում է նրան և ապա պահանջում փականագործի դիմումները, որոնց փոխարեն քարտուղարը տնքալով բերում է երեք հաստափոր գործ: Դիրեկտորի տեղակալը գտնում է դիմումները, շուտ ու մուտ տալիս և ապա ասում ամենայն լրջությամբ.

— ...Ձեր դիմումները կարդալ չի լինում, մակագրությունները խանգարում են: Բացի դրանից, կցված են գործին, իսկ պոկելը նպատակահարմար չէ: Գրեցեք նորը:

Փականագործը գրում է նոր դիմում, որի վրա տեղակալը նորից մակագրում է «առաջին հերթին», որի հիման վրա դիմումն իսկապես առաջին հերթին կցվում է գործին և շտապ ուղարկվում արխիվ:

Մի խոսքով՝ փականագործը սենյակ չստացավ և միայն դիմումներ գրեց: Այդ նույն ժամանակամիջոցում դիրեկտորի տեղակալը և նրա ղեկավարությամբ աշխատող կցողները հնարավորություն ունեցան սահմանելու հանրապետական ռեկրյոլ.

Նրանք գործարանի հերթափոխության պետի Նույնանման դիմումի վրա կարողացան տեղավորել... 12 մակագրություն և նոր միայն կցել գործին: Պա արդեն այնպիսի մի վավերաթուղթ է, որին նայելով կարող են նախանձել բոլոր դարերի ամենակարկառուն բյուրոկրատները:

Այս վավերաթուղթն ունի նաև այն արժեքը, որ հետաքրքրվողները նրա վրա կարող են գտնել և ուսումնասիրել դիրեկցիայի համարյա բոլոր աշխատողների ձեռագրերը, ինչպես նաև կարող են պարզել, թե նրանք ինչ գույնի թանաքներ ու մատիտներ են գործածել 1948—1949 թվերին:

Իհարկե, լավ է, որ մենք ծանոթացանք այդ պերձախոս փաստաթղթերին: Վատն այն է, սակայն, որ վաստակավոր կցողները կարծում են, թե իրենք էլ շատ ամուր են կցված իրենց աթոռներին...

1949

23ՈՒՆ Ե ԳԱԼԻՍ ՓԱԹԻԼ, ՓԱԹԻԼ

— Ծատ իզու՛ր է գալիս,— գայրացած կպատասխանեն Երևանի բնակիչները:

Սակայն, նրանք սխալվում են: Թորձը ցույց է տալիս, որ

50

ձյունը շատ ավելի օգտակար բան է, քան կարծում էինք: Ձյունը օգտակար է ոչ միայն դաշտերի ու այգիների համար, ոչ միայն մանկական գրողների համար, որոնք ամեն մի փաթիլի միասին պետք է առնվազն երեք բանաստեղծություն գրեն, այլև Երևանի Կիրովյան ու Սպանդարյան շրջանների կոմունալ բաժինների համար, քանի որ այդ մթնոլորտային տեղումը մեծ հոգատարությամբ ծածկում է բոլոր հին և նոր աղբակույտերը...

Չնայած դրան, Երևանում, ինչպես նաև քաղաքի վերոհիշյալ շրջաններում, ձյուն քիչ է գալիս: Այնքան քիչ, որ դոնապաններն ափսոսում են ավելի: Հազիվ ծածկում է մայրերն ու փողոցները, հետո ոտքերի տակ ամրանում և դառնում է այնքան ողորկ ու սահուն, որ վրայով անվնաս անցած, մարմնի որևէ կարևոր մասը չջախջախված մարդուն կարելի է շնորհավորել մի քանի անգամ: Սակայն, շնորհավորանքները քիչ են: Ավելի շատ են հառաչանքները, ինչպես նաև մխիթարանքները, որոնք հաճախ այսպիսի բնույթ են ստանում.

— Վա՛յ քիթս,— ծչում է ունիվերմագի առջև ընկնողը:

— Վա՛յ ձեռքս,— բղավում է նրա կողքին պառկողը:

— Վա՛յ գլուխս,— տնքում է երրորդը: Եվ առաջին երկուսը տեսնելով, որ քիթն ու ձեռքը դատարկ բաներ են մի ամբողջ գլխի համեմատությամբ, մխիթարվում են, մոռանում իրենց ցավը և շարունակում ճանապարհը՝ եթե կարողանում են ոտքի կանգնել:

Անցնում են քաղաքի փողոցներով և ականատես ու մասնակից լինելով նման տեսարանների, ակամա կրկնում են մանկական երգի տողերը.

Հո՛փ, դու ընկար՝ ես ելա,

Հո՛փ, դու ելար՝ ես ընկա...

Եվ քանի որ դա այդպես է, ամեն մի ընկնող ու ելնող հարցնում է բարձրաձայն կամ իր մտքում.

— Ո՞ր են մեր քաղաքի դոնապանները, ինչու՞ չեն մաքրում մայրերը:

Մի տարի առաջ թերթերից մեկում կարդացինք, «թե մայրաքաղաքի դոնապանները իրենց համաքաղաքային հավաքում քննադատության և ինքնաքննադատության կրակի տակ վեր են հանում իրենց աշխատանքում նկատվող թերությունները»: Լավ են անում: Բայց մինչև ե՞րբ պիտի վեր հանեն թերությունները և վար դնեն ցախավելները: Եթե նրանք այս ցուրտ օրերին զբաղված են քննադատության կրակ բորբոքելով, ապա ի՞նչ են մտածում քաղխորհրդի և շրջխորհուրդների գործկոմների կոմունալ բաժինների աշխատողները: Չենք կարծում, թե նրանք քաղաքում շրջում են դահուկներով ու չմուշկներով կամ ունեն այնքան ցավադիմացկուն մարմիններ, որ չեն զգում, թե ինչ կզգա սառույցի վրա շրմփացողը: Ապա ի՞նչն է պատճառը:

Մի՞թե ծյուն է նստել նաև նրանց խղճի վրա:

1949

ՀԱՎԵՐԻ, ԱՂՎԵՍՆԵՐԻ ԵՎ ԱՅԼՈՑ ՄԱՍԻՆ

Եթե Ղուկասյանի շրջանի դաշտերում թափառող աղվեսները գրել իմանային, ապա շրջանային գյուղբաժինը կստանար այսպիսի մի դիմում.

«Սրանով խնդրում ենք մեզ այսուհետև պատասխանատու չհամարել մեր գյուղի կոլտնտեսության հավաքուծական ֆերմայից անհետացող հավերի համար, որովհետև ս. թ. հունվարի 1-ից մեր պարտականությունները համատեղության կարգով կատարում է ֆերմայի վարիչը: Այլևս անելիք չունենալով, մենք տեղափոխվում ենք ուրիշ դաշտեր և հույս ունենք, որ դուք համապատասխան միջոցներ ձեռք կառնեք, որպեսզի մինչև մեր վերադարձը ֆերմայում գոնե մի քանի հավ մնա»:

Հավանաբար այս դիմումը ևս կմնար անհետևանք, որովհետև գյուղբաժնի աշխատողները գտնում են, որ այդպիսի հարցերը իրենց չեն վերաբերում, որ հավաքուծական ֆերմաների աճման գործը բնության կողմից դրված է աքաղաղների ու հավերի ուսերին: Նրանց չի զարմացնում նաև հավերի անհետանալը, քանի որ այդ սուբյեկտները ոտքերի հետ ունեն նաև թևեր... Այդ է պատճառը, որ դիմումի մեջ հիշատակվող գյուղի վիճակը կարող էր անհանգստացնել միայն... աղվեսներին:

Վերոհիշյալ ֆերման ուներ 36 թևավոր, որոնցից յուրաքանչյուրը ամեն օր բարեխղճորեն ածում էր մեկ ձու (բացի աքաղաղից): Անցյալ տարի տնտեսության նախագահը «Նուկտեմբերիկ» ամսագրում սիստեմատիկորեն կարդալով աղ-

վեսներին նվիրված առակներն ու հեքիաթները՝ որոշեց ձեռք առնել հետևյալ միջոցառումները. 1) ֆերմայի հավերը շտապ տեղափոխել կոլտնտեսականներից մեկի տունը, 2) վերջինի դռանը կապել մի ազդեցիկ շուն, 3) հավերին պարտադրել՝ տարվա ընթացքում ածել 70-ական ձու, ընդամենը 2520 ձու, 4) գործի ղեկավարությունը և պատասխանատվությունը դնել անձամբ նրա վրա, որին տալ հավաքուծական ֆերմայի վարիչի աշխօրեր, որոնց արժեքը հավասար է 160 հավի:

Եկավ տարվա վերջը: Հավաքուծական ֆերմայի վարիչը, որին գյուղում պարզապես Ղանդիլ են անվանում, կոլխոզին ներկայացրեց ընդամենը 1040 ձու, լավ իմանալով, որ իրեն ենթակա հավերն էլ ունեն հավի հիշողություն և չեն մտաբերի իրենց ածած ձվերի թիվը: Մնացած 1480 ձվերը, ինչպես պետք էր սպասել, մտել էին կոլտնտեսության ինկուբատորը, այսինքն Ղանդիլի ստամոքսը: Իրենց ձվերի ողբերգական ծանապարհով նույն այդ տեղն էին ժամանել նաև շատ հավեր: Մնացած 15 հավերը դեռ զարմացած դիտում էին շուրջը և իրենց կարծ խելքով չէին կարողանում պարզել, թե ի՞նչն է պատճառը, որ ինչքան փոքրանում է իրենց թիվը, այնքան մեծանում են ֆերմայի վարիչի բմբուլե բարձերը: Ինչ վերաբերում է հավապահ շանը, ապա վերջինս իրեն խիստ վիրավորված էր զգում, որովհետև Ղանդիլը հավերի անհետանալը բացատրում էր նրա պասսիվ վերաբերմունքով և աղվեսների ակտիվությամբ:

Այդ բացատրությունը լսելուց հետո կոլտնտեսության նախագահը անձամբ ժամանեց ֆերմա, ափսոսանք և ցավակցություն հայտնեց կատարված դեպքերի առթիվ և Ղանդիլին մխիթարելու. ինչպես նաև ֆերման զարգացնելու նպատակով գնել տվեց 31 նոր հավ: Ղրանից հետո հաշվեց և տեսավ, որ

առաջվա 36 հավի փոխարեն ֆերման ունի 46 հավ, այսինքն մեկ տարվա ընթացքում աճել է 28 տոկոսով:

Իսկ հետո՞: Հետո շրջանային օրգանները իրենց հաշվետվության մեջ գրեցին և դեռ կգրեն, թե հավաքուծական ֆերմաներն աճում են շրջանի այս, այս, այս գյուղերում: Եվ որպեսզի դրա վրա նույնիսկ եփած հավի ծիծաղը չգա, Ղանդիլը ներկայումս ոչ թե եփում, այլ տապակում է հավերը:

1949

ԸՆԿԵՐ ՂԱԼԻԾԸ

Կոնֆերանս էր հրավիրված:

Քաղաքի կինո-թատրոնի մուտքի ծակատից մի երեք մետրանոց պլակատ ավանսով ողջունում էր «Կոլտնտեսական» կամավոր սպորտ ընկերության շրջանային կոնֆերանսի պատգամավորներին: Ինչ վերաբերում է շենքի ներսին, ապա այստեղ կոնֆերանսի հաջողությունն ապահովելու համար ձեռք էին առնված հետևյալ միջոցառումները. 1) բեմի խորքից մի ավելի երկար պլակատ նորից էր ողջունում պատգամավորներին. 2) նախագահության սեղանը ծածկված էր լավորապես կարմիր մահուդով. 3) սեղանի վրա հանգչում էր նոր սփսոս-

մի այնպիսի մի զանգ, որով կարելի էր դեկավարել ոչ միայն կոնֆերանսը, այլև ամբողջ շրջանը. 4) ամբիոնի վրա մեկի փոխարեն առկա էր երկու ջրաման, մեկը, ըստ երևույթին, քննադատությամբ, իսկ մյուսը ինքնաքննադատությամբ ըզբաղվողների համար:

Երեկոյան ճիշտ ժամը 7-ին, մեջտեղի դռնից դուրս գալով, նախագահության սեղանին մոտեցավ «Կոլտնտեսական» ըսպորտ ընկերության շրջանային խորհրդի նախագահը, որին դահլիճը չկարողացավ դիմավորել բուն ծափահարություններով, քանի որ այնտեղ նստած էր ընդամենը 6 մարդ՝ 40-ի փոխարեն:

— Ընկերներ,— ասաց նա դիմելով հիշյալ 6 պատգամավորներին,— շրջանային կոնֆերանսը համարելով բացված, առաջարկում եմ ընտրել նախագահություն՝ բաղկացած երեք շնչից և մի քարտուղար:

Ընտրեցին: Երբ ընտրված չորս պատգամավորները վերստուգիչ հանձնաժողովի հարգելի նախագահի հետ միասին, ընդամենը հինգ շունչ, վեր կացան իրենց տեղերից և դիմեցին դեպի բեմի աստիճանները, դահլիճից լսվեց մի սրտակեղեք ձայն.

— Այ ընկեր նախագահ, բա ես պուպու՞ եմ, որ մենակ մնամ էստեղ: Էնա ինձ էլ մի բան ընտրեիք, էլի՛:

Բողոքողը կոնֆերանսի դահլիճում մնացած միակ պատգամավորն էր, բեղ ու մորուքով մի կոլտնտեսական: Լսելով նրա բողոքը, նախագահը գայրացած ձեռքը տարավ դեպի գանգը.

— Դահլիճը կարգի եմ հրավիրում:

Դահլիճը, որի անունը պարզապես Համբարձում դայի էր,

խաղաղվեց անմիջապես: Դրանից հետո նախագահողը զեկուցման համար խոսքը տվեց ինքն իրեն:

Երկու ժամ տևած զեկուցման ընթացքում հիշյալ դահլիճը այլևս թույլ չտվեց ոչ մի լուրջ անկարգություն, միայն թե մի անգամ հազաց, մի անգամ էլ խոնկաց ամենայն անկեղծությամբ:

— Վերջացնելով զեկուցումս, դահլիճին կոչ եմ անում բորբոքել քննադատության և ինքնաքննադատության կրակը,— ասաց զեկուցող-նախագահը, մեծ ափսոսանքով հեռանալով ամբիոնից:

Սակայն դահլիճը, այսինքն Համբարձում դային, բուրոկվին այլ մտադրություն ուներ: Վեր կենալով տեղից ու ծածկելով գլխարկը, նա, առանց որևէ կրակ բորբոքելու, քայլերն ուղղեց դեպի դուռը:

— Այ ընկեր, այդ ի՞նչ ես անում, սա կոնֆերանս է, թե զարաֆաթ,— տեղից վեր թռավ նախագահը:— Մի սրան սալի, փախչելու միտք ունի: Ուզում է մեր կոնֆերանսն առանց դահլիճի թողնի:

— Փախչելը չեմ փախչի,— ասաց կոնֆերանսի պատգամավորը, կանգ առնելով կես ծանապարհին:— Մենակ թե ինձ մի բան հասկացրեք: Էս ինչի՞ եք ինձ քնահարամ արել, բերել նստեցրել էստեղ ու անունս էլ դրել դահլիճ: Բա որ խոխեքս իմանան, ի՞նչ կասեն: Ախր ինձ ի՞նչ եք կանչել, այ բալամ, ջահել չեմ, որ մարզանք անեմ, համ էլ մեր գեղումը ոչ փուղբու կա, ոչ ձեր ասած էդ սպորտը: Կա ոչ, այ բալամ, կա ոչ:

— Իսկ դու կարծում ես մյուս գյուղերում կա՞, որ մարդիկ վեր են կացել եկել,— գայրացավ նախագահը,— նստիր տեղդ, մի տաս րոպեից կվերջացնենք:

Կես ժամ հետո, երբ դահլիճը նորից անհանգստության նշաններ էր ցուցաբերում, նախագահը ոտքի կանգնեց.

— Ամփոփենք, ընկերներ: Առաջարկում եմ ընդունել այսպիսի բանաձև, նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, որ շրջանիս գյուղերի մեծ մասում սպորտ կազմակերպություններ նոր պիտի կազմակերպենք, իսկ կազմակերպածներն էլ կազմալուծվել են կամավոր կերպով, առաջարկում եմ մեր շրջանային խորհրդի աշխատանքը համարել ոչ գերազանց, ոչ էլ լավ, այլ բավարար: Դեմ չկա?:

Դահլիճը մեծ խանդավառությամբ այդ բանաձևն ընդունեց... միաձայն:

Այնուհետև կարդացվեց «Կոլտնտեսական» կամավոր սպորտ ընկերության հանրապետական կոմիտեի նախագահի ողջույնի հեռագիրը կոնֆերանսին, որը դահլիճը, այսինքն Համբարձում դային, լսեց հոտնկայս, քանի որ պատրաստվում էր գնալու:

Բայց... հենց այդ ժամանակ բեմի վրա երևաց մի նոր անձնավորություն, նկատելով դահլիճի վիճակը, նա իր պարտքը համարեց հանդես գալ ընդարձակ մի ճառով, որի վերջում պահանջեց կոնֆերանսը համարել չեղյալ, հրավիրել նոր կոնֆերանս՝ ապահովելով պատգամավորների ներկայությունը:

Ասում են, որ ուղիղ երեք օր հետո կայացել է այդ նոր կոնֆերանսը, որին այս անգամ ներկա է եղել ոչ թե մեկ, այլ երեք պատգամավոր, այսինքն 300 տոկոսով ավելի:

Ասում են նաև, որ այդ նշանավոր կոնֆերանսի պատմությունը հասել է շրջանի գյուղերը, և այնտեղ երեխաները տունտուն խաղալը թողել, հիմա էլ կոնֆերանս-կոնֆերանս կամ ժողով-ժողով են խաղում: Իսկ այն գյուղում, որտեղ ապրում է

Համբարձում դային, խեղճ մարդու անունը դրել են ընկեր Դահլիճ:

Մեր պատգամավորը մեկը մյուսի հետևից դիմումներ է ներկայացնում գյուղխորհրդի նախագահին, պահանջելով խիստ միջոցների դիմել, որպեսզի այլևս ոչ ոք իրեն ընկեր Դահլիճ չասի:

Գյուղխորհրդի նախագահն էլ, ամեն անգամ Համբարձում դայուն մի լավ հանգստացնելուց հետո, ձեռքը դնում է նրա ուսին և ասում.

— Ախր ո՞ր մեկի բերանը փակեմ, այ Դահլիճ բիժա...

1954

ՄԵԾ ԴԱՌՆՈՒԹՅՈՒՆ ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Եթե երբևէ գրվելու լինի բյուրոկրատիզմի պատմությունը, ապա դա անպայման կունենա մի հատուկ գլուխ, վերնագիրը՝ «Ստեղծագործական կամ մարտնչող բյուրոկրատիզմ»: Պատմագիրն անշուշտ չի մոռանա այստեղ արժանին հատուցել հանրապետության շաքարի գործարանի դիրեկտորին, որն առաջինը ոտք դրեց բյուրոկրատիզմի զարգացման այդ նոր փուլը:

Բանը պատահեց այսպես:

Սույն թվի հունիսի 24-ին հիշյալ դիրեկտորը ստորագրեց իր հերթական հրամանը, որով քաղաքացի Ե. Վ-ն նշանակվում էր գործարանին պատկանող այգու գյուղատնտես-դիրեկտոր:

Համեստ աշխատանք էր, իհարկե, բայց հասակն առած գյուղատնտեսը չէր կարող չուրախանալ, որ երկար սպասելուց հետո հնարավորություն է ստանում զբաղվելու իր մասնագիտությամբ: Եվ ահա շաքարի գործարանից հեռանալով ամենաքաղցր տրամադրությամբ, հրամանը ծոցագրպանում, նա անմիջապես քայլերն ուղղեց դեպի իրեն վստահված այգին: Գնաց գյուղատնտեսն ու տեսավ, որ այդ այգի կոչվածի գործերն այնքան էլ լավ չեն: Պտղատու և դեկորատիվ ծառերը սկսել էին չորանալ հիվանդություններից: Հարկավոր էր անհապաղ բուժանյութեր ձեռք բերել: Դրա համար էլ նույն օրը նա մի պահանջագիր գրեց ու հանձնեց դիրեկտորի քարտուղարուհուն: Սպասե՛ց, սպասե՛ց, բայց պատասխան չստանալով, գրեց մի պահանջագիր ևս՝ նույն բովանդակությամբ: Սյս անգամ որոշել էր գրածը ներկայացնել անձամբ, թեև սուկալի ատամնացավ ուներ:

Դիրեկտորն անխոս վերցրեց պահանջագիրը, առանց կարդալու մի կողմ դրեց, վարից վեր նայեց գյուղատնտեսի՝ ատամնացավից թթված դեմքին, տարակուսանքով գլուխը տարուբերեց և ասաց.

— Լա՛վ:

Թե ինչ էր նշանակում այդ «լա՛վը», գյուղատնտեսն այնպես էլ էլ չհասկացավ, մինչև որ հաջորդ օրը նրա ձեռքը տվին խնամքով մեքենագրված հետևյալ գրությունը.

Հրաման նո. 285

Ազրոնոմ-դիրեկտոր Ե. Ս. Վ.-ին սույն թվականի հուլիսի 13-ից համարել աշխատանքից ազատված, համաձայն իր դիմումի:

Դիրեկտոր՝ ստորագրություն.

Հիմա ամեն ինչ պարզ էր արդեն: Ուրեմն իր պահանջագիրն, առանց կարդալու, համարել են աշխատանքից ազատվելու դիմում:— Այլպես,— մտածում էր նա,— ինչպե՞ս կարող էին ազատել «համաձայն իր դիմումի», երբ ինքը դիմում չէր գրել:

— Գրել ե՛ս, սիրելիս, գրել ե՛ս,— ասաց նրան դիրեկտորը, երբ նա փորձեց բացատրություն խնդրել:— Հավատա՛ ինձ, գրել ես:

— Իմ գրածը, եղբա՛յր, պահանջագիր էր:

— Դիմում էլ ես գրել:

— Չեմ գրել, եղբա՛յր:

— Գրել ես:

— Որ այդպես է՛ ցույց տվեք, տեսնեմ:

Բայց այստեղ դիրեկտորի համբերության բաժակը, որ այնքան մեծ չէր, լցվեց:

— Ուրեմն ուզում ես ինձ ստուգե՞լ,— բացականչեց նա:—

Դե որ այդպես է՛ գնա: Որտեղ պետք լինի՝ այնտեղ էլ ցույց կտամ: Նո՛ւ, վերջացնենք:

Եվ վերջացրեց:

Ի՞նչ աներ գյուղատնտեսը: Ստիպված եղավ դիմել շրջանային վերադաս օրգաններին: Լուրը հասավ դիրեկտորին, թե նրա նախկին ստորադրյալը հանգիստ չի մնում, ամեն տեղ

բողոքում ու պատմում է, թե իբր շաքարի գործարանի դիրեկտորը գրությունները չի կարդում, պաշտոնական պահանջագիրը աշխատանքից ազատվելու դիմումի տեղ է դնում... և մարդուն ազատում է «համաձայն իր դիմումի»:

Հարկավոր էր մերկացնել զրպարտչին, ուր որ հարկն է ցույց տալ դիմումը, որ նա գրել էր իր սեփական ձեռքով: Այդ խոհերով դիրեկտորը զայրացած բացեց սեղանի դարակը, հանեց գլուղատնտեսից ստացած գրությունը և, ի միջի այլոց, աչքի անցկացրեց: Նայեց, բայց հանկարծ ծուլ եղավ տեղում և սկսեց կարդալ ուշադիր: Կարդաց ու չհավատաց ո՛չ աչքերին, ո՛չ էլ ականոցներին: Այն թղթի կտորը, որ նա մինչև հիմա աշխատանքից ազատվելու դիմում էր կարծել, կրկնությունն էր նույն այն պահանջագրի, որով գլուղատնտեսը առաջին օրը բուժանյութեր էր խնդրել: Տարբերությունն այն էր միայն, որ սկսվում է «կրկին անգամ խնդրում եմ» բառերով:

— Ա՛յ քեզ խայտառակություն: Ինչպե՞ս է պատահել, — մտածում էր նա, — որ ինքը այդ պահանջագիրը դիմում է կարծել: Հանկարծ հիշեց, որ գլուղատնտեսը գրությունը ներկայացրել էր խիստ դառնացած դեմքով, իսկ չէ՞ որ այդպիսի դեմքով սովորաբար աշխատանքից հեռանալու դիմումներ են ներկայացնում: Ահա թե ինչն է եղել թյուրիմացության պատճառը: Նայել է մարդու դեմքին և ավելորդ համարել կարդալ դիմումը: Ի՞նչ անել հիմա, երբ շրջանային վերադաս օրգաններին հայտնի է դառնում այդ պատմությունը:

Դիրեկտորը գլուխը ափերի մեջ առավ և սկսեց մտածել:

Մինչև այստեղ մենք ականատես էինք սովորական բյուրոկրատիզմի դրսևորումներից մեկին և նրա զավեշտական հետեվանքին: Դա մեզ չէր զարմացնի, քանի որ այդպիսի բաներ ուրիշներն էլ են արել:

Ջարմանալին այն էր, ինչ տեղի ունեցավ հետո: Իսկ հետո դիրեկտորի գլխում փայլատակեց հնարագիտության այն հանձարը, որ Հոմերոսը միամտաբար վերագրել է Ոդիսևսին: Այժմ նա համոզված էր, գլուղատնտեսն իսկապես դիմում չի գրել, բայց խոստովանել այդ՝ նշանակում էր ֆեյիետոնի հերոս դառնալ: Հարկավոր էր ապացուցել, որ դիմում եղել է: Եվ գրիչը ձեռքն առնելով, նա կարողացավ թևակոխել բյուրոկրատիզմի այն փուլը, որ մենք անվանեցինք ստեղծագործական և մարտընչող, որի էությունն է՝ այնպիսի հնարներ գտնել սովորական բյուրոկրատիզմից ծագած անախորժությունները ծածկելու համար, որ մի բան էլ ինքը՝ բողոքողը պարտք մնա:

Եվ նա գրեց մի նոր հրաման, որով իր քարտուղարուհուն և գործարանի կադրերի բաժնի վարիչին նկատողություն է անում այն բանի համար, որ նրանք անփույթ գտնվելով... կորցրել են գլուղատնտես Ե. Վ.-ի դիմումը՝ իրեն աշխատանքից ազատելու մասին: Եվ այդպես, մի գնդակով երկու նապաստակ խփեց. նախ ապացուցեց, որ դիմումը կորել է, ուրեմն և գոյություն է ունեցել, իսկ հետո՝ վերադաս օրգաններին ցույց տվեց, թե ինքը որքա՞ն հոգատար է աշխատավորների դիմումների նկատմամբ:

Դեհ, թող գնա հիմա գլուղատնտեսն ու ապացուցի, թե դիմում չի գրել, կամ թե իր հետ վատ են վարվել:

Հարկ կա՞ ավելին ասելու:

Մինչև հիմա գլուղատնտեսը, որին արդեն քչերն են հավատում, շրջում է անգործ ու մտամոլոր, գործարանի կադրերի բաժնի վարիչն ու քարտուղարուհին դեռևս շշմած իրար երես են նայում, իսկ այգում պտղատու և դեկորատիվ ծառերը չորանում են առանց բուժանյութերի:

Իսկ ինչ վերաբերում է շաքարի գործարանի դիրեկտորին, նա

հիմա միանգամայն հանգիստ է, թեն լավ գիտե, որ եթե կորել է մի բան, ապա դա իր խիղճն է: Էհ, փա՛ռք աստծո, դա էլ այնպիսի մի բան է, որ կորցնելու համար հրամանով նկատողություն չեն ստանում:

1957

ԳՆՈՐՈՒՄ (Մանուկների համար)

Դուք գիտե՞ք, թե ինչ բան է գլոբուսը: Երկրագնդի փոքրիկ մոդելն է, որ պատվանդանի վրա պտտվում է մետաղե առանցքի շուրջը: Փայտից կամ ստվարաթղթից պատրաստված մի գունդ է դա, որի վրա մենք աշխարհագրություն ենք սովորում: Այնքան է փոքր երկրագնդից, որ եթե վրան մի ծանձ նստի՝ կարող է ծածկել Լոնդոնի նման մի քաղաք կամ Էվերեստի նման մի սար: Գլոբուսը շատ նման է երկրագնդին: Բայց մի մոռացեք, որ երկրագունդը մի հատ է, ուրիշ երկրագունդ չկա տիեզերքում, իսկ այդ հասարակ ու Էժանագին գլոբուսները թիվ ու համար չունեն:

Սակայն այն գլոբուսը, որի մասին պիտի պատմեմ, բոլորովին այլ կարծիք ուներ իր մասին: Երբ նրան դասարան բերին՝ հպարտացավ ու ասաց.

— Է՛յ, զգույշ վարվեք ինձ հետ: Դուք գիտե՞ք ով եմ ես: Եթե ես չլինեմ, երկրագունդը չի իմանա, թե ինչպես պտտվի: Ամեն ինչ նա ինձնից է սովորում: Խոսքը մեր մեջ, այդ երկրագունդ կոչվածը իմ մեծ ու կլոր արձանն է...

— Հապա ինչու՞ քեզ վրա էլ ամպեր ու կայծեր չկան,— հարցրին երեխաները,— ինչու՞ քեզ վրա էլ ծովերն ու օվկիանոսները չեն ավելոծվում, ինչու՞ հրաբուխներ չեն ժայթքում: Գլոբուսը ծիծաղեց ու ասաց.

— Այդպիսի բաներ կարող են պատահել խեղճ երկրագնդի վրա: Խոսքը մեր մեջ, նա թույլ բնավորություն ունի, և նրանից չեն վախենում: Իսկ ես այդպիսի բաներ չեմ սիրում: Դուք գիտե՞ք ով եմ ես:

— Իսկ ինչու՞ դու այդ ձողի շուրջն ես պտտվում: Չե՞ որ երկրագունդը ոչ մի ձող ու հենարան չունի:

— Դա նրանից է,— ասաց գլոբուսը,— որ երկրագունդը դեռ երեխա է: Այդ ձողը իմ ձեռնափայտն է: Մեծ ու խելոք մարդիկ ձեռնափայտ են ունենում:

Հավատացին երեխաները և սկսեցին հարգանքով վարվել հետը: Իսկ գլոբուսը օրեցօր ավելի էր հպարտանում:

Երբ մեկն ու մեկը ձեռքով ուժեղ խփում էր նրան, որ արագ պտտվեր, նա բարկացած ասում էր.

— Է՛յ, ի՞նչ ես անում: Մոռացե՞լ ես, որ ինչ որ ես անեմ երկրագունդն էլ պիտի անի: Հիմա այս արագությունից խեղճի գլուխը պտույտ կգա, կընկնի ու քթից արյուն կհոսի...

Երբ պտտում էին հակառակ ուղղությամբ, բղավում էր.

— Կանգնեցրե՛ք, կանգնեցրե՛ք ինձ: Հիմա երկրագնդի վրա ցերեկները գիշեր դարձան, գիշերները՝ ցերեկ: Քնածները արթնացան, իսկ արթուն մարդիկ մնացին խավարում: Կանգնեցրե՛ք:

Մի անգամ դաս պատմելիս երեխաներից մեկը անզգուշաբար եղունգով քերծեց գլոբուսի երեսը:

— Վա՛յ, վա՛յ, — ծչաց նա: — Այդ ի՞նչ արիր, հիմա երկրագնդի վրայից տասնյակ քաղաքներ ջնջվեցին:

Հավատաց երեխան, նստեց ու լաց եղավ իր արարքի համար:

Մի օր էլ վաղ առավոտյան գլոբուսն արթնացավ շատ լավ տրամադրությամբ: Արևի ճառագայթներն ընկել էին նրա վրա, և նա փայլում էր հաճույքից:

Ղասարանում ոչ ոք չկար: Բայց լուսամուտից ներս մտավ դպրոցի հավաքարարուհու կատուն, դես վազեց, դեն վազեց, հետո թռավ այն սեղանին, որի վրա ուռած-փքված կանգնած էր գլոբուսը, ու սկսեց նայել նրան:

— Հ՛ը, ի՞նչ ես ապուշի պես նայում, — ասաց գլոբուսը, — ինձ վրա Մկստան անունով երկիր չկա:

Կատուն, իհարկե, աշխարհագրություն չգիտեր և ոչ մի երկիր չէր փնտրում: Ծիշտն ասած, չհասկացավ էլ, թե ինչ է մրթմրթում գլոբուսը: Նրան պարզապես դուր էր գալիս այդ գունդը, որի հետ կարելի էր խաղալ: Կանգնեց երկու ոտքերի վրա և թաթը դրեց գլոբուսի այն տեղին, որտեղ գտնվում էր Սահարա անապատը:

— Զգո՛ւյ՛շ, — ասաց գլոբուսը, զգալով նրա ճանկերի ծակոցները, այդտեղ վագրեր ու առյուծներ են ապրում, կբզկտեն:

Կատուն մոռաց, թաթը դրեց մի ուրիշ երկրի վրա և հանկարծ նկատեց, որ գլոբուսը շարժվում է: Ղա այնքան դուր եկավ նրան, որ սկսեց թաթով անվերջ խփել ու պտտեցնել գունդը: Քանի գնում գլոբուսն այնքան արագ էր պտտվում, իսկ կատուն այնքան տարվեց այդ խաղով, որ մյուս թաթն էլ

դրեց վրան: Գլոբուսը չդիմացավ այդ ծանրությանը, չրխկոցով ընկավ ցած ու երկու կես եղավ:

Իսկ հետո՞: Հետո ներս եկան երեխաները և տեսան գլոբուսի կեսն ընկած է բերանն ի վար, մյուս կեսի մեջ առոք-փառոք քնել է հավաքարարուհու կատուն:

Ծիծաղեցին երեխաները և տեսան, որ գլոբուսը, որն իրեն երկրագնդից խելոք էր համարում, բոլորովին դատարկ է եղել: Մեջը ոչ կրակ կար, ոչ էլ լավա:

Այդպիսի վախճան ունեցավ մեծամիտ գլոբուսը:

1961

ՓԼԱՎԻՑ ՄԻՆՉԵՎ ՄՏՔԵՐԻ ԾԻԼԱ-ՓԼԱԿԸ

Երգիծաբաններն այլևս անելիք չէին ունենա, եթե բոլոր մարդիկ ծիշտ մտածեին և խելացի գործեին: Չցանկանալով այդպիսի վնաս հասցնել երգիծաբանությանը, բանասիրական գիտությունների մի թեկնածու իր «Խորհրդային հայրենասիրության մասին» ծավալուն հոդվածի մեջ, հանրահայտ և անառարկելի մտքերի արանքում, անդրադառնալով ազգային սնապարծությանը, մի կողմ է թողնում դրա իսկապես խարագանելի դրսևորումները և շտապում ի միջի այլոց գրել.

«Մեր օրերում մտավորականության մի որոշ նեղ շրջանում ևս գոյություն ունի այն թյուր ըմբռնումը, թե հայրենասիրությունը իբր սերն է միայն «իր ազգի» ամենայն ազգայինի նկատմամբ, քանզի ամեն մի լավ բան միայն «իրենն է», սկսած քոչարի և վերվերի պարերից և վերջացրած փլավով ու խորովածով»:

Քանի դեռ փլավն ու խորովածը չեն սառել նրա հողվածում, շտապենք ասել, որ գաղափարական կյանքում սա առաջին դեպքն է, երբ փորձ է արվում ազգային սնապարծություն և նացիոնալիզմի ռեգեդիվներ որոնել այնպիսի բաներ սիրելու մեջ, որոնք կապ ունեն մարդու ոչ թե գլխի ու մտքի, այլ բացառապես նրա աղետամոքսային տրակտի գործունեության հետ:

Եթե այդ փորձը խրախուսվի, ապա, անտարակույս, շատ կհեշտանա նացիոնալիստին ինտերնացիոնալիստից զանազանելու գործը: Այն ժամանակ կարիք էլ չի զգացվի, որ գիտությունների որևէ թեկնածու զբաղվի այդ հասարակ գործով, քանի որ ճաշարանի ամեն մի մատուցող ավելի հեշտ կարող է որոշել, թե ո՞վ ինչ ճաշ է սիրում ուտել՝ ֆրանսիական անտրիկոտ, ուկրաինական շչի՞, ռուսական բո՞րջջ, վրացական չախոբելի՞, թե փլավ ու խորոված: Հարցը բարդանում է միայն նրանով, որ փլավ ու խորոված սիրում են նաև ադրբեջանցիները, վրացիները, տաջիկները, ուզբեկները, և, հետևապես, այդ հեղինակի խոհանոցային հետեվորդները կարող են նրանց ճաշն էլ գլխներին հարամ անել: Այն էլ պետք է ասել, որ սրանից հետո նա ստիպված պիտի լինի բոլոր տեսակի ազգային ճաշերն ուտել դոնփակ:

Գալով քոչարիին ու վերվերիին, պետք է խոստովանենք, որ առաջին անգամ ենք լսում, թե այդ պարերով շատ տար-

ված մարդիկ իրենց ոտքերն ու ձեռքերը շարժում են ազգայնական նկատառումներով: Եթե իսկապես այդ այդպես է, ապա ազգային սնապարծության այդ նորահայտ եղանակի դեմ էլ կարելի է պայքարել շատ հեշտ, առանց հողվածի հեղինակի մասնակցության. բավական է միայն, որ մեր նորակառույց բնակարանների առաստաղները մի քանի սանտիմետր էլ ցածր շինվեն, որպեսզի քոչարի ու վերվերի պարողները վեր-վեր թռչելիս հիմնավորապես ջախջախեն իրենց ազգայնամիտ գլուխները: Այդպիսով կարելի է միանգամից ազատվել և՛ գլխից, և՛ գլխաճապից:

Ամենից հետաքրքրականը, սակայն, հողվածի հեղինակի հետևյալ հայտանգործությունն է. «Բանը (այսինքն ազգային սնապարծությունը և սահմանափակությունը Ս. Վ.) այնտեղ է հասնում,— գրում է նա,— որ ոմանք ձգտում են վերականգնել հագուստների այն ձևերը, որ մարդիկ հագել են, ասենք, Տիգրանի կամ թե չէ Խորենացու ժամանակ»:

Այդ նախադասության մեջ ուշագրավ է միջանկյալ «ասենք» բառը, որտեղից երևում է, որ ցանկանալու դեպքում նա կարող էր ուրիշ բան էլ ասել, կարող էր ասել, օրինակ, թե «ոմանք ձգտում են վերանակզնել, ասենք, Ադամի և Եվայի հագուստները»: Իզուր հենց այդպես չի ասել, քանի որ դա գոնե խելքի մոտ բան է և ամեն մարդ ի վիճակի է այդ ձգտումն իրագործել պատահած բաղնիքում կամ պլլածում: Իսկ Տիգրան թագավորի և Մովսես Խորենացու ժամանակների հագուստները վերականգնելու ձգտում ունենալը շատ է անհավանական, թեկուզ հենց այն պատճառով, որ, ինչպես հայտնի է, մեր թվականությունից մեկ դար առաջ կամ 5-րդ դարում մոդաների ժուռնալներ չեն հրատարակվել, ուստի և ոչ ոք հողվածի հեղինակի հետ միասին չէր կարող որոշել, թե ինչպես են հագնվել այդ ժամանակներում:

Ովքե՞ր են հապա նրա ասած «ոմանք», որ այդքան խելագարավայել ձգտում են դրսևորում: Ո՞ր գրավոր կամ քանակավոր աղբյուրից է քաղել նա այդ սենսացիոն նորությունը, Երևանի ո՞ր փողոցում և կամ Հայաստանի ո՞ր հոգեբուժարանում է տեսել Տիգրան թագավորի կամ Խորենացու հագուստներով շրջող մարդիկ: Չենք կարծում, թե նրան թյուրիմացության մեջ են գցել մեր ստիլագների հագուստները, քանի որ դրանք միջազգային բնույթ են կրում: Ուրեմն ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ նա, չգտնելով հարմար հակառակորդ, բայց ունենալով մարտնչելու անզուսպ ցանկություն, ստիպված է եղել պայքարի դուրս գալ իր սեփական հերյուրանքի դեմ, մեզ հնարավորություն տալով վերհիշել նշանավոր որսորդ տարասկոնցի Տարտարենին, որը որս չգտնելիս՝ վեր էր նետում իր գլխարկը և նրա վրա կրակում:

Իր հողվածի վերջում, իրավամբ կշտամբելով «որոշ» գրողների, որոնք «իրենց ստեղծագործության մեջ ավելի շատ դիմում են ոգեշնչման անցյալ աղբյուրներին, քան ներկա ժամանակին», նա շարունակում է խրատաբար. «Ներկայիս սերնդին մոտ են ոչ միայն Սայաթ-Նովայի և մյուս գուսանների երգերը, այլև «մտածող» հաշվիչ մեքենաները», որ ստեղծում են հայ գիտնականները Մոսկվայի, Լենինգրադի, Թիբիլիսիի և այլ գիտնականների համագործակցությամբ»:

Դա, իհարկե, միևնույնն է, որ մեկը վեր կենա և գիտնականի լուրջ տոնով ասի, թե այսինչի սրտին մոտ է ոչ միայն Մատենադարանը, այլև մոտորավոր հեծանիվը:

Թվում էր, թե Սայաթ-Նովայի և մյուս գուսանների անունները անտեղի տալուց հետո, նա գոնե տրամաբանության թելադրանքով պիտի ասեր, թե ներկայիս սերնդի սրտին մոտ են ոչ միայն նրանց, այլև մեր ժամանակի գրողների ու բա-

նաստեղծների գործերը: Բայց դա ծիծաղելի չէր լինի, և այդ պատճառով նա մեր հին գուսանների երգերի դիմաց, որպես «ոգեշնչման ներկայիս աղբյուրներ» շարել է մտածող հաշվիչ մեքենաները: Կարծում ենք, որ ոչ ոքի չի ոգեշնչի ժողովրդի հոգևոր կուլտուրայի և խորհրդային տեխնիկայի նվաճումների այդ զավեշտական նույնացումն ու հակադրությունը:

Հաշվիչ մեքենաները, անշուշտ, շատ լավ բաներ են, և մենք կցանկանայինք, որ դրանք այնքան կատարելագործվեին, որ կարողանային հաշվել, թե գիտությունների մի թեկնածու քանի անհեթեթություն կարող է տեղավորել լրագրային մի հողվածի մեջ: Բայց որքան էլ նրանք կատարելագործվեն և որքան էլ կոչվեն մտածող, ոչ ոքի չեն կարող ազատել ճիշտ մտածելու պարտականությունից, մանավանդ գաղափարական լուրջ հարցերի մասին գրելիս:

1962

ԱՆՈՒՂՂԵԼԻ ՈՒՂՂՈՒՄ

(Բավական հնացած, բայց շարունակ կրկնվող դեպք)

Արթիկի շրջանի Հնաբերդ գյուղի բնակիչ Արշակ Պողոսյանը Երևանից հեռագիր ստացավ: Ոչ թե սովորական, այլ

կայծակ հեռագիր: Եվ ձեռքն առնելով վերոհիշյալ հեռագրա-
կայծակը, հասցեատերը կարդալուն պես կայծակնահար ու շշմած
փուլ եկավ աթոռի վրա: Այնուհետև հեռագիրը վերցրեց նրա
կինը և կարդաց. «Գեյիմը մեռել է շտապ մեկնեցեք Արա-
մայիս»:

Հարցը պարզ էր: Այդ Գեյիմը, այսինքն Արշակ Պողոս-
յանի քրոջ որդին, որ մեռնելուց առաջ հաջողությամբ սովո-
րում էր Երևանի Աբովյանի անվան մանկավարժական ինստի-
տուտում, առանց որևէ պատճառի մեռել էր և այժմ սպասում
էր նրանց շտապ մեկնելուն: Ի՞նչ կարող էին անել: Մեկնեցին:
Գնացք նստեցին ոչ միայն հանգուցյալի քեռին ու քեռակինը,
այլև՝ չորս մորաքույր ու երկու հորաքույր, ընդամենը 8 հոգի
և, իրենց բոլոր թաշկինակները թացացնելով, չորացնելով,
հասան Երևան:

Այստեղ տրոլեյբուսից իջան մանկավարժական ինստիտու-
տի հանրակացարանի մուտքի առջև: Մոտենալով այդ շենքին,
ուսանողի հարազատները լաց լինելու բնական կարիք զգացին:
Սակայն, դեռ չէին հանել թաշկինակները, երբ հանկարծ...
հորաքույրերը լեղապատառ ձչացին ու ընկան մորաքույրերի
վրա, իսկ Արշակ Պողոսյանը հազիվ կարողացավ ասել.

— Կնի՛կ, ես կգժվեմ...

Եվ, իսկապես, գժվելու լուրջ հիմքեր կային: Պատկերաց-
րեք. մուտքի աստիճանների վրա կանգնած, հարյուր տոկոսով
ողջ և առողջ, առանց հաշվի առնելու հեռագրով ծանուցված
իր վիճակը, մի քանի ուսանողուհիների հետ խոսում ու ծիծա-
ղում էր ինքը՝ հանգուցյալ Գեյիմը: Պակաս չապշեց և վերջինս,
որն ընդառաջ վազեց հարազատներին և հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, քեռի:

Սակայն, ինչպես գիտենք, քեռին չէր եկել նրա հարցերին

պատասխանելու և հուզմունքից հազիվ կարողացավ նրա
ձեռքի մեջ դնել հեռագրական կայծակը: Եվ քանի որ այդ-
պիսի կայծակները չեն կորցնում իրենց էլեկտրական լիցքը,
ապա մեր ուսանողն զգաց, որ կարդալու ընթացքում մազերը
բիզ-բիզ են կանգնում:

— Սա թյուրիմացություն կլինի, քեռի,— ասաց նա:—
Հ՞ը, խելքդ ի՞նչ է կտրում:

Սակայն քեռու խելքն արդեն ընդունակ չէր որևէ բան
կտրելու: Մտածեց ու ասաց.

— Ի՞նչ ասեմ, որդի, իմ կարծիքով ողջ պիտի լինես, բայց
ախր հորեղբայր Արամայիսն էլ սուտ բան չէր գրի:

Տեսնելով, որ քեռին մասամբ է հավատում իր կենդանի
լինելուն, մեր ուսանողն առաջարկեց հարցը վերջնականապես
պարզել փոստ-հեռագրատանը և առաջ ընկավ, գլխավորելով
իր հուղարկավորների թափորը:

Կենտրոնական փոստ-հեռագրատանը ժպտերես աշխա-
տակցուհին վերցրեց հեռագիրը, շուտ ու մուտ տվեց, կարդաց
և հարցրեց.

— Ի՞նչ է, նո՞րից չեկան, էլի՞ կրկնենք:

— Ո՞վ չեկավ, ի՞նչը կրկնենք,— զարմացավ ուսանողը:

— Ո՞նց թե: Չլինի թե հենց դուք եք մեռելի բարեկամները:
Այ թե մեռել եք հարգում, հա: Երեք օր է, ինչ թաղել են այդ
Գեյիմին, իսկ դուք նոր եք բարեհաճում գալ: Երևի արդարա-
նալու համար ուզում եք մեղքը մեզ վրա գցել և ապացուցել,
թե հեռագիրն ուշ եք ստացել:

Գեյիմն ու հարազատները զարմացած իրար երես նայեցին:

— Ինչպե՞ս թե թաղել են,— զայրացավ ուսանողը,—
ինչպե՞ս կարող էին թաղել, երբ այդ մեռելը առայժմ ես եմ...

— Ի՞նչ,— ծուլ եկավ աշխատակցուհին, որն իր կյանքում

այդքան բարկացած մեռել չէր տեսել:— Սպասեցեք, դուք մեռելուց առաջ որտեղ էիք ապրում:— Սպասեցեք:

— Հոկտեմբերյան պողոտա համար 3:

— Իսկ այս Գեյիմը մեռել է Խորհուրդների փողոցի հ. 5 տանը: Բանից դուրս է գալիս՝ մեռնողն ուրիշ մարդ է եղել, իսկ դուք կենդանի եք: Բայց ինչպե՞ս է պատահել: Մի րոպե սպասեցեք:

Այստեղ աշխատակցուհին դարակից հանեց կայծակ-հեռագրի ձեռագիր տեքստը, պարզվեց, թե ինչպես է պատահել, որ ուսանողը կենդանի է մնացել: Իսկապես, Խորհուրդների փողոցի հ.- 5 տանը մեռել էր Գեյիմ Հովհաննիսյանը: Վերջինիս հարազատներին ուղարկված կայծակ-հեռագիրը ճանապարհին փոխել է միտքը և, Ադիսի շրջանի Քարաբերդ գյուղի բնակիչ Աշիկ Պապիկյանի ձեռքն ընկնելու փոխարեն, մտել է մի ուրիշ շրջանի՝ Արթիկի փոստի բաժանմունքը: Այստեղ էլ, տեսնելով, որ Երևանում աղավաղել են շրջանի անունը, այսինքն՝ Ադիսը դարձրել են Արթիկ, և քանի որ շրջանում ոչ Քարաբերդ գյուղ կա, ոչ էլ այդտեղ ապրող Աշիկ Պապյան, ուղղել են հասցեն, Քարաբերդը դարձրել՝ Հնաբերդ Աշիկ Պապայանը՝ Արշակ Պողոսյան, որն իրոք ապրում է Հնաբերդում և իսկապես Գեյիմ անունով քրոջ որդի ունի, որը կարող էր մեռնել ինչպես բոլոր մահկանացուները: Եվ այդ աղավաղումն ուղղելու հետևանքով Խորհուրդների փողոցի հ. 5 տանը մեռած Գեյիմը թաղվել է առանց հարազատների ներկայության, իսկ մեռնելու ոչ մի տրամադրություն չունեցող Գեյիմը կենդանի—կենդանի լսեց իր թաղմանը եկած հարազատների լացուկոժը: Իսկ թե հանրապետության որ շրջաններում էին փայլատակել այդ հեռագիր-կայծակի կրկնությունները, հնարավոր չէրապ պարզել:

Մի խոսքով, աչքնե՛րս լույս: Մեր ֆելիետոնների արդյունքն այն եղավ, որ հիմա հեռագրական աղավաղումներին ավելացան դրանց ուղղումները, որոնք նոր էջ են բացում հեռագրի պատմության, ինչպես և երգիծաբանության մեջ: Սրանից հետո ավելի շատ շանսեր կան, որ մոլորված հեռագրական կայծակները կարող են թակել յուրաքանչյուր դուռ, եթե միայն այդ դռան ետևում մարդ է ապրում և ունի այնպիսի ազգականներ, որոնք վերջ ի վերջո պիտի մեռնեն:

Մինչ փոստ-հեռագրատանը կմտածեն այդ մասին, մենք հանգստություն ցանկանանք Գեյիմներից մեկի ոսկորներին, իսկ մյուս Գեյիմին ցանկանք հաջողություն ուսման բնագավառում, թեև ասում են, որ Արթիկի շրջանային թերթում արդեն մի խոր ցավակցություն է տպվել նրա վաղաժամ մահվան առթիվ:

1961

ԲԱՐՁՐԱՎՈՒՆՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էջմիածնի շրջանի Սամաղար գյուղի կուլտուրի վարչության նախագահը մայիսի 13-ին որոշեց Էլեկտրիֆիկացիայի ենթարկել նաև իր հեղինակությունը բարձրացնելու դժվարին գործը:

Այդ օրը գյուղի ակումբում պիտի ցուցադրվեր «Բեռլինի

անկումը» կինոնկարի երկրորդ սերիան, որին կոլտնտեսականները սպասում էին անհամբեր: Երեկոյան ժամը 8-ին դահլիճը լեփ-լեցուն էր Սամաղարի, ինչպես նաև հարևան գյուղերից եկած կոլտնտեսականներով, սակայն նույնիսկ ժամը 10-ին սեանսը չէր սկսվել: Տեղական ժամանակով ժամը 10-ն անց 16 ռուպեին, երբ դահլիճ մտավ նաև ինքը՝ կոլտնտեսության նախագահը, և երբ կինոմեխանիկը, հանդիսականների ցնծալից բացականչությունների տակ, վերջապես, հանգրեց դահլիճի լույսերը, հենց այդ ժամանակ, հրետանու համազարկի փոխարեն, որոտաց վերոհիշյալ նախագահի ձայնը:

— Վառե՛ք լույսերը: Խայտառակություն... .

Վառեցին: Եվ սկսեցին էլեկտրական լույսով փնտրել խայտառակությունը: Սակայն չտեսան ոչ մի այդպիսի բան, բացի իրենց նախագահից, որը ձայնը գլուխը գցած՝ պահանջում էր դահլիճից հեռացնել հարևան գյուղերից եկած կոլտնտեսականներին: Տեսնելով, որ իսկական խայտառակությունը հենց դա է, որ կա, տեղական կուսակցականներից մի քանիսը և գյուղխորհրդի նախագահը փորձեցին խելքի բերել կոլտնտեսության վարչության նախագահին, բացատրելով, թե հյուրերի ներկայությունը ոչնչով չի սպառնում Սամաղարի անվտանգությանը, թե իրենք էլ հաճախ կինոնկար դիտելու համար նրանց գյուղերն են գնում, թե, վերջապես, մարդիկ տոմս են գնել և այլն:

Սակայն իզուր:

— Անամոթի պես էլ առաջին շարքերում են նստել, — գոռում էր նախագահը, — իսկ նրանց պատճառով իմ պատճառավոր կինը և իմ կոլտնտեսականները նստել են հետևում:

Իզուր էին նրան բացատրում, թե կինոյի դահլիճը միակ տեղն է մեզ մոտ, որ հետ մնալն ավելի լավ է, քան առաջ գնալը:

— Ես միշտ առաջավոր եմ եղել, առաջավոր էլ պիտի մեռնեմ, — պատասխանեց կոլտնտեսության նախագահը և, որպեսզի իր առաջավորությունը զիջած չլինի ոչ ոքի, ներկայացրեց հետևյալ ուլտիմատումը. կամ դահլիճում պիտի մնան միայն զտարյուն սամաղարցիները, կամ ինքը կարգելի նկարի ցուցադրումը, քանի որ էլեկտրական էներգիայի վարձը վճարում է կոլտնտեսության վարչությունը:

Բայց քանի որ ոչ ոք չցանկացավ ենթարկվել այդ կարգադրությանը, նա իսկապես արգելեց նկարի ցուցադրումը և հաղթական քայլով վերադարձավ գրասենյակ: Հագիվ էր այստեղ հանգստացրել իր ջղերից մի քանիսը, երբ հանկարծ լուր բերին, թե գյուղխորհրդի նախագահը, հակառակ նրա կարգադրության, մեխանիկին ստիպել է սկսել սեանսը, թե վեց և կես մաս արդեն ցուցադրել են, մնում է ընդամենը մեկ ու կես մաս:

— Ի՛նչ, ուրեմն ուզում են ավտարիտե՛տս գցել, — վեր թռավ տեղից նախագահը և դառնալով մոնտյորին, հրամայեց շնչասպառ. — Ադա, քեզ տեսնեմ, թո՛հ'ր:

Մոնտյորն էլ իր նախագահի գցված հեղինակությունը բարձրացնելու համար այնպիսի արագությամբ թռավ ու անջատեց էլեկտրահաղորդիչ լարը, որ անմիջապես ո՛չ միայն կինոյի դահլիճը, այլև Սամաղարի բոլոր տներն ու փողոցները թաղվեցին խավարի մեջ, չտեսնված բավականություն պատճառելով ինչպես կոլտնտեսության նախագահին, այնպես էլ տեղական շղջիկներին: Եվ այսպիսով, կոլտնտեսականները չկարողացան տեսնել «Բեռլինի անկումը» կինոնկարի վերջին մասը: Դրա հետ միասին, նրանք խավարի մեջ մնացին այնքան ժամանակ, մինչև որ արեգակը, առանց հարցը նախա-

գահի հետ համաձայնեցնելու, հանդես եկավ ու լուսավորեց մեր կիսագունդը և նրա վրա գտնվող Սամաղար գյուղը...

Սակայն վա՛յ Սամաղարին, եթե կոլտնտեսության նախագահի կազմակերպած նոր լուսաքողարկումները թույլ չտան որպեսզի շրջանի ղեկավարները տեսնեն և գնահատեն նրա արարքը:

1962

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՆԴԵՐՉՅԱԼ ԱԾԽԱՐՀԻՑ

Եթե հանդերձայլ աշխարհն իսկապես գոյություն ունենար, ապա, մեր հաստատ համոզմամբ, այնտեղից պիտի ստացվեր մի այսպիսի բաց նամակ, որը հրապարակում ենք որոշ կրճատումներով.

ՀԱՅԿ. ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐԵՄԻԱՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Մեծապատի՛վ հրատարակիչներ.

Խնդրում եմ չվախենաք, քանզի ձեզ գրում է մի մարդ, որ դեռևս 1937 թվին մեռել է բնական մահով, և որի մահը վավերացված է թաղման բյուրոյի վարիչի ստորագրությամբ ու կլոր կնիքով:

Մեռնելուցս և խորապես թաղվելուցս մի քանի ամիս հետո, ինչպես իմացա, այդտեղ, ձեր աշխարհում, հանդիսավորապես նշվել է վրաց հանճարեղ բանաստեղծ Շոթա Ռուսթավելու պոեմի գոյության 750-ամյակը: Այդ առիթով Հայպետհրատը հրատարակել է հիշյալ պոեմի հայերեն լիակատար թարգմանությունը, որը կատարել էի ես՝ հանդերձյալ աշխարհի տեղափոխվելուցս առաջ: Ասում են, որ լավ էի թարգմանել: Համենայն դեպս, ոչ այլ ոք, եթե ոչ մեր դրախտաբնակ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը դեռևս այն ժամանակ, ուղիղ երեսուն տարի առաջ, ԽՍՀՄ գրողների ռուսթավելյան պլենումում այդ մասին բարձրաձայն ասել է. «Հիմա ձյունապատ Հայաստանում մեր խանդավառ երիտասարդները շրջում են գյուղերն ու քաղաքները՝ ծանոթացնելու մասսաներին Շոթայի անմահ գործին՝ տարածելով մարգարտաշար «Վազրենավորը»-ը՝ վերջերս մահացած հմուտ վրացագետ և բանաստեղծ Գեորգ Ասատուրի գեղեցիկ թարգմանությամբ»:

Պետք է ասեմ, մեծարգո՛ ընկերներ, որ այս աշխարհում էլ լավ կարծիք կա թարգմանությանս մասին: Այդ է պատճառը, որ ես՝ ձեր խոնարհ ծառա Գեորգ Ասատուրս, այստեղ իրավունք եմ ստացել գրանցվելու Դրախտի ամենաբարեկարգ թաղերից մեկում, որը կոչվում է Չախափնյակ: Ապրում եմ առաջնակարգ մեռյալ թարգմանիչներին ու բանաստեղծներին հատկացված մի շենքում, ուր, փա՛ռք աստծո, և՛ ջեռուցումն է կանոնավոր, և՛ ջուրն ամբողջ օրը չի կտրվում, և՛ ոտքի կանգնելիս գլուխս չի դիպչում առաստաղին: Այդպիսի պայմանների մեջ եմ ես հիմա, սակայն, հնարավոր է, որ շուտով զրկվեմ

այդ երանությունից և ուղարկվեմ դժոխք կամ, լավագույն դեպքում, Քավարան: Ո՞ր մեղքիս համար,— կհարցնեք դուք: Բանն այն է, սիրելիներս, որ այստեղ ստացվել և ձեռքից ձեռք է անցնում հիշյալ թարգմանությանս այն նոր՝ հոբելյանական հրատարակությունը, որ դուք՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչության մեծապատիվ ղեկավարներդ, հրապարակ եք հանել անցյալ տարվա վերջերին՝ Շոթա Ռուսթավելու ծննդյան 800 ամյակի առթիվ, «Ընձենավոր» նոր վերնագրով: Դրախտահայ և դժոխքահայ ընթերցողները, որ ժամանակին ծանոթ են եղել թարգմանությանս 1937 թվի հրատարակությանը, այժմ կարդում են ձեր հրատարակածը և քիչ է մնում զարմանքից վերստին մեռնեն: Կարդալով և բացարձակապես ոչինչ չհասկանալով, նրանցից ոմանք պնդում են, թե ես, մահկանացուներին և անմահներին տանջելու չար նպատակով, հայերեն թարգմանությունս այս աշխարհում վեր եմ ածել դժոխերենի և Դժոխհրատին հանձնելու փոխարեն ուղարկել եմ ձեզ, ուստի և արժանի եմ վարչական կարգով Դրախտից վտարվելու: Ի՞նչ կարող եմ պատասխանել այդպես կարծողներին, երբ, հիրավի, բացում եմ ձեր տպած գիրքը և, օրինակ, 45-րդ էջում կարդում.

Մինչ կկոցի աչքը մեկն իր, մինչ թարթիչներն իրար հարեն—
Կանհետանամ ես նրանից, ուր ինձ տհաճ ես համարեմ.
Իմ դեմ փորձի՞ ոք չի եղել, այն թուրքերից երեք բացի,—
Տխուր զարդեց հանդանակ, և ես՝ նրանց վճարեցի:

Բան հասկացա՞ք հարգելի ընկերներ: Ձեմ կարծում, քանզի այստեղ բան չհասկացան նույնիսկ սատանայական գիտությունների թեկնածուներն ու դոկտորները: Բացեք հիմա թարգմանությանս հին հրատարակությունը և գոնե այժմ, գիրքը տպա-

գրելուց և վաճառքի հանելուց հետո, նեղություն քաշեցեք կարդալ, թե ահա ինչ եմ գրած եղել ես դրա փոխարեն.

Մի ակնթարթ մարդ չի հասցնի աչքի կոպերն իրար խփել,
Կանհետանամ ես նրանից, ում տեսքը ինձ դուր չի եկել.
Այն թուրքերից բացի ոչ ոք չի խիզախել դեռևս իմ դեմ:
Սակայն նրանց խիզախության ելքն էր տխուր, տեսար արդեն:

Հիմա կարծում եմ, հասկացաք: Դե, ուրեմն, ասացեք, ինչու՞ այսքան հստակն ու հասկանալին այժմ, երեսուն տարի անց դարձել է այնքան պղտոր ու անհասկանալի: Ո՞ր խելոքն է կատարել այդպիսի, թող թույլ տրվի ասել, փոփոխություն և ապա իր արածը վերագրել ինձ: Այդ հարցերին, դուք, իհարկե, կարող եք չպատասխանել, քանզի ես պատասխանը գտա գրքի վերջում, ուր կարդացի ձեր նոր հրատարակության նոր խմբագրի մեծածավալ և նույնքան մեծամիտ հոդվածը:

Հիշյալ խմբագիրը, անունը Պարույր Մուրադյան, իր հոդվածի սկզբում գովել է ինձ, թարգմանությունս համարել եղածների մեջ լավագույնը: Ծառ և շատ շնորհակալ եմ: Այնուհետև դրվատանքի խոսք է ասել թարգմանությանս առաջին հրատարակության խմբագիրների՝ բանաստեղծներ Ն. Ջարյանի և Գ. Սարյանի կատարած լուրջ աշխատանքի մասին: Այդ էլ է լավ: Սակայն գովելուց հետո գլխի է ընկել, որ ընթերցողները բնականաբար հարց կտան. եթե թարգմանությունն այդքան լավն է, եթե իր ժամանակին այն խմբագրել են երկու նշանավոր բանաստեղծներ, ապա ինչու՞ ինքը, որ կյանքում ոչ մի չափածո տող չի գրել, հիմա մեջ է ընկել ու դարձել չափածո թարգմանության վերախմբագիր: Մտածել է ու իր արածը հիմնավորելու համար պատճառ է բռնել, գիտե՞ք ինչը... իմ ծերությունը: Եթե չեք հավատում, խնդրեմ կարդացեք. «Իհար-

կե,— գրել է նա,— թերության շեմին հասած թարգմանիչը այլևս չէր կարող ըստ ամենայնի հոգալու բանաստեղծական պատկերավորությունը, ոչ հազվադեպ գործածվող հնչյունական ներդաշնակությունը (լեզվի՞ն նայեցեք, ի սեր աստծո, Գ. Ա.), նույնանուն ու նույնանիշ բառերի (!!!) ընտրությունը և այլն»: Այդ բազմանշանակ «և այլնից» հետո խոսելով այն մասին, որ ես թարգմանությունս համեմատած եմ եղել բնագիր ամենավերջին ծշտված տեքստի հետ, նա դարձյալ բաց չի թողել թերության օձիքը: «Ինքնին հասկանալի է,— շարունակել է նա,— որ ավելի քան 6000 տողը բնագրի հետ համեմատելը ամիսների աշխատանք է, մանավանդ թերունի թարգմանչի համար, և քիչ ժամանակ է մնացել նրա (ու՛մ, ի՛մ թե բնագրի Գ. Ա.) բարեհնչյունությունը հոգալուն»:

Թերությունը, իհարկե, լավ բան չէ: Բայց ես մինչև հիմա կարծում էի, թե թերությունը խանգարիչ հանգամանք կարող է լինել ֆուտբոլիստի համար: Բայց, երևի կարծելով, որ թերությունից թուլանում են թարգմանչի ոչ միայն ոտքերը, այլև խելքն ու բանականությունը, վերոհիշյալ Պ. Մուրադյանը, ինչպես տեսնում եք, իմ փոխարեն ինքն է դաշտ մտել երիտասարդական ավյունով, ջանալով, ինչպես ինքն է ասում, իր կաղ հայերենով «հոգալ հանգի ու վանկի կաղումները, պատկերավորությունն ու հնչեղությունը»:

Քանի որ դուք քիչ առաջ մի պատառ ճաշակեցիք այդ հոգացողությունից, եկեք հիմա, ավելի շիկացած հետաքրքրությամբ, նորից կողք-կողքի դրեք թարգմանությանս հին և նոր հրատարկությունները և տող առ տող համեմատելով, տեսեք, թե ինչպես եմ թարգմանած եղել ես, և ինչ է արել նա: Ահավասիկ.

ԵՍ.— Մարմինս շատ է տառապել, աղոթեցեք՝ խնդա հոգիս,

Երբ որ վախճան կգա ընտիր ու բազմերանգ չափածոյիս:

ՆԱ.— Մարմինս շատ է տառապել, աղոթեցեք՝ խինդ տա հոգուս,

Ջի ներբողյան երիս երանգ-ողջ երգով է առել ի ուս: (Էջ 4):

ԵՍ.— Ես, ոուսթավցիս, իմ արվեստով նրա՛ համար պիտի ծգնեմ,

Որին բանակն է հնազանդում, նրա՛ համար պիտի մեռնեմ...

ՆԱ.— Ռուսթվելիս ես՝ տերը տեղիս, բան պիտի ասեմ նրան պատշաճ,—

Հնազանդ է ում գունդ գորաց— ես խենթ ի նա, ինա մեռած... (Էջ 4):

ԵՍ.— Նա իր գաղտնիքը ոչ ոքի չպետք է տա թուլաբերան,

Վատ չխորի լարի մասին ու վարկաբեկ չանի նրան...

ՆԱ.— Սիրահարը խորհուրդ հոգու հայտ չի առնի ոչ ուր երբեք,

«Վայ» չի խորի վատաբարո, չանի լարին նա վարկաբեկ... (Էջ 6):

ԵՍ.— Ոտանավորը հորինելը իմաստության մի մասն է խոր,

Երկնային գործ երկնի համար և լսողին շատ կարևոր...

ՆԱ.— Բանաստեղծելն նախուստ ի վեր իմաստության բաժինն է մի,

Աստվածային, աստվածահաճո և լսողաց օգուտ բազմի... (Էջ 6):

ԵՍ.— Նա գուսան չէ, ում բերանից մեկ-երկու հանգ հանկարծ թռչի

Եվ պարծենա, որ այսուհետ գուսանների հետ կմրցի.

Մի տող մի կերպ, մի այլ տողի հետ կապելով խեղճ հանգերով:

Պղտելով, որ լավ հորինեց և ջորու պես համառելով:

ՆԱ.— Նա չէ երգիչ, ղյմ բերանից մեկ-երկու հանգ հանկարծ թռչի,

Չպարծենա, թե արժանի բանաստեղծաց հետ կմրցի,

Կամ թե ասի մեկ-երկու բան, այն էլ՝ անդեպ ու նոսրահանգ,

Սակայն ասի. «Իմն առավել» ու համառ գրաստագանգ: (Էջ 5):

Չուզունե գանգ պետք է ունենալ հենց միայն այդ «գրաստագանգ»-ին դիմանալու համար: Եվ եթե դուք, ո՛վ իմ հրատարակիչներ, կարողացաք դիմանալ, իմացած եղեք, որ այդ օրինակները ես քաղեցի միայն նախերգանքից, որը կարող էի արտագրել ամբողջովին, քանզի ադետեղ չկա մի տուն, որ ձեր Պ. Մուրադյանը հիմնավորապես քանդած չլիներ: Դա տնա-

քանդության նախերգանքն է միայն: Հիմա տեսե՞ք ինչեր է արել բուն պոեմի թարգմանության մեջ: Խնդրեմ:

ԵՍ.— Ընկեր-տղերք հրավիրեցի,— ես նրանց մեջ՝ նոճու նման,—
Եվ սարքեցի մեծ կերուխում, որ իմ վիշտը մոռանամ:

ՆԱ.— Կանչել տվի ընկերներին, մեկ նստեցինք-հավիտե նոցուն,
Պատիժ ու ցավ մոռանալու՝ ես կերուխում արի լեցուն: (Էջ 55)

ԵՍ.— Պարաններից հանդես եկան, գորքը տարբեր ձևեր առավ,
Երկու թևով առաջ անցավ, բայց՝ աստուծով՝ բան էլ չարավ:

ՆԱ.— Պարաններից հանդես եկան, այս ու այն կողմ անցան մաս-մաս,
Եվ կազմեցին գորք բազմագունդ, թեև, աստված՝ կամ անվնաս:
(Էջ 70)

ԵՍ.— Պառկած էր նա անշարժ, անշունչ, ինչպես մահվան դռանը հասած,
Եվ երևում էին կրծքին գարկի երկու հետքեր կապած:

ՆԱ.— Պառկած էր նա անշարժ, անշունչ ինչպես մահվան սեմին հասած
Կրծքին երկտեղ հետքեր կապույտ, վալող սրտին ափով հեսած...
(Էջ 79):

ԵՍ.— Ինձ հրամայեց.— «Կնոջ համար գերադաս է վարմունքը մեղմ,
Մեծ արյան մեջ քեզ չեմ խառնի, չեմ թույլ տա արյուն հեղել...»

ՆԱ.— Հրամայեց. «Կինը՝ կին պիտ, գործը՝ նույնքան և կանացի,
Անկարող եմ՝ արյուն հեղես, և կամ միջնեմ՝ թշնամածի...»

ԵՍ.— Ես գարմացա՞ ինչպե՞ս սիրեց, կամ ինչպե՞ս սիրտ արեց ասել,
Բայց եթե ուշք չդարձնեի, նա ինձ անկիրթ կհամարեր...

ՆԱ.— Ջարմանքս այս էր. «Ինչպե՞ս սիրեց կամ սիրտ արեց ինձ պատ-
մելու,

Անհետամուտ հարկ չէ լինել՝ անմիտ մարդ է վկայելու...» (Էջ 53):

ԵՍ.— «Ավա՛ղ,— ասում էր,— կբացվի ծախորդությունս ողբական,
Էլ վարկս չի վերականգնի, էլ չեմ ծնվի երկրորդ անգամ:

ՆԱ.— «Վալ թե իրքս հայտնի դառնա,— վախվախում էր նաև սրան,—
Վատը լավի ոչ չի փոխի,— ոչ չի ծնվի նորից անգամ»: (Էջ 30):

ԵՍ.— Իրենց շնորհը հավասար ծյունի նման էին սփռում.
Որբին, այրուն հարստացրին, իսկ մուրացիկն էլ չէր մուրում...

ՆԱ.— Միշտ հավասար՝ շնորհն իրենց սփռում էին ծյունի նման—

Որբին, այրուն հարուստ արին, մուրացիկ էլ չկար մուրում...
(Էջ 249):

ԵՍ.— Մարդ հղեցի ես Նատաթ իմ փոխարեն այս նամակով,
«Հնդկաստանի մեծ արքայի աստվածային հզոր կամքով,
Ամեն մի շունչ հավատարիմ ապրում է կուշտ և բավական,
Իսկ ով նրան չի հնազանդում, թող մեղադրի ինքը իրան:

ՆԱ.— Մարդ հղեցի ես Չին-Մաչին, իմ փոխարեն՝ այս նամակով.
«Արքան հնդկաց իրոք կեցցե՛ աստժո պես հզոր գորով,
Հավատարիմ ով կա նրան՝ կհագենա սոված ամեն,
Իսկ ով նրան չէ հնազանդ՝ մեղադրի է նա ինքն իրեն»: (Էջ 59):

Բավական է:

Այսպիսի ավերվածություն չէր կարող գործել ոչ մի երկրա-
շարժ: Քիչ տներ են փրկվել այդ խմբագրական արհավիրքից:
Ամենուրեք, ուր նայում ես, առաջին էջից սկսած մինչև վերջինը
մեկը մյուսից անհեթեթ բառակույտեր, բանաստեղծական տների
փլատակներ, որոնց մեջ այլևս չկա շունչ ու կենդանություն,
բանաստեղծություն ու արվեստ, միտք ու տրամաբանություն
և, մանավանդ, հայոց լեզու: Վերջինիս փոխարեն ձեր քահել
խմբագիրը գործ է ածել մի բոլորովին նոր, դեռևս անանուն
լեզու, որը, ինչպես տեսաք, ո՛չ քերականություն ունի, ո՛չ
գրաբար, ոչ էլ որևէաբար:

Չգիտեմ որտեղից սովորած լինելով այդ աննորմալ լեզուն,
նա թարգմանությանս մեջ չի հանդուրժել առհասարակ ոչ մի
նորմալ բան: Եթե, օրինակ, ես նորմալ հայերենով գրեի եմ
«երկու ամիս էր մնացել», նա վերցրել ու դարձրել է՝ «մնացել
էր ամիս երկու»: Եթե գրել եմ «հառաչում էր հոգեխոռով»,
դարձրել է՝ «հոգով խոռով էր հառաչում»: Եվ դա՛ ընդամենը
մեկ տաղի մեջ: Եթե համարձակվել եմ ասել, թե քաջերը նստել
էին իրար մոտ, նա դարձրել է «քաջ ի քաջանց նստել ի կող».
Եթե գրել եմ «էլ աչքիս քուն չէր մոտենում», դարձրել է՝ «էլ

ուժ չունէր խենթս քնի», եթէ գրել եմ՝ «Ռոստոմի թևից էլ երկար թևով», դարձրել է՝ «Ռոստոմի իսկ բազկից երեց»։ Եվ այդպէս անվերջ։

Այդպէս անձնվիրաբար մարտնչելով մեռած թարգմանչի ու մեր կենդանի լեզվի դեմ, նա չի զլացել նաև իր ուզածի պէս փոխել հայկազան բառերի իմաստները։ Ահա մի օրինակ։ Բնագրին հավատարիմ մնալով, ես թարգմանել եմ.

Այս պատմությունը պարսկական, որ վրաց լեզվի էր վերածվել
Եվ աննման մարգարտի պէս խնամքով ձեռքէ ձեռք էր անցել,
Գտա, չափի վերածեցի...

Իմ արածը չհավանելով, ձեր ջահել ոռութավելագետը
կատարել է այսպիսի ուղղումներ։

Ու պատմությունն այս պարսկական, որ մեկնյալ էր վրաց լեզվի
Եվ աննման մարգարտի պէս— կաքավել էր ձեռքէ ձեռքի—
Գտա, երգի վերածեցի... (էջ 4)։

Հայտնի է, որ «կաքավել» կնշանակե ուստոստալ կամ պարել։ Դե՛, ուրեմն, եկեք ու պատկերացրեք մի մարգարիտ, որ ուստոստում է կամ պարում, այն էլ ձեռքէ ձեռք կամ, ինչպէս ինքն է ասում՝ լեզվի կոկորդը սեղմելով,— «ձեռքէ ձեռքի»։

Թող լուսահոգի Ռութավելին ինքը բողոքի իրեն վերագրված այդ տիեզերական անմտության համար, իսկ ես բերեմ մի ուրիշ օրինակ։ Ես թարգմանել էի.

...Սեժ բազմություն կանչեց պալատ, ցրեց առատ նա ընծաներ...

Ձեր խմբագիրը, երևի դարձյալ «ջանալով» համեմատել քնագրի հետ, այդ տեղը կերպարանափոխել է այսպէս.

...Սեժ բազմություն կանչեց պալատ, նվեր տվեց հույժ ակնապիշ...
(էջ 20)։

Ինչպէս գիտեք «ակնապիշ» կնշանակե՛ աչքերը պլշած, սևեռած կամ չռած։ Եթէ այդ ածականը վերաբերում է նվերներին, ապա այն, իհարկե, աչքեր չէր կարող ունենալ, իսկ եթէ վերաբերում էր նվերներ բաժանողին, որն, ի միջի այլոց, արքա է, ապա երևի դուք ինքներդ հարց կտաք, թե ինչու՞ պիտի արքան իր հպատակներին նվերները բաժաներ աչքերը չռած, այն էլ ՀՈՒՅԺ չռած։ Ըստ երևույթին միայն նրա համար, որ թարգմանությանս վերախմբագիրը կարողանար «ակնապիշ»-ը հանգավորել «ուրիշ» բառի հետ։

Այդօրինակ անթիվ ու անհամար օրինակներից ես մեջ բերեցի միայն երկուսը։ Մնացածը ընդգծել եմ ձեր հրատարակած գրքի մեջ և ուղարկում եմ նամակիս հետ միասին, հուսալով, որ կկարդաք հույժ ակնապիշ։

Բերածս օրինակներից դուք արդեն ծանոթ եք նրա հորինած գրաստագանգ, նոսրահանգ, նախուստ, թշնամածի, զարդել, միջնել, իրք, բազմ «բառերին»։ Գումարեցեք դրանց նաև հանգրստաքելք, անծնի, անգնի, տանջաքաշտ, բազկատալ անդեն, ահվոր, ետնակայս, անծնի, անգնի, տանջաքաշտ, բազկատար, անդեն, ետնակայս, անխնին, տանջագութ, տանջուն, հաղթուն, անդուստ, այնուստ, կատարապէս, աղքատել, հարսանքել, կորսել, շշուն, ջըջեջք, հյուժո, ամենեցու, դրև, հրնում, խելահարս, գիտնոց, գրկուն և հարյուրավոր այնպիսի բառեր ու բառաձևեր, որ այստեղ դժոխապէս Սադայելը անպայման մտցնել կտա հայ-դժոխերեն բառարանի մեջ։ Չմոռանամ ասել, որ իր քանդած տողերի հանգն ու վանկը տեղը բերելու կամ, ինչպէս ինքը կասեր «հանգի ու վանկի կաղումները հոգալու» համար, նա չի զլացել դիմել նաև վիրահատական միջոցների,

կտրել է, օրինակ, «հաճելի» բառի ոտքերը և թողել միայն «հաճ», «կողմ»-ից սարքել է «կող», թափել է «հարկադրել» բառի փորոտիքը և դարձրել «հարկել», պորտատեղից հատել է «նկարագրել» բառը և դարձրել «նկար գրել»: Այնուհետև, իր հնարած և չհնարած բառերից սարքել է «ջանք թափառական», «հեգացող վիրավոր», «հորդումի վտակ» «եղնիկնեթռչնակամար» և հազար ու մի զարմանահրաշ բառեր:

Մի խոսքով, հայոց լեզվի հոբելյանական եղե՞ռն, եղեռն ըստ ամենայնի, որը սակայն, ինչպես պարզվում է, դեռ վերջնական չէ և ենթակա է կատարելագործման: «Հակված չենք կարծելու, — գրել է Պ. Մուրադյանը թարգմանությունս իսպառ ոչնչացնելուց հետո, — թե ներկա հրատարակությունը վերջնական դառնալու ինչ-որ ակնկալություն ունի: Ավելի շուտ՝ այն նոր վիճակ է և ինքնին դյուրացնում է «Ընձենավոր»-ի հայերեն թարգմանության կատարելագործման ապագա սպասելիքը (!!!) կամ նոր նախաձեռնությունը: Սույն հրատարակությունը այդ ճանապարհի օղակներից մեկն է»: Աչքս լո՛ւս:

Այդ հոտենդոտերենից ես մի կերպ այն էլ հասկացա, որ թարգմանությունս նրա խմբագրման շնորհիվ այլևս թարգմանություն չէ, այլ «նոր վիճակ» և «ճանապարհի օղակ», եթե միայն ճանապարհն էլ է օղակ ունենում: Չեմ վիճում: Իսկապես որ դա «նոր վիճակ» է, ըստ որում այնքան ողբալի վիճակ, որ հազիվ թե կարիք ունենա «կատարելագործման ապագա սպասելիքի» կամ «նոր նախաձեռնության», որքան էլ որ նա խաձեռնողն ավելի անգրագետ լինի: Միայն թե այդ ամենից հետո ես, այնուամենայնիվ, չկարողացա հասկանալ, հարգելի հրատարակիչներ, թե ինչու եք դուք այդ խայտառակ «նոր վիճակի» հրատարակության տիտղոսաթերթի վրա սանտիմետրանոց տառերով գրել

Գոնե մի խաչ գծեիք այդ ցուցակի գլխին, որպեսզի նայողն իմանար, որ դա նահատակված թարգմանությանս տապանագիրն է, և դատափետեր ոչ թե ինձ, այլ նահատակողին: Թե չէ հիմա ի՞նչ անեմ ես, մինչև ե՞րբ ամոթից տնիցս դուրս չգամ: Կամ ի՞նչ անի իմ բարեկամ Ավետիք Իսահակյանը: Մինչև ե՞րբ պիտի նա, ձեր տպած գիրքը ձեռքին, դրախտում դռնե դուռ ընկնի ու կրկնի, թե չհավատաք, խեղճ Գեորգ Ասատուրը մեղք չունի, սա այն թարգմանությունը չէ, որ համարել եմ ես գեղեցիկ: Ո՞ր մեկին հավատացնի այս անծայր հանդերձալ աշխարհում: Իսկ եթե նույնիսկ բոլորը հավատան և ինձ Տարտարոս չուղարկեն, ինչպե՞ս պիտի մարդկանց հավատացնենք ձեր աշխարհում, ուր մենք այլևս մուտք չունենք:

Այս մտահոգությամբ է, որ գրում եմ նամակս և խնդրում. փրկեցեք ինձ երկնային պատժից և երկրային խայտառակությունից: Այդ անելու համար կա երկու միջոց.

1) Մեկ առ մեկ հավաքել գրքի բոլոր 10.000 օրինակաները, վրայից շնջել իմ անունը և փոխարինել բազմահիշյալ Պ. Մուրադյանի անունով: Սակայն այս միջոցը այնքան էլ հանձնարարելի չեմ համարում, քանզի դա կփրկի միայն ինձ, ցավ ու կրակի մեջ թողնելով Շոթա Ռուսթավելուն:

2) Անվավեր համարել ձեր հրատարակությունը և իմ անունով հրատարակել իմ իսկական թարգմանությունը: Այդ դեպքում, նախ, բավարարված կլինի Ռուսթավելին, և, հետո, փրկված կլինեմ ես, նվաստ թարգմանիչս, որի թարգմանության միջոցով մեր ժողովուրդը երեք տասնամյակ հաղորդակից է եղել նրա հանձարի գանձերին: Այդ կերպ դուք էլ, ձեր Պ. Մուրադյանի հետ միասին, մասամբ քաված կլինեք ձեր

մեղքերը, որոնց համար պատասխան պիտի տաք եթե ոչ այդ-
տեղ, ապա գոնե այստեղ:

Ինչևիցե, շտապեցեք:

Մնամ ձեր պատասխանին անհամբեր սպասող՝

ԳԵՈՐԳ ԱՍՍՏՈՒՐ

Ն. Գ. Իմ հանձնարարությամբ այս նամակս կխմբագրի և
տպագրության կհանձնի իմ լավ բարեկամներից մեկը, որը իր
գրած ու չգրած ֆելիետոնների համար այդտեղից ժամանակա-
վորպես ուղարկված է Քավարան: Վերադարձի ճանապարհին
նա պարտք է համարել այցելել ինձ և անձամբ հաղորդել իր
խորին ցավակցությունը տեղի ունեցածի համար: Օգտվելով
հանգամանքից՝ գրեցի սույն նամակը և հանձնեցի իրեն:
Խնդրում եմ գրաբերիս լավ ընդունեք ու պատվեք: Անունն է՝

ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻ

1967

ՄՆԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՆԵՐՈՒՍ

Մեր սեղանի վրա է 330 էջանոց մի գիրք: Իսկ դրա կող-
քին՝ նույն գույնի մի վտիտ գրքուկ: Երկվորյակներ են: Աշխարհ
են եկել միասին, պատկանում են միևնույն անձնավորության
«բեղմնավոր գրչին» և հետապնդում են մեն մի նպատակ:

Առաջինը՝ պարարտ գիրքը, կոչվում է «Հայկական գյուղա-
տնտեսական ինստիտուտի արգասավոր ուղի», թեև մեջը
գետեղված են այդ ինստիտուտի միայն 1934 թվականի շրջա-
նավարտների և նրանց դասախոսների կենսագրականները՝
ու լուսանկարները: Հավակնոտ անվան և բովանդակության
անհամապատասխանությունը հաշտեցնելու համար, շապկի
վրա, փակագծերի մեջ, զգուշաբար ասված է, թե գիրքը
«նվիրված է ինստիտուտի առաջին շրջանավարտների 40-ամյա
հոբելյանին»: Նույն նպատակով հեռատես կազմողը գետեղել
է վերադասին ներկայացվող տարեկան հաշվետվության պես
մի բան, որն անվանել է «Ակնարկ ինստիտուտի համառոտ
պատմության»: Այդտեղ, ինստիտուտի մասին մի քանի կցկտուր
տեղեկություններ հաղորդելուց հետո, նա հիշատակել է նաև այլ
տարիների շրջանավարտներից ոմանց, առանձնացնելով և
հատուկ դրվատանքների արժանացնելով հատկապես նրանց,
ովքեր հետագայում դարձել են գյուղատնտեսության բնագա-
վառի ղեկավար աշխատողներ: Եվ չէր սխալվել: Ինստիտուտի
ոեկտորատը անհապաղ տպագրական թուղթ է բաց թողել,
օժանդակություն խնդրել գյուղատնտեսության մինիստրությու-
նից, վերջինս ապահովել է տպագրությունը և նրա ծախքերը:

Ամենայն խրախուսանքի է արժանի վաստակած մարդ-
կանց, նրանց թվում նաև գյուղի ինստիտուտի՝ հանրապետության
ժողովրդական տնտեսության զարգացմանը անուրանալի

Ծառայություններ մատուցած շրջանավարտների լավագույն գործերը ընթերցող հասարակայնությանը ներկայացնելը: Միայն թե դա պետք է արվեր պատշաճորեն: Բայց ահա լույս աշխարհ է եկել բաժակաճառի կամ հիմնարկային բնութագրի ոճով շարադրված կենսագրականների ինքնանպատակ մի հավաքածու, որի մեջ ըստ ամենայնի ներկայացված է միայն մարդկային սնափառությունը:

Գրքի ճակատին կազմողն իր անունը չի գրել: Կարիք էլ չկար: Սակայն պատճառն այն է եղել, որ ընթերցողին ներկայանալու այդ ձևը չի բավարարել նրան: Նա ընտրել է գրքի տիտղոսաթերթի հետևի էջը, որի վերևում խոշոր տառերով արձանագրել է, ինչպես Արգիշտին իր նշանավոր քարի վրա. «Աշխատությունը գրել և հրատարակության է պատրաստել Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի առաջին շրջանավարտ, գյուղատնտեսական էկոնոմիկայի և կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտական աշխատող **Ազատ Իսրայելի Մկրտչյանը**»:

Չորուցամաք կենսագրականների իր հավաքածուն լրջորեն աշխատություն անվանելուց հետո, ավագ գիտական աշխատող Ազատ Իսրայելի Մկրտչյանը դա հանդիսավորապես բացել է... ավագ գիտական աշխատող Ազատ Իսրայելի Մկրտչյանի մեծադիր լուսանկարով: Այնուհետև գրել է «Հեղինակի կողմից» կոչվող մի ինքնադրվատանք, ապա խոսքը տվել մի դոկտոր-պրոֆեսորի: Սա էլ իր ընդարձակ առաջաբանի մեջ, նախ, հանգամանորեն պատմում է Ազատ Իսրայելի Մկրտչյանի կենսագրությունը, հետո գտնում է, որ «...ավագ գիտական աշխատող Ազատ Իսրայելի Մկրտչյանի աշխատությունը **կարևոր նշանակություն ունի** ինստիտուտի և նրա առաջին շրջանավարտների ու անդրանիկ դասախոս-

ների գործունեության պատմության համար», ապա եզրակացնում, թե «այդ աշխատությունը **անշուշտ պետք է խրախուսանքի արժանանա**»:

Ըստ երևութին, դոկտոր-պրոֆեսորը քիչ է համարում և այն, որ Ազատ Իսրայելի Մկրտչյանին հնարավորություն են տվել լույս աշխարհի հանելու մեր հիշատակած այն բարալիկ գրքուկը ևս, որը երկար կհիշվի զվարճասերների շրջանում:

Գրքուկն այդ կոչվում է «Ձոն»: Ղրա մեջ Ա. Ի. Մկրտչյանը առօրեական լեզվից ծանծրացած, որոշել է ընթերցողի հետ խոսել արդեն չափածո, պոեզիայի լեզվով: Ի՛նչ կա որ: Գյուղ-ինստիտուտի միկրո-Խորենացի դառնալուց հետո ի՛նչ մի դժվար բան է շուտ գալ ու խնդրել, որ Նարեկացին ու Քուչակը մի փոքր քիփ նստեն և իրեն էլ տեղ տան իրենց կողքին:

Այստեղ էլ ամեն ինչ դասավորված է մեզ արդեն ծանոթ հերթականությամբ: Նախ՝ հեղինակի լուսանկարը, հետո՝ «Երկու խոսք», ապա նորից առաջաբան գրված նույն պրոֆեսորի ձեռքով:

«...Ես մասնագետ!! գրող չեմ,— գրում է Ա. Ի. Մկրտչյանը իր «Երկու խոսքում»,— այլ սոսկ պոեզիայի և պրոզայի սիրահար ու ինքնուս գրող»: Ուրեմն, այնուամենայնիվ, իրեն գրող է համարում, թեկուզ և «ինքնուս»: Եվ քանի որ գրական երկնակամարում նոր աստղ է ծագել, շտապենք գոնե մի հատված կարդալ նրա «Ձոն»-ից: Անհավասիկ.

Մեզանից ոմանք գիտնական դարձան,
Գիտության փայլուն բարձունքի հասան,
Եղան գիտության թեկնածու, դոկտոր,
Ապա և դոցենտ, և պրոֆեսոր:
Ծատերն էլ որպես հմուտ գործիչներ,
Կյանքում վարել են ու վարում են դեռ,

Պատասխանատու և մեծ պաշտոններ,
Իբրև նվիրված հայրենասերներ:
Նրանցից քսանվեց լավ աշխատողներ
Ունեն վաստակավորի վեհ կոչումներ,
Իսկ երեսուներկու խիզախ մարտիկներ
Դարձել են արդեն շքանշանակիրներ:

Գյուղատնտեսական կադրերի հարցերով զբաղվող մուսա-
ները դեռ շատ այդպիսի ընտիր տողեր են թելադրել ինքնուս
բանաստեղծին, որն այդ վիճակագրական տվյալները հաղոր-
դելուց հետո սկսում է առանձին-առանձին «բնութագրել» իր
հերոսներին: Սակայն այստեղ մարդասիրաբար կանգ առնենք
և խնայենք «բնութագրվածներին», բացառություն անելով
միայն մեկի համար, որին նվիրված է հետևյալ հուզիչ քառյակը.

Ահա նրանցից դոկտոր-պրոֆեսոր՝
Մեր շատ սիրելի Պերժ Հակոբյանը,
Պասախոսում է Գյուղինստիտուտում:
Եվ մեծ հարգանք է նա միշտ վայելում:

Կարծում ենք հարգարժան դոկտոր-պրոֆեսորը չի նեղա-
նա այդ մեջբերման համար, քանի որ գրքուկում զետեղված
իր նոր առաջաբանում դարձյալ գտնում է, որ Ազատ Իսրայելի
Մկրտչյանի «Ձոնը» կարևոր նշանակություն ունի» և «պետք է
արժանանա խրախուսանքի»:

Այդ բոլորից հետո մնում է ասել, որ երբ խելահեղ փառա-
մոլությունը և անլրջությունը պարարտ հող են գտնում, այն էլ
գյուղատնտեսության ղեկավարման ասպարեզում, ապա բերքը
պետք է որ այդպես ռեկորդային լինի:

Ուրեմն, ցանկանանք անկորուստ բերքահավաք:

ԻՆՉՈՒ ԵՄ ԽՆԱՅՈՒՄ ԱՆՎԻՃԵԼԻ ԱՆՏԱՂԱՆԴԻՆ

Ես մի մտերիմ, բայց անտաղանդ ընկեր ունեմ: Իմ ճանա-
չած բոլոր անտաղանդների մեջ միակն է, որ անձնվիրաբար
ընդունում է իր բնածին անտաղանդությունը: Դրա համար էլ
մարդուն հարգում եմ, թեև նա վաղուց միակողմանիորեն
չեղյալ է հայտարարել մեր մտերմությունը: Հիմա նա, իմ այդ
վաղեմի ընկերը, փողոցում դեմիցս գալիս շեղում է ճանապարհը
կամ իրեն զցում որևէ շքամուտք, որպեսզի ինձ չբարևի: Դա
դեռ ոչինչ: Հաճախ ականջիս հասնում է, թե ամեն մի առիթով
փնտվում է ինձ և պնդում, թե ես, միայն ես եմ եղել իր գրա-
կան-հասարակական-ընտանեկան անհաջողությունների պատ-
ճառը:

Չկարծեք, թե նրան վատություն եմ արել կամ, ընկերու-
թյուն ու մտերմություն մոռացած, մի ֆելիետոն կամ ջախջա-
խիչ հոդված էլ իր մասին եմ գրել: Ընդհակառակը: Անտաղանդ
ընկերս ու գրչակիցս ինձնից խոռովել է հենց այն պատճառով,
որ մինչև հիմա զլացել եմ մի ֆելիետոն գրել իր «Տանջալից
մրմունջներ» կոչվող առաջին և վերջին գրքուկի առթիվ:

Ջարմանալի է, չէ՞:

Ուրիշները փառաբանական հոդվածներ են պատվիրում
իրենց գրական մտերիմներին, իսկ իմ այդ ընկերը տարիներ
շարունակ ինձ համոզում էր.

— Ի՞նչո՞ կպակասի, եթե մի փոքրիկ ֆելիետոն կամ
սպանիչ հոդված էլ իմ մասին գրես: Պարզապես չես ուզում,
որ ընկերդ էլ անուն հանի: Միայն անծանոթ անտաղանդներին
ես լավություն անում, որոնցից ոչ մեկը, կարծեմ, քեզ շնոր-
հակալություն չի հայտնել:

Եվ մի առ մի ինձ հիշեցնում էր երախտամոռ անտաղանդ-ներին արաժս լավությունները:

— Հիշում ես,— ասում էր,— այն երգիծական հոդվածը, որ երսուն տարի առաջ գրեցիր հանրապետության ամենանշանավոր անտաղանդ բանաստեղծի «Բավիղներ և շավիղներ» առաջին գրքուկի մասին: Տեսա՞ր ինչ փայլուն արդյունք ունեցավ:

Ինչպե՞ս կարող էի չհիշել, քանի որ իսկապես արդյունքը փայլուն էր:

Հիշում եմ, որ հոդվածս տպագրվելուն պես հիշյալ անտաղանդը ժամանակավորապես թողեց չափաժողի ասպարեզը և, անցնելով արձակի, սկսեց ծավալուն բողոքներ գրել: Ինչպես Ձեզ հայտնի է, քաղաքացիների բողոքները անհետևանք թողնել չի կարելի, իսկ նա ոչ միայն քաղաքացի էր, այլև բանաստեժ-քաղաքացի: Ուստի ամենուրեք սկսեցին զբաղվել դրանցով, որի համար ստիպված էին կարդալ նաև «Բավիղներն ու շավիղները»: Այնուամենայնիվ, վերջնական եզրակացությունն ուշանում էր, քանզի երկար ժամանակ չէին կարողանում պարզել, թե բողոքների հեղինակը հանրապետական կարգի անտաղանդ է, թե միութենական: Մինչ կկարողանային պարզել այդ կնճոռտ հարցը, հեղինակը շարունակում էր գրել, այս անգամ արդեն այն մարմինների ու անձանց դեմ, որոնք անհապաղ ընթացք չէին տալիս իր նախորդ բողոքներին: Ծուտով այլևս չմնաց մի մարմին կամ մարմնամաս, որ կարողացած չլիներ նրա այս կամ այն բողոքը և «Բավիղներն ու շավիղները»: Այդպիսով, մեր ջերմեռանդ բողոքականը մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև Հաստատանի սահմաններից դուրս, կամաց-կամաց ձեռք բերեց

այնպիսի ճանաչում և ժողովրդականություն, որ այլևս գործը ձգձգել չէր կարելի:

Անհապաղ որոշեցին, թե մարդն իսկապես բարձր կարգի անտաղանդ է, սակայն, չնայած դրան, մեր պայծառ արևի տակ ծնված ու ապրած բանաստեղծ-քաղաքացու մասին այդպիսի ոչ-ընկերական տոնով գրել չէր կարելի, հետևապես անհրաժեշտ է նրան համարել հալածված ընկեր, արագացնել այդ ընկերոջ նոր գրքի՝ «Ծավիղների ու բավիղների» տպագրությունը, միաժամանակ քննության առնել հոդվածագրի հարցը:

— Հո տեսա՞ր,— ասում էր ինձնից խոռված անտաղանդ ընկերս,— ֆելիետոն գրեցիր «Բավիղների ու շավիղների» մասին, սակայն լույս տեսավ նաև նրա «Ծավիղներն ու բավիղները»: Իսկ հիմա նա իր ծննդյան փառապանծ 60-ամյակը նշում է իբրև 25 գրքի հեղինակ: Իսկ ե՛ս: Չլինի թե կարծում ես, թե ես նրանից պակաս անտաղանդ եմ, որ մի լավություն էլ ինձ չես անում: Կամ հիշո՞ւմ ես, թե ինչպես օգնեցիր այն անգրագետ թարգմանչին:

Այո, դա էլ եմ հիշում: Երբ մի անգամ հրապարակով ցույց տվի, որ այդ մարդը չգիտի ո՛չ հայերենը, ո՛չ էլ այն լեզուները, որոնցից թարգմանում է, նա սկսեց բոլոր թերթերին բողոքներ գրել իր չիմացած բոլոր լեզուներով: Տեսնելով, որ անհնար է կարդալ ու հասկանալ այդ բողոքները, մարդուն խորհուրդ տվին իր ժանրը փոխել և վարկաբեկիչ հոդվածներ գրել մնացած թարգմանիչների, այդ թվում և իմ մասին:

Եվ գրեց ու տպեց:

Դրանից հետո նրա անգրագիտության մասին խոսել չէր լինի, քանզի դա պիտի համարվեր քննադատության ճնշում, հաշիվներ մաքրելու փորձ և այլն:

Այդպիսով, հույժ քննադատելին դարձավ անքննադատելի

քննադատ: Իբրև քննադատ, նա շուտով Պետհրատի ուշադրությունը հրավիրեց ֆրանսերենից կատարած և, իր կարծիքով, շատ հաջողված երեք թարգմանությունների վրա, որ կատարել էր ինքը՝ քննադատ դառնալուց առաջ: Հաշվի առնելով անողոք քննադատի հեղինակավոր կարծիքը և այն հանգամանքը, որ նա կարող է նորից անցնել բողոքագրության դժվարամաս ժանրին, հրատարակչությունը իր խմբագիրներին հրամայեց վեց ամիս նստել և հայերեն թարգմանել հիշյալ հայերեն թարգմանությունները, որոնք լույս տեսան իրար հետևից: Մի խոսքով, մի քննադատված թարգմանության շնորհիվ ապաշնորհ թարգմանիչը լույս աշխարհի հանեց երեք նորերը: Մի՞թե իսկապես լավություն չէր արածս:

— Հիշու՞մ ես այն գրագրող վիպասանին, որ առանց մի ստորակետ փոխելու ամբողջական էջեր էր արտագրել ռուս գրողների հայերեն թարգմանություններից: Մի՞տո՞ւ է, որ այդ մասին գրածդ հոդվածի համար քիչ էր մնում նրա փոխարեն քեզ հանեին գրողների միությունից, և աչքդ էլ կհանեին, եթե գործին չմիջամտեր մի ազդեցիկ թերթ: Տեսա՞ր, թե ինչպես արածիդ շնորհիվ գրագրող այնքան ծանաչված գրող դարձավ, որ շուտով հետը պայմանագիր կնքեցին նաև պիես արտագրելու համար:

Եվ այդպես, անտաղանդ ընկերս ինձ մի գլուխ հիշեցնում էր օտարներին արածս բազում լավությունները:

Վերջին անգամ մոտս եկավ մեռելի պես գունատ ու հուսահատ:

— Վերջապես իմ մասին էլ ֆելիետոն գրելու՞ ես, թե չէ: Տասը տարի է, որ Պետհրատը ինձնից բան չի տպում, կնիկս տնից դուրս է անում, թե կոպեկ չես բերում: Մի բան արա,

մեղք եմ, երեխաների տեր եմ: Խոսք եմ տալիս, որ ոչ մի բողոք չեմ գրի քո դեմ:

Այս անգամ արդեն վերջնականապես մերժեցի: Ինչպես թե բողոք չպիտի գրի: Ուրեմն գրելիք ֆելիետոնս, որպես բացառություն, պիտի հասնի՞ իր նպատակին և խեղճ ընկերս պիտի տուժի և թաղրի առարկա դառնա՞:

Որ այդպես է, չեմ գրի:

Ինձ վիճակված է անտաղանդներին միմիայն լավություն անել: Իսկ նա շատ անտաղանդ լինելուց բացի, նաև ընկեր է:

Ավելի լավ է, թող խոռվ մնա, մինչև որ սովորի բողոքներ գրել: Այլապես բանաստեղծ չի դառնա:

1980

Մանուկների
կարգապետ



ՊԱՌՆԱՍԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ

ՔԱՂՎԱԾՔ

Պառնասի նախագահության ընդլայնած նիստի արձանագրությունից

ԼՍՎԵՑ.— Ղիմումը բանաստեղծ Ա-ի՝
Ընդդեմ իր անձին կցված Մուսայի.
Ա-ն բողոքում է, թե տիկին Մուսան
Լքել է նրան դավաճանաբար,
Ուստի խնդրում է կամ ապահարզան,
Կամ ցույց տալ փառքի մի այլ ճանապարհ:

ՈՐՈՇՎԵՑ.— Հարգել ղիմումը Ա-ի՝
Ընդդեմ իր անձին կցված Մուսայի.
Քանի որ Մուսան լքել է նրան,—

Բաժանել առանց դատ ու դատաստան:
Բայց քանի որ Ա-ն ձգտում է փառքի,
Իսկ պառնասն ազատ մուսաներ չունի,
Թույլ տալ, որ նրա գործերը սարքի
Մի այլ թարգմանիչ կամ թարգմանչուհի:

ՄԻ ՍԵՂԱԼԱԿԻՐ ՊՈՎԵՏԻ

Պառնասը միակ լեռն է, բարեկամ,
Որի գագաթը հասնողին անգամ,
Անգամ Հոմերին, չի տրվել երբեք
Որևէ մեղալ ալպինիստական:
Բայց չեմ զարմանում, որ այնուհանդերձ
Բրոնզե մեղալ է շողում քո կրծքին,
Քանզի հասել ես բարձունքի մի մեծ—
Անտաղանդության գագաթնակետին:

ԱԿՎԱՐԻՈՒՄ

Նրա երգերով ու պոեմներով
Կոլխոզ-շուկայում ծուկ են փաթաթում,
Չկներն էլ ջրի հպումն ըզգալով՝
Շարժվում են նորից, ուրախ թայրտում:

ՎԱԿԵՐԱՑՈՒՄ

Ում վրա ուզում ես մատդ դիր:
Այս տարի տպում է հատընտիր:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

Ահա քեզ վրա իմ մատը դրել,
Տեսնում եմ, Համո՛, որ ծիշտ ես գրել:

ԲԱՆԱՍՏԵՂԹ N-Ը

Գրեց ու տպեց երգեր անհամար,
Պոեմներ անթիվ, չափաժո ծառեր,
Որոնց ջերմությունն ըզգալու համար
Պետք է խնամքով դարսել ու վառել:

ԽՈՐՀՈՒՐԴ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Պետք չէ քո որդուն օրոր ու նանի.—
Պոեմդ կարդա՛ թող քունը տանի:

ՊՈՐՏՐԵՏ

Թեև չնչին է երգով, գազելով,
Բայց նա Պուշկինն է գոնե մազերով:

ԴԵՂԱՏՈՍՍ ԷՊԻԳՐԱՍ ԳՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Սրամտություն հազիվ կես գրամ
Եվ մի տոննա ջուր ահա էպիգրամ:

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

- Ինչպե՞ս է կոչվում քո գործը վերջին:
- «Դիմում Լիտֆոնդի նորընտիր վարչին»:

- Ինչպե՞ս հանգցրին հրդեհը նրանք:
- X-ի պիեսը մըզելով վրան:

- Որի՞ն ես դու լավ պոետ համարում:
- Երկուսն էլ լավն են, երբ որ չեն գրում:

- Ձեզ մոտ ե՞րբ են ցուրտ քամիներ փչում:
- Երբ նա իր վեպի էջերն է շրջում:

- Ղարվինն ասել է, թե սողունները
Ձկնից են ծագել հեռու անցյալում:
- Հապա ինչու՞ է այս քննադատը
Ուրիշ բան գրել իր անկետայում:

Ա-ին

Թարգմանիչդ թող տանջվի,
Փառքն ու դափնին քեզ բերեն,
Միայն զգույշ, որ հանկարծ
Քեզ չտպեն հայերեն:

ՔՈ ՂԵՍՔՆ ԷԼ ՊԱՐԶՎԵՑ...

Լուսի՛ն, քո մասին կերգեի և ես,
Թե դու լինեիր կյանքում պիտանի,
Այն ո՞վ է ասում մի երես ունես,
Քո՛ր դեմքն էլ պարզվեց, երկերեսանի՛:

1960

ԱՂՎԵՍԸ ԱՌԱԿԱԳԻՐ

Մի ոմն աղվես, անփառունակ, իր անունն ու մորթին փոխած
Եզովպոսի ու Ալգեկցու առակների միջից փախած,

Հասած դարին քսաներորդ,
Երբ բուլորը գրում-կարդում,
Չաղկում են ու քննադատում
Աղվեսային բարքերը խորթ,

Երբ ֆիրմայից կոլյուզային
Հավ թոցնելը հեշտ չէ այնքան,
Երբ խստանում է օրն-օրին
Օրենսգիրքը քրեական,

Որոնում էր դարուս վայել մի այնպիսի օգտավետ գործ,
Որ կուշտ լիներ առաջվա պես, հետն էլ մնար ողջ ու անփորձ,
Եվ քանի որ ինքն իր մասին շատ առակներ գիտեր անգիր՝

Վերցրեց դարձավ առակագիր:

Այո՛, դարձավ առակագիր: Բայց, թողնելով արհեստն իր հին,
Չեռ չի քաշել հավ ուտելու սովորույթից աղվեսային.

Այդ պատճառով գիշեր ու զօր,
Նստած ճաշի սեղանի մոտ,
Մշակում էր Խնկո-Ապոր
Առակները վաղուց ծանոթ,
Նրանց միջի աղն է հանում

Եվ այդ աղով անուշ անում
Այն հավերը խաշած ու գեր,
Որ նա հիմա ձեռք է բերում

Ոչ թե պոչը վտանգելով կամ թե հազար զոռ ու շառով,
Ոչ թե պոչը վտանգելով կամ թե հազար զոռ ու շառով,

1960

ԳՐՊԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԲԱՅԱ-ԴՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

Օգտագործելի է դիսպուտներում, զեկուցումների ժամանակ և քննադատական
հոդվածներ գրելիս

Առաջին հատոր, պրակ առաջին

Ամբիոն— Շարժական և խոսող կիսանդրիների պատվան-
դան:

Ապրիլ— Ամիս, որի առաջին օրը թույլ է տրվում խաբել:
Այդ օրը քննադատները գոհ են գրողներից և՛ ընդհակառակը:

Արարատ— Լեռ, ինչպես նաև չափ, որով որոշում են, թե
տվյալ գրողը որքան է բարձր ծովի մակերևույթից: Օրինակ-
ներ՝ «Նա մեր պոեզիայի Արարատն է», «դրամատուրգիայի

Արարատը մոտեցավ դրամարկդին», «այսինչը լիրիկայի Մեծ Արարատն է, այսինչը՝ Փոքր Արարատը» և այլն:

Համբերատար լեռ: Ալլապետ կծայթքեր:

Բանաստեղծական տուն— Չորս հարկանի տուն, որի մեջ միտքը բնակվում է նկուղային հարկում:

Բարդի— Ծառ, որ շատ է տնկվում լիրիկական բանաստեղծությունների մեջ: Պահանջում է մեծ քանակությամբ ջուր:

Բիս— (ֆրանսերեն) Կրկնելու պահանջ: Բանաստեղծներին բիս չեն ասում, որովհետև նրանցից ոմանք առանց դրան էլ կրկնում են իրենց կամ ուրիշներին:

Գլուխ— Պարտադիր է երկարաշունչ վեպերի, պոեմների և քննադատական հոդվածների համար, որոնցից յուրաքանչյուրը կարող է ունենալ մի քանի գլուխ: Հնարավոր է **խուզել**:

Գովեստ— Զաղցրահամ բլիթ, որը տրվում է 1. երեխաներին՝ մագերը խուզելուց առաջ, և 2. գրողներին՝ նրանց գործերը ոչնչացնելուց հետո: Երանի ուտողին:

Գրական նախանձ— Կա գրական բարի նախանձ և չար նախանձ: Իրենց համով նույնքան են տարբերվում, որքան սպիտակ խինինը և դեղին խինինը:

Պագանակ— Երբեմն տես՝ քննադատություն:

Պրամա— Մեծ մասամբ ստեղծվում է պիես գրելուց հետո:

Պրամատուրգիա— Ումանք կարծում են, թե արմատը դրամն է:

Լիրիկա— Բառ, որ գործ է ածվում մտքերի փոխանակության կարգով: Ոմանց կարծիքով կնոջ անուն, քչերի կարծիքով՝ տուր ու դմփոցի առիթ: Առաջացնում է ջերմություն և տենդ, արագացնում է արյան շրջանառությունը: Իմաստը վերջնականապես պարզելու համար ենթադրվում է մտքերի նոր փոխանակություն: Առայժմ պարզված է, որ լիրիկան

կազմված է 3 վանկից, 6 հնչյունից, որոնցից 3 ձայնավոր, 3 բաղաձայն:

Կակաչ— Սկսնակ ծաղիկ, որն ընդունակ է կարմրելու:

Հանձար— Տաղանդ-Հոբելյանական անուն-հայրանուն:

Հատված— Դժվարամարս ճաշի համտես:

Հոնորար— Այն, ինչ ընթերցողի փոխարեն երբեմն ստանում է հեղինակը:

Մագաղաթ— Հորթի մշակած կաշի, որի վրա գրել են հանձարեղ երգեր: Լավ է, որ ներկայումս չի օգտագործվում, այլապես հորթ ու մոզի չէր մնա:

Մանկական գրող— Ոմանց կարծիքով՝ գրական մանուկ:

Նշանավոր գրող— Որի մասին չի կարելի ասել, թե աննշան է:

Պառնաս— Դժվարամատչելի լեռ: Առաջին անգամ բարձրացել է Հոմերոսը: Այժմ վրան կառուցվում է հանգստյան տուն՝ վատառողջ սկսնակների համար:

Ռեպլիկա— Մտքի փոշտոց:

Սագ— Նրա պապերի և տատերի փետուրներով է գրել Ա. Ս. Պուշկինը: Չնայած դրան, գրական ֆոնդի անդամ չէ:

Տնփամբոց— Բնորոշ հատկություն հասած տանձի և տհաս գլխի համար:

1946

Երկրորդ պրակ

Աղահանք— Անալի վեպերի միակ ընթերցարանը:

Արծիվ— Սույն թռչունը ստեղծված է նրա համար, որ մի

քանի սկսնակ բանաստեղծներ իրենց հոգին համեմատեն հետը: Բարեբախտաբար կարդալ չգիտե: Այլապես կսատկեր:

Բալզակ— Վիպասան, որն իր մեծատաղանդ վեպերը գրելիս անընդհատ սուրձ է խմել: Ի նկատի ունենալով այդ, գրողների տանը շուտով սրձարան կբացվի:

— **Բարձրախոս**— Բացի ուղիղ բարձրախոսից կա նաև գրող բարձրախոս, որն առանձնապես բարձր է խոսում իր մասին: Եթե առաջինին լսելու համար վարձ ենք վճարում, ապա պատրաստ ենք նույնը վճարել երկրորդին՝ չլսելու համար:

Գովասանք— Յուրատեսակ փուչիկ, որը խիստ անհրաժեշտ է մոռացության գետում խեղդվողների համար: Երանի՛ շատ ունեցողին:

Գրագող— Քրեական օրենսգրքում չնախատեսված հանցագործ, որը փոխանակ ասելու «գողացա»՝ ասում է «մշակեցի»: Չի պատժվում ոչ մի հոդվածով:

Գրիչ— Ոմանց կարծիքով՝ հոնորարի պատահաքաղ:

Լուսին— Լուսնոտների և լիրիկ բանաստեղծների սիրելին:

Խոսք— Լինում են տարբեր համի խոսքեր՝ կծու, դառը, թթու, անհամ, քաղցր և այլն: Քաղցր խոսք շատ գործածող քննադատի շուրջը ճանճերն անպակաս են:

Խոտան— Արդյունաբերության մեջ դրա համար պատիժ է սահմանված. գրականության մեջ հենց ինքն է պատիժ, որ երբեմն ի կատար է ածում Պետհրատը:

Ծաղկաման— Այն բանաստեղծությունը, որի միջից ծաղիկները հանելուց հետո մնում է միայն ջուրը:

Կլասիկ— Ոմանց կարծիքով՝ մեռած գրող— կամ դեռևս գրող մեռել:

Հոմերոս— Բանաստեղծ, որն անմահության ճանապարհ

գտավ առանց աչքերի (կույր էր): Մենք շատ կվշտանանք, եթե այս բացատրությունից հետո ոմանք հանեն իրենց աչքերը:

Չմերուկ— Բանջարանոցային բույս, որ կարող է աճել նաև ձմռանը, եթե դրվի որևէ բանաստեղծի թևերի տակ:

Մտքի թել— Գործ է ածվում դիսպուտներում, որտեղ ամեն մի ռեպլիկից հետո հոետորը հայտարարում է, թե իր մտքի թելը կտրվեց: Ըստ երևույթին շատ է բարակ:

Պանթոն— Այն վայրը, որտեղ թաղվողը մեծ է համարվում: Ոմանք դեմ չեն լինի, եթե իրենց օրական մի երկու ժամ թաղեն այդտեղ:

Պատերազմ— Վեպ, որի հեղինակին անհրաժեշտ է երկարատև խաղաղություն:

Սանձարձակ— Ոմանք կարծում են, որ եթե դրա սանձը հանեն՝ կդառնա արձակ:

Սղագրուհի— Միակը, որ գրական դիսպուտներում մինչև վերջը լսում է բոլորի ելույթները:

Սրամտություն— Սուր գործիք, որը ոմանց կարծիքով սազական է միայն ֆելիետոնիստներին: Վերջիններից տարբերվելու համար իրենք գործ են ածում նրա հակառակ կողմը:

Վառարան— Անհաջող ժողովածուների կրեմատորիա: Մոխիրը հարազատներին չի տրվում:

1947

Երրորդ պրակ

Տուր ու դմփոց— Տես՝ մտքերի փոխանակություն:

Պդում— Առաջ քննադատ, ներկայումս՝ բույս,

Մեջը լցված է հոչակվելու հոգս:

Տառախալ— Պատահում է մեզ միշտ «հանձար» բառում.

Եվ մենք ուղղելիս «հ» տառն ենք հանում:

Կուժ— Կավե աման ջուր պահելու համար: Վերջերս պարզվեց, որ դրա մեջ կարելի է միտք էլ լցնել: Երևանի Պետական համալսարանին նվիրված մի բանաստեղծության մեջ, օրինակ, դիմելով այդ ուսումնական հաստատությանը, հեղինակը գրել է.

Ջուր ծախողի կուժս բերի, դու նրա մեջ միտք լցրեցիր...

Բառարանիս հեղինակին չհաջողվեց պարզել, թե մի կուժ միտքը քանի՞ օր կարող է բավականացնել մի բանաստեղծի, մանավանդ, եթե կուժը լցնելիս մոռացած լինեն միջի ջուրը դատարկել:

Հույս— Խիստ անհույս մի բան:

Պրակ կենդանաբանական բառարանից

Աղվես— Անվանի հավակեր: Ապրում է դաշտերում, անտառներում, ինչպես նաև Եզովպոսի, Լաֆոնթենի, Կոհլովի և Խնկո-Ապոր առակներում: Ներկայումս ինքն է դարձել առակագիր և հավերին անձնագոհություն ու հումանիզմ է քարոզում:

Կրիա— Ինքնամոռի արարած: Ապրում է 300 տարուց ավելի, մի հանգամանք, որ նրան հնարավորություն է տալիս վեց անգամ նշելու իր ծննդյան հիսունամյակը և երեք անգամ՝ հարյուրամյակը: Ջբաղվում է մեծավմասամբ հիշողություններ

և դամբանականներ գրելով: Իր անձնատունը և տուն-թանգարանը ման է ածում իր վրա: Նախանձողներ շատ ունի:

Փիղ— Մեծերից մեծը: Մեռնելը գալիս թողնում գնում է որևէ տեղ, ինքն իր համար գերեզման փորում: Այդ է պատճառը, որ Պանթեոնում փոքրերի համար էլ տեղ է գտնվում:

Կատու— Սերում է վագրի ցեղից, սակայն զբաղվում է միայն մուկ բռնելով: Ատում է թակարդը: Երբ տեսնում է, որ մուկն ընկել է վերջինիս մեջ, խորապես ցավակցում է դժբախտին և նրա գլխին ազատասիրական երգեր մլավում:

1957

ՆՇՄՆԱՎՈՐ ՅՐԵՐ

ԻՄ ՀԻՇԱՍԱԿԱՐԱՆԸ

Երկար ժամանակ չէի համարձակվում հրատարակության հանձնել սույն հիշատակարանը, քանզի նրա մեջ հիշատակվող անձնավորություններից ոմանք ողջ են, ինչպես նաև առողջ: Անհարմար է: Սակայն նկատելով, որ նրանցից շատերը որոշել են անմահանալ, իսկ ես լինելով մահկանացու, չեմ

կարող այդքան սպասել, որոշեցի մաս-մաս հրապարակել գո-
նե վերջին էջերը:

Թող ես կենդանությանս օրոք տպագրված տեսնեմ իմ
գործը, իսկ նրանք էլ իրենց հերթին թող անմահանան...

1947 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 31

Այսօր երազումս տեսա Միքայել Նալբանդյանին: Մինչև
անունը չտվեց՝ չճանաչեցի: Զարհուրելի փոխվել էր աչքիս:

Երբ հարցրի պատճառը՝ թեև տակից հանեց իր մասին
գրված «Ճանապարհ դեպի Կամիջին» վեպը և գլուխը տխուր
օրորեց: Ցանկացա մխիթարել, բայց արթնացա և տեսա, որ
քնել եմ հենց այդ գիրքը կարդալիս:

ՍԱՐՏԻ 1

Զարմանալի բան պատահեց:

Մինչև վերջ կարդացի քննադատ Ս. Հ.-ի հողվածներից
մեկը...

Այդ մեծածավալ հողվածը, որը տպագրված է «Սովետական
գրականություն և արվեստ» ամսագրի № 2-ում և կոչվում է
«Բանաստեղծական պատկերի կառուցումը սովետահայ պո-
եզիայի մեջ», ի միջի այլոց, բանաստեղծներին և ընթերցող-
ներին տալիս է մի այսպիսի խորհուրդ. «...Բառերի տարա-
ծությունը պետք է կրճատել՝ մտքերի համար տեղ շահելու հա-
մար» (էջ 101):

Քննադատի խնդիրը կատարելու համար ձեռքս առա մա-
տիսը և սկսեցի կրճատել: Շատ կրատեցի, թե քիչ՝ չեմ հի-
շում, միայն երբ նորից նայեցի հողվածը՝ տեսա, որ մնացել

146

են միայն նրա վերնագիրը, ցիտատները և մեկ էլ Ս. Հ.-ն
(խոսքը ստորագրության մասին է):

ՍԱՐՏԻ 1

Այսօր Գրողների տանը երկու հոգի վիճում էին.

- Տաղանդավորը դո՛ւ ես,— ասում էր նրանցից մեկը:
- Ո՛չ, դու ես տաղանդավորը,— հերքում էր մյուսը:
- Ես ասում եմ, որ դո՛ւ ես:
- Ոչ, դո՛ւ ես:
- Բոլորն էլ ասում են, որ դու ես:

— Այդ քո՛ մասին են ասում: Նույնիսկ թերթերը գրեցին:
Զարմանալի՛ էր: Ցանկացա ուրախանալ այդ բացառիկ
ընկերասիրության վրա: Սակայն պարզվեց, որ նրանք պար-
զապես վիճելիս են եղել այն մասին, թե ո՛վ է տաղանդավոր
գրագող:

ՍԱՐՏԻ 3

Երկու հայ բանասերներ 20 տարի շարունակ վիճում և
արխիվներում փնտրում են Խաչատուր Աբովյանի հոր անունը,
որն անհայտացել է մեծ գրողի հետ միասին: Նրանցից մեկի
կարծիքով՝ այդպիսի մեծ ու լուսավոր մարդու հոր անունը կա-
րող է միայն Ավետիք լինել: Մյուսն ավելի գորավոր ապա-
ցույցներ ունի՝ նրան Հարություն դարձնելու համար: Երևի
հանդես կգա նաև մի ուրիշը, որը կապացուցի թե քանաքեո-
ցիների հայրերը սովորաբար անուն չեն ունենում: Իսկ եթե
ինձ հարցնելու լինեն՝ այդ պրոբլեմի լուծումը պետք է հետա-
ձգել առնվազն 100 տարով, երբ վերոհիշյալ բանասերների

147

թոռները դրա հետ միասին կլուծեն նաև այն պրոբլեմը, թե ինչ է եղել իր՝ Խաչատուր Աբովյանի անունը:

Այդ միտքը գլխումս ծագեց այսօր, երբ հայ գրողների պանթեոնում մոտեցա Լեոի գերեզմանին և տապանաքարի վրա կարդացի նրա նոր հասցեն.

ԼԵՈ
ԱՐՄԵՆԱԿ ԲԱԲԱՆԱՆՅԱՆ
1861—1933

Ինչպե՞ս թե Արմենակ: Իսկ մենք մինչև հիմա կարծում էինք, թե հանգուցյալի իսկական անունը Առաքել է: Այդպես էր կարծում նաև ինքը՝ Առաքելը:

Ահա և վեճի արժանի նոր պրոբլեմ:

Ցնծացե՛ք, ո՛վ բանասերներ: Եթե գերեզմանաքարը այնպիսի դոկումենտ է, որ հնարավոր չէ արխիվում պահել, ապա ունի այն առավելությունը, որ չի կարելի կեղծել կամ կորցնել: Հավաքվեցեք շուրջը և վիճեցեք: Եվ հավատացեք, որ օրերից մի օր կգտնեք ոչ միայն Առաքելի անունը, այլև Բաբախանյանի ազգանունը:

Թանոթություն.— Վերջերս հայտնի դարձավ, որ մեր կանխագուշակումը ճիշտ է: Գտնվել է Լեոի իսկական անունը և գերեզմանաքարի վրա կատարվել է կարևոր ուղղում՝ Արմենակը դարձել է Առաքել: Սակայն վատն այն է, որ հիմա էլ ոմանք, հենվելով նախկին գերեզմանաքարի վրա, պնդում են, թե հանգուցյալի անունը եղել է Արմենակ:

1947

ՆԱԽԱԳԻԹ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԳՐՈՂ N-Ի ԾՆՆԴՅԱՆ 50-ԱՄՅԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Հրատարակել հոբելյարի ընտիր երկերի ժողովածուն՝ 10 հատորով: Այդ նպատակով առանձնացնել շնորհալի արձակագիրների մի բրիգադ, վերջինիս պարտավորեցնելով՝ կարճ ժամանակամիջոցում գրական-գեղարվեստական մշակման ենթարկել և անհրաժեշտության դեպքում նորից գրել նրա պատմվածքները, վեպերն ու այն դիմումները, որ նա ներկայացրել է Գրական ֆոնդին՝ նպաստ ստանալու համար:

2. Հրատարակել մի ընդարձակ մենագրություն հետևյալ թեմայով. «Գրող №-ի անվան մեջտեղում դրված գծիկը և նրա նշանակությունը սովետահայ ռեալիստական արձակի զարգացման գործում»:

3. Քաղաքում, ուր ապրում է հոբելյարը, ամենաբարձր շենքի ճակատին ամեն օր մութը ընկնելիս լուսառեկլամի ենթարկել տեղական թերթի հոդվածում արտահայտված հետևյալ լուսավոր միտքը.

«Գրող N-ի գործերը իրենց գեղարվեստական մշակվածությամբ և գաղափարների խորությամբ համարվում են սովետահայ արձակի նվաճումները»:

Հավատացողներին խրախուսելու համար սահմանել երկու մրցանակ, որոնցից մեկը տալ հիշյալ հոդվածի հեղինակին, իսկ մյուսը՝ հոբելյարին, եթե պարզվի, որ երկուսն էլ միևնույն անձնավորությունը չեն:

4. Առաջարկել տերմինաբանական կոմիտեին՝ ի պատիվ

հոբելյարի հիսուն տարով գործածությունից հանել «համետություն» և «ազնվություն» բառերը:

5. Հայտարարել մրցանակաբաշխություն հեղինակի մեծադիր արձանը պատրաստելու համար: Պատրաստելուց հետո արձանը բաժանել մասերի և դնել ա) մի ոտքը մայրաքաղաքում, մյուսը՝ Յննդավայրում, բ) մնացած մասերը՝ հոբելյարի՝ Երևան քաղաքում կառուցած սեփական հարկաբաժնի առջև:


6. Առանձին ժողովածուով հրատարակել այն սրտառու ճառերն ու բաժակաճառերը, որ մի քանի օր առաջ արտասանել են հոբելյարի 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում և 150 հոգու համար սարքված բովանդակալից բանկետում:

Ժողովածուն վերնագրել հետևյալ կերպ. «Թարմ նյութեր սովետահայ երգիծաբանների օգտագործման համար»:

Նախագծի հեղինակ՝

ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆԻ

1962



ԾԻԾԱՂԵԼԸ ԲԱՎԱԿԱՆ ՁԷ

Մի քանի տարի առաջ մեր գյուղերից մեկում ինձ ծանոթացրին տեղիս ատամնաբույժի և նրա կնոջ հետ: Երկուսն էլ իրենց անունները ինձ բաշխեցին մի առանձին հանդիսավորությամբ.

— Հորացիո:

— Գրաֆինիա:

«Հորացիոն ինձ այնքան էլ չզարմացրեց, բայց, հեռի լուսողաց, «Գրաֆինիան» ուղղակի ցնցող էր:

Ես, իհարկե, մինչ այդ էլ ապշեցուցիչ անուններ լսել էի: Հիշում եմ մեր գյուղում մի բատրակ կար, անունը՝ Կնյազ, իսկ հոր անունը՝ Վարանցով: Հիշում եմ նաև մի ծակշավար հալիվորի, որի անունն էր Նամեստնիկ, այսինքն՝ փոխարքա: Կային նաև տրեխավոր կուտուզովներ, խեղճ ու կրակ տեր-ղովասովներ: Բայց ասածս վաղուցվա բան է: Հիմա նրանք չկան: Չկան նաև նրանց անգրագետ հայրերն ու կնքահայ-

րերը, որոնք միամիտ սնափառությամբ և աշխարհիս զորեղ-ներին հաճոյանալու ցանկությամբ անձնանուններ էին դարձնում ամեն մի շողշողուն տիտղոս ու ազգանուն և դրանցով զարդարում նորածինների օրորոցներն ու իրենց թանձր տգիտությունը:

Ինչպե՞ս է պատահել հապա, որ նրանց խավարամիտ սովորությունը հարություն է առել մեր լուսավոր դարում: Ատավի՛զմ է դա, թե ուրիշ բան: Ընդունենք, որ տիկին Գրաֆինիայի ծնողներն անուս մարդիկ են եղել և 30-35 տարի առաջ իրենց նորածին աղջկան կնքելիս տարված են եղել անցյալի հովերով և կամ չեն իմացել, թե ինչ ասել է գրաֆինիա: Ընդունենք: Բայց դրանից հետո ի՞նչ բացատրություն տանք այն անզուսպ հիացմունքին, որով նա ինքը, այդ անուս ծնողների ուսյալ դուստրը, արտասանում է իր ծաղրարժան անունը: Արդյոք դա իրավունք չի՞ տալիս խորհելու, որ նա ինքն էլ նույնպիսի զարմանահրաշ անուններ է պարզաբերում իր զավակներին:

Սա լրջորեն խորհելու բան է, մանավանդ, որ այն ինչ դեռ չեն արել այդ տիկինն ու իր պերձանուն ամուսինը, արդեն արել են շատ ուրիշ ծնողներ, որի հետևանքով ներկայումս մենք ստիպված ենք ավելի ու ավելի հաճախ լսել ու կարդալ մեկը մյուսից անհեթեթ ու ծիծաղելի, մեկը մյուսից ապշեցուցիչ ու անմարդկային անուններ, որոնք անպատվաբեր ու վիրավորական են ոչ միայն դրանցով ծանրաբեռնված մարդկանց, այլև այն հասարակության համար, որի մեջ նրանք ապրում են:

Վերջերս օրինակ, ես առիթ ունեցա ծանոթանալու մի երիտասարդի հետ, որի անունն էր Ռոսինանտ: Այդ նշանավոր անունը Դոն-Կիխոտոն ստեղծել է իր քնձոտ երիվարի

համար, մի անուն, որ, ինչպես ասում է Սերվանտեսը, «բացատրում է, թե այդ ձին առաջ եղել է մի սովորական լաբու, իսկ ներկայումս, մնացած բոլորից առաջ անցնելով, դարձել է աշխարհիս առաջին լաբուն»: Դժվար չէ կռահել, որ հիշյալ երիտասարդի համար անուն ընտրողները, գրագետ մարդիկ լինելով, պարզապես թերթել են անմահ երգի-ժաբանի վեպը, կանգ առել առաջին իսկ հավանած հնչեղ անվան վրա, այլևս չմտածելով, թե անվան փոխարեն ինչպիսի՞ խրխնջացող ծաղրանուն են կայցնում իրենցից ծնված մարդ արարածին:

Բայց քչերը չեն, որ իրենց գրագիտությունն ու կրթածությունը նույնպես ի ցույց են հանել ոչ այլ կերպ, քան իրենց զավակների համար ջոկած անուններով: Հեռու չգնալու համար հիշենք հանրածանոթ մի անուն, որ հաճախ լրսվում է ռադիոյով: Ջոնսոնի: Նրա ընթերցասեր կնքահայրերին քիչ է թվացել «Տասն օր, որ ցնցեց աշխարհը» գրքի հեղինակ Ջոն Ռիդի անունը: Ազգանունն էլ կայցրել են պոչից և ստացել են մի բան, որը նույնպես կարող է ցնցել աշխարհը, քանի որ հնչում է մի քանի ռադիոալիքներով: Դեռ լավ է, որ գրքի վերնագրին ձեռք չեն տվել, թեև գտնվել են այդպիսի բան անողներ էլ, որոնք իրենց աղջկա վրա դրել են Մարիետա Շահինյանի «Միսս Մենդ» վեպի լրիվ վերնագիրը:

Ինչպես տեսնում եք, մեր օրերում գրագետ ու ընթերցասեր մարդիկ կուլտուրականությամբ փայլելու ցանկությամբ արել են նույնը, ինչ որ հեռավոր անցյալում անգրագետ հայ գյուղացին արել է իր անկուլտուրականության բերումով: Եվ քանի որ գրագետ մարդը կարող էր իմանալ նրանց անունները մարդկանց ավելի շատ ազգանուններ, ապա և,

անունների փոխարեն անմահների վսեմաշուք ազգանուններով զարդարված, մեծացել ու կյանք են մտել այնքան շատ հայորդիներ, որ հիմա թվում է, թե բոլոր ազգերի ու ժամանակների մեծահոշակ գրողներն ու կոմպոզիտորները, գիտնականներն ու հասարակական-քաղաքական գործիչները, հարություն առնելով և բոլոր աշխարհամասերից հավաքվելով, բնակություն են հաստատել Հայաստանի քաղաքներում ու գյուղերում:

Մենք այժմ սկսել ենք նույնիսկ չգարմանալ, երբ թերթերում կարդում ենք, որ, օրինակ, Բայրոնը, Բերանսեն, Բեթհովենը, Լիստն և Միլտոնը ցավակցություն են հայտնում Հոմերոսի վաղաժամ մահվան առթիվ, Վաշինգտոնը ապահարզան է պահանջում իր կին Գլինկայից, որ Կոպենհեյկոսը, Վագները, ժյու-Վեռնեն ու Շեքսպիրը կատարել են իրենց արտադրական առաջադրանքները: Գոգոլը պարտավորվել է չորս մայր ոչխարից ստանալ տասը գառ, Շիլլերը սիստեմատիկաբար թերակշռում է կարագը...

Իսկ ինչքա՞ն ու ինչքա՞ն թելմաններ, ֆրունզներ կամ ֆրունզիկներ բուդյոնիներ, վորոշիլովներ, նեյսոններ, նանսեններ ու լերմոնտովներ կամ լերմոնտիկներ կան մեր շուրջը: Մեր գյուղերից միայն մեկում ես համրել եմ տարբեր տարիքի չորս Պուշկին: Նրանց աչքածակ ծնողներից ոչ մեկի մտքով չի անցել, որ մեծ բանաստեղծի անունն իսկ Պուշկին չի եղել, այլ մի համեստ ու հասարակ Ալեքսանդր: Սակայն այդ անունը չի գոհացրել նաև այն մարդկանց, ովքեր հավակնել են իրենց զավակներին տված անունով հարգել Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակը: Հեղափոխական մեծ գործչի ազգանունից նրանք մակաբերել են մի սարսուղի անուն՝ Մյասնիկ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մսագործ բառի

նուսերեն թարգմանությունը: Եվ ԶԱԳՍ-երում հարյուրավոր ծննդականների մեջ այդ անունը հանգիստ գրանցել են նաև... ուսերեն տառերով:

Հոշակավոր մարդկանց ազգանուններով և դրանց վերաձևումներով չի սպառվել անվանաստեղծ ծնողների ու պերտուարը: Նրանցից ոմանք իրենց երեխաներին տվել են նաև քաղաքների անուններ, ամեն կերպ ջանալով ընտրել որքան հնարավոր է մեծ ու բարեկարգ քաղաք: Մեր ոչ անհայտ գրողներից մեկն, օրինակ, իր որդու անունը դրել է Մոսկով: Ի՞նչ է դա: Հայրենասիրություն: Համենայն դեպս, ոչ մի հայրենասեր ոուս կամ ուկրաինացի իր երեխային չի անվանել Մոսկվա կամ Տամբով, Կիև կամ Պոլտավա: Անվանակոչության այդպիսի եղանակ հայտնի չէ քաղաքակիրթ աշխարհին: Բայց եթե հայ գրողն է այդպիսի բան արել, ապա զարմանալի չէ, որ Երևանի Կ. Հայաբյանի փողոցի № 13 շենքում, ընդամենը 40 քառակուսի մետր բնակելի տարածության վրա տեղավորված են մեկ Լոնդոն, մեկ Բեռլին և մեկ Փարիզ՝երեք եղբայրներ: Սակայն մայրաքաղաքներն անգամ նեղ են թվացել ոմանց: Նրանք աշխարհի քարտեզը տնտղելով՝ ձեռքները դրել են առողջարար կլիմա ունեցող ամբողջ աշխարհամասերի ու երկրների վրա: Դրա հետևանքով էջմիածին քաղաքում կա Մանջուրիա, որն աշխատում է որպես բուժքույր, իսկ հանրապետության գանազան վայրերում կան ավստրալիաներ, բրազիլիաներ, մեքսիկաներ, արգենտինաներ և նորաժնունդ կոնգոներ: Որոշ ընտանիքներում նույնիսկ բանաստեղծաբար հոգ են տարել, որ նմանօրինակ անունները հանգավորվեն, ինչպես, օրինակ, Երևանում բնակվող և տողերիս հեղինակին ծանոթ երեք քույրերի անունները՝ Բուրաստան, Հայաստան, Վրաստան:

Ոմանք էլ Դոն-Կիխոտի պես մտահոգված են եղել, որ իրենց հնարած անունները դառնան յուրատեսակ տեղեկատուներ, ամեն ինչ բացատրեն ու նշեն: Եվ եթե, օրինակ, երեխային կնքելիս ընտանիքում դժբախտություն է պատահած եղել, նրան կոչել են Վիշտ կամ Զուլում: Եթե եղանակը բարեխառն է եղել, երեխային դարձրել են Մեղմիկ, խառը եղանակի դեպքում՝ Փոթորիկ: Եթե հարևանի աղջիկը կոչվելիս է եղել Արշալույս, իրենց երեխայի անունը դրել են Վերջալույս, թեև դա իբրև մարդու անուն նզովքի պես բան է: Եթե կատարած են համարել աղջիկներ ունենալու պլանը, աներես նորածիններին անունների փոխարեն տվել են այսպիսի խիստ հրամաններ՝ Բավակա՛ն, Վերջի՛կ, Հերի՛ք, Թամա՛մ...

Պատահել են ավելի մեծ դիպացունի տեր, ավելի մեծ իրադարձություններ նշող անվանաստեղծներ, որոնցից մեկն, օրինակ, Սիսիանի շրջանի Լոր գյուղում, ցանկանալով հավերժացնել սահմանադրության հրապարակման օրը, իր որդու անունը դրել է... Սահմանադրություն: Այժմ այդ Սահմանադրությունը, ազգանունը՝ Գրիգորյան, սկսնակ բանաստեղծ է և, որպեսզի անանուն չմնա, աղձատել ու իմաստազրկել է իր հին անունը և դարձել Սահմեղիկ:

Ոմանք էլ գործել են մեր հիմնարկների ու արտելների սիրած մեթոդով: Եթե վերջիններս իրենց անվանում են «Արմզիդեպ», «Վզուկ», «Լենկար», «Երկար», «Հայելեկտրամատվաճառ» և այլն, ապա նրանք էլ նույն կերպ, իրենց զավակներին կոչել են Վիլբես, Երկապինե, Լենդորուշ, Մարլեն: Այդպիսի թախսմանային հապավյալ անուններ են սարքել նրանք մեզ համար որպես սրբություն հնչող ազգանունների առաջին վանկերից ու սկզբնատառերից, երբեմն մեջ

բերելով այնպիսի ազգանունների մասունքներ, որ առաջինների կողքին հնչում են որպես սրբապղծություն:

Այդպիսի անուններով ներկայումս, ինչպես պետք էր սպասել, լի են մեր մամուլի էջերը: Այս տարվա միայն առաջին երեք ամիսների ընթացքում հանրապետական և շրջանային թերթերից քաղված արտառոց անունների ցանկը կարող է մի ամբողջ մատյան լցնել: Համտեսի համար մեջ եմ բերում դրանց միայն մի չնչին մասը: Ահավասիկ. **Ռաֆլեզիա**, **Չիչերին** («Խ. Հայաստան»), **Յուժանկա**, **Մարֆունկա**, **Էսֆերինա** («Բանվոր»), **Լիմոն**, **Կիսլանջ**, **Ստալիկ**, **Մարտոնա**, **Միոիլ**, **Բլանդինա** («Երևան»), **Դարվին** («Դիլիջան»), **Փոփոլ**, **Հաշտուհի**, **Հարքուհի**, **Գլազ**, **Գուլաբ**, **Փարիզար**, **Թոռան**, **Հոալլ**, **Հուսյալ**, **Դինարկա** («Կոլտնտեսային ուղի» — միայն մի համարում), **Կիպրանոս** («Լեռնագործ»), **Տուֆանիկ** («Ղուկասյանի կոլտնտեսական»), **Պատասխան** («Առողջապահություն»), **Ֆինգոլյա**, **Հայլևան** («Անասնապահ կոլտնտեսական»), **Պլատին** («Ավանգարդ»), **Անագ** («Կոմունիզմի ուղիով»), **Սիլիկով** («Կոլտնտեսային ուղի»), **Տորիչել**, **Հայասեր** («Որոտան»):

Միայն «Երևան» թերթի վերջէջնյա բազմահարկ սև քառակուսիների մեջ գրեթե ամեն օր կարող եք գտնել մարդկային նորմալ անուններին փոխարինելու եկած բազմաթիվ այսպիսի բաներ. **Սաթո**, **Նատո**, **Գրիշա**, **Ալլոշա**, **Սերյոժա**, **Սաշա**, **Մաշա**, **Յուրա**, **Միշա**, **Տանյուշա**, **Վանյուշա**, **Վալլուշա**, **Շուրա**, **Յաշա**, **Վանյա**, **Տանյա**, **Արմենչիկ**, **Կարենչիկ**, **Ժորժիկ**, **Էդիկ**, **Սեդիկ**, **Թութուշիկ**, **Նունուշիկ**... Մարդկանց ծննդյան վկայականների, անձնագրերի և մյուս փաստաթղթերի մեջ գրառված այդ սուտոգատ անունները, անունների փաղաքջական բազմապիսի ձևերը, որոնք հանդուրժելի են

միայն մտերմական, բայց ոչ երբեք պաշտոնական-հասարակական հարաբերությունների մեջ, մեզ մոտ այնքան են ամրապնդվել և ինքնուրույնացել, որ հաճախ Սերոժը կամ Գրիշան չեն էլ հավատում, որ իրենց անունն է Սարգիս կամ Գրիգոր:

Տեղին է հիշել նաև մի այլ զավեշտական սովորություն, որի զորությամբ միջազգային միևնույն անվան ազգային-ավանդական ձևը փոխարինվում է նրա օտարատիպ ձևերով, որոնք տարբեր անուններ չեն և որոնցից յուրաքանչյուրն այնքան է տիպական այս կամ այն ժողովրդի համար, որ անսխալ ցույց է տալիս մարդու ազգային պատկանելիությունը, ուստի և օտարոտի ու ծիծաղելի է այդ ազգությանը չպատկանողին տրվելիս: Այդպես մեր **Հովհաննեսը** դառնում է **Ջոն** կամ **Ժան**, **Հակոբը՝ Ժակ**, **Միքայելը՝ Միշել**, **Սարգիսը՝ Սերժ**, **Գևորգը՝ Ժորժ**, թեև ոչ մի ֆրանսիացի իր որդուն չի կոչել **Հովհաննես** կամ ոչ մի անգլիացի իր **Ջոնը** չի փոխի ֆրանսիական **Ժանի** հետ: Ամեն մեկը կդիմի իր ազգային անվանաձևին: Միակ բացառությունը մենք ենք, դժբախտաբար, որ ստեղծել ենք անվանաձևերի մի չտեսնված խառնաշփոթ: Եթե սփյուռքի հայության մեջ այդ բանը տեղի է ունենում ազգային փոքրամասնությունների անխնա ասիմիլացիայի ճանապարհին, ապա մեզ մոտ, մեր ազատ հայրենիքում, դա արդյունք է ոմանց չտեսության, օտարամոլության և կամ տգիտության: Էլ չեմ խոսում մեր ժողովրդի պատմությանը, մտածողությանը և հոգեբանությանը ոչ մի ասոցիացիայով չառնչվող **Ադոլֆի**, **Ռուդոլֆի**, **Լավրենտիի**, **ժոզեֆինայի**, **ժորժետայի**, **Ֆրանցի** և այլ իմպորտային տարածված անունների մասին, որոնց «մուշտարիների» միակ մտահոգությունը, երևի այն է եղել, որ իրենց երեխաների անուններն էլ ճոճոան արտասահմանյան կոշիկների պես:

Եվ այդպես, չէ թե հատ ու կենտ, այլ բազմաթիվ մարդիկ անձնանունների փոխարեն պաշտոնապես ժառանգել են շքմեցուցիչ ծաղրանուններ, օտարազգի հռչակավոր անձանց ազգանուններ, ազգանունների և զանազան բառերի ու բուսային անմիտ հապավումներ, տեղանուններ, գրքերի վերնագրեր, ձեռք առնելու չափ անլուրջ քնքշանքներ, իրենց ծնողների լավ չլսած կամ չհասկացած բառերն ու տերմինները, և, վերջապես, միջազգային տարածված անունների ոչ թե հայկական, այլ օտար ազգային ձևերը, որոնց զորությամբ շատերը դարձել են անվանական ֆրանսիացիներ, անգլիացիներ, գերմանացիներ, հոլանդացիներ...

Նրանց ծնողներից ամեն մեկն, անշուշտ, մտածել է այսպես. «Ո՞ւմ ինչ գործն է, երեխան իմն է, ինչ անուն ուզեմ՝ կտամ»: Եվ տվել է: Իսկ **ԶԱԳՍ**-ի պատրաստակամ աշխատողներն իրենց ստորագրություններով ու կնիքով վավերացրել են ամեն մի մեծատառ անհեթեթություն, որը որպես անուն ցմահ պետք է ուղեկցի մարդուն:

Այդ ձևով անվանակոչված նորածիններից շատերը ներկայումս արդեն հասակ առած մարդիկ են, ոմանք հասարակ ու դեռ չձանաչված, ոմանք՝ արդեն աչքի ընկած կամ մեծանուն: Եվ եթե առաջինների արտաոտոց անունները, ընտանեկան գործածության սահմաններից դուրս գալով, այժմ երևում են մահազոների, ցավակցությունների, ապահարգանի հայտարարությունների մեջ, ապա մյուսներինը, բնականաբար, հայտնվում են նաև կառավարական պարզատրումների ցուցակներում, հնչում են ռադիոյով ու հեռուստատեսությամբ, բեմերից ու էստրադաներից, մետրանոց տառերով թառում են աֆիշների վրա, բազմում գրքերի ու դիսերտացիաների ծակատին, ոչ սակավ հայտնի դառնում

աշխարհով մեկ ու այլ կերպ ստիպում, որ ոմանց երբեմնի անլրջության կամ տգիտության պատճառով կարմրենք մենք բոլորս, մի ամբողջ ժողովուրդ:

Մեզ զբաղեցնող հարցն, այդպիսով, շատ ավելի տխուր է, քան ծիծաղելի: Ասենք, մենք առանց այն էլ արդեն բավականաչափ ծիծաղել ենք մեր լսած ու կարդացած անմարդավայել անունների վրա: Երգիծական պոեմներ ու ոտանավորներ են գրվել դրանց մասին: Բայց ո՛չ մեր ծիծաղը, ո՛չ հանգերով մեզ խուտուտ տալը չէին կարող վերացնել կնիքներով վավերացված այդ անունները: Ի՞նչ անել հապա: Երևույթն այնքան ակնբախ է, որ մնում է միայն մի միջոց՝ պետական միջամտություն:

Ասում են, թե տարիներ առաջ այդպիսի միջամտության պես մի բան է եղել. ԶԱԳՍ-ի բաժանմունքներին կարգադրված է եղել ծննդյան վկայականներում չգրանցել այդօրինակ անունները: Դժբախտաբար, մեր մանկամուտների ու մանկապարտեզների անվանացուցակները, դպրոցական դասամատյանները և մեր ականջին հասնող նորանոր «անունները» չեն գալիս ապացուցելու, թե այդ կարգադրությունն ունեցել է գոհացուցիչ արդյունք: Անհրաժեշտ է, ուրեմն, կարգադրելուց առաջ իմանալ, թե ում էս կարգադրում: Անհրաժեշտ է, նախ և առաջ, որ ԶԱԳՍ-ում աշխատեն այնպիսի մարդիկ, որ իրենց զարգացմամբ ու խելքով բարձր կանգնած լինեն նորածինների համար մերժելի անուններ առաջարկողներից:

Սակայն չի կարելի հարցը սպառված համարել միայն նրանով, որ ազդեցիկ ու խելացի աշխատողներ ունենալու դեպքում ԶԱԳՍ-ն այլևս չի գրանցի այդպիսի անուններ: Պետք է մտածել նաև արդեն գրանցվածների մասին և

ազատվել դրանց գոնե ամենաարտառոց նմուշներից: Դրա համար անհրաժեշտ է պետական որոշման ուժով փոխման ենթակա համարել կուլտուրական հասարակության համար խիստ անվայել ու վիրավորական անունները: Անհրաժեշտ է նաև, որ դրանք, մինչև իսկական անձնանուններով փոխարինելը, թերթերում նշվեն միայն սկզբնատառերով, ինչպես գրքերի մեջ նշվում են անվայելուչ բառերը:

Մեր ակնկալած միջամտությունը մեծ դժվարությունների չի հանդիպի, քանի քչերն են տիկին Գրաֆինիայի պես հըրձվում իրենց ծնողների անվանաստեղծական գյուտերով: Ծառաշատերը, առանց պարտադրման ու հորդորանքի, սիրով կազատվեն դրանցից, եթե միայն նվազագույնի հասնեն անվանափոխության հետ կապված ձևականությունները: Այդ ձևականությունները պետք է առավել նվազ լինեն, մանավանդ այն դեպքում, երբ առաջ է գալիս ոչ թե պաշտոնապես վավերացված անունները փոխելու, այլ շտկելու, իսկական ձևը վերականգնելու հարց, այսինքն՝ երբ, օրինակ, մի Էդիկ ցանկանում է դառնալ Էդվարդ:

Եկեք, ուրեմն, բոլորս մտածենք և այնպես անենք, որ մեզ հուզող համահասարակական անախորժությունը ժառանգություն չթողնենք գալիք սերունդներին:

1962

«ԵՎՉԵՆԻ ՕՆԵՔԻՆ»-Ի ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Ս. Պուշկինի «Եվզենի Օնեգին»-ի՝ համաշխարհային գրականության մեջ իր նախօրինակը չունեցած այդ ռեալիստական չափաժողովեպի հայերեն թարգմանությունը, որի սյակասը վաղուց էր զգացվում, ինքնին դրական և ուշագրավ ենթույթ է մեր գրական-հասարակական կյանքում: Բելինսկու գնահատությամբ «ռուսական կյանքի հանրագիտարան» հանդիսացող այս երկի թարգմանությունը, անկասկած, մեծ դրժվարություն է ներկայացնում: Այստեղ բավական չէ միայն բնագրի լեզվին և հայերենին տիրապետելը. թարգմանիչը պետք է լավ ծանոթ լինի օնեգինյան էպոխային և ունենա պոետական լուրջ կարողություններ:

«Եվզենի Օնեգին»-ի հայերեն թարգմանության լուրջ և շնորհակալ գործին ձեռնամուխ եղավ լեզվաբան Գուրգեն Սևակը, որն իր առաջաբանում բավական խոսում է այն մասին, թե ինչ դժվարություններ պիտի հաղթահարել մեծ Պուշկինի հանձարի փայլը, նրա լեզվի հմայիչ սահունությունն ու թեթևությունը, նրա չափաժողի երաժշտականությունը հայ ընթերցողին հաղորդելու, երկի գեղարվեստական առանձնահատկությունները պահպանելու և միաժամանակ բոլոր մանրամասնությունները գիտական ճշտությամբ արտահայտելու համար:

Առաջաբանի ընթերցողը կարող է միայն ուրախանալ՝ տեսնելով, որ թարգմանիչը պատրաստվում է գործին մոտենալ դժվարությունները գիտակցող մարդու լրջությամբ: Բայց, դժբախտաբար, այդ ակնկալությանը փոխարինելու են գալիս

գարմանքն ու տարակուսանքը, երբ քիչ հետո թարգմանիչը շարադրում է իր թարգմանչական սկզբունքները:

Այդ սկզբունքներից պարզվում է, որ Գ. Սևակը «ստիպված է եղել» սեղմ խոսելու մեջ գերազանցել Պուշկինին և կատարել վանկերի ու բառերի մի նորատեսակ խնայողություն: «Պետք է նշել նաև այն, — գրում է թարգմանիչը, — որ առավել դժվար էր բնագրի առանց այն էլ սեղմ ու զուսպ շարադրանքը թարգմանել առավել սեղմ կերպով, քանի որ հայոց լեզվի տաղաչափությունը հնարավոր չի դարձնում պահպանել բնագրի 8 և 9 վանկանի տողերը, որի հետևանքով ես ստիպված եմ եղել՝ ամբողջ թարգմանելու ութ վանկանի տողերով՝ այդպիսով ամբողջ վեպի մեջ գործածելու 2.700 վանկ ավելի պակաս, քան բնագիրն ունի. սա կանի մոտ հազար բառ կամ 335 տող բնագրից պակաս, մինչդեռ նույնիսկ արձակի թարգմանությունը հայերենում տալիս է 20—25 տոկոս ավել»:

Այս հաշիվների մեջ դժվար է գտնել որևէ տրամաբանություն: Մի կողմից թարգմանիչը պնդում է, թե «նույնիսկ արձակի թարգմանությունը հայերենում տալիս է 20—25 տոկոս ավել», մյուս կողմից խելացի բան է համարում Պուշկինի 9 վանկանի տողերը հայերենում 8 վանկանի դարձնելը: Անշուշտ, շատ ավելի բանական կլիներ, եթե իր մեղքը հայոց լեզվի տաղաչափության վրա գցելու փոխարեն՝ ընկ. Սևակը հետևած լիներ մեր կլասիկ թարգմանիչներին (Սադաթյան, Թումանյան, Ժատուրյան և ուրիշներ), որոնք նման դեպքերում, երբ բովանդակությունը չեն կարողացել տեղավորել բնագրի չափի մեջ, ընտրել են ոչ թե պակաս, այլ ավելի մեծ տարողության տող: Գ. Սևակը հակառակն է արել և քանի որ

* Այս և հետագա ընդգծումները մերն են: — Ս. Վ.:

նա հավատարիմ է մնացել այդ ֆորմալիստական սկզբունքին, ինչպես նաև բառացի թարգմանելու և, գլխավորապես, բնագրի արտաքին-ձևական հատկանիշները ստրկորեն պատճենահանելու ցանկությանը, ապա դժվար չէ կռահել, թե ինչ որակ պետք է ունենա նրա կատարած թարգմանությունը: Այնուամենայնիվ, բերենք մի քանի օրինակ:

Վերցնենք թեկուզ այն տան թարգմանությունը, որի մասին թարգմանիչը իր առաջաբանում գրել է. «Այսպիսով տունն ավարտված է, գեղարվեստորեն ձևավորված և չի մատնում տքնության հետքը»: Ահավասիկ.

Սոսու ծյուղին սաղարթակոր
Մի ժամանակ, վաղորդայնին,
Պարզ դամբանի խորհրդավոր
Պսակն էր մեղմ ճոճում քամին.
Մերք էլ երկու մտերմուհի,
Լուսնի շողով, ըստ պատեհի
Այցի էին նրան գալիս
Եվ գիրկ ընդ խառն այնտեղ լալիս:
Այժմ... խուլ արձանն, անտեր,
Հարթվել է հեզ նրա ճամփան,
Եվ էլ պսակ չկան վրան:
Միայն տկար և ալեհեր
Հովիվն է իր հին երգն ասում
Եվ անպաճույճ տրեխ հյուսում:

Որտեղնում ասված է.

На ветви сосны преклоненной,
Бывало, ранний ветерок
Над этой урною смиренной
Качал таинственный веноч.

Бывало, в поздние досуги
Сюда ходили две подруги,
И на могиле при луне,
Обнявшись, плакали оне.
Но ныне... памятник унылый
Забывт. К нему привычный след
Заглох. Венка на ветви нет;
Один, под ним, седой и хилый
Пастух по-прежнему поет
И обуть бедную плетет.

Համեմատելով բնագրի հետ, ընթերցողը կտեսնի, որ թարգմանության մեջ՝ 1) սոսու ծյուղին գտնվող պսակը մի քանի տող հետո վճռականորեն փոխել է իր տեղը և իջել մահարձանի վրա. 2) պարզ չէ, թե ինչին են այցելում ընկերուհիները՝ դամբանի՞ն, պսակի՞ն, թե՞ քամուն. 3) «Один, ПОД НИМ» բառերը դուրս թողնելու հետևանքով հովիվը ոչ միայն կորցրել է իր նստելու տեղը, այլև այդ հատվածում երևալու իրավունքը: Այնուհետև կպարզվի, որ Պուշկինի մոտ ոչ մի խոսք չկա ճամփի հարթվելու մասին, քանի որ ճանապարհի համար չկա ավելի ցանկալի բան, քան հարթված լինելը: Պուշկինը պարզապես ասում է, թե դեպի գերեզման ձգվող արահետն արդեն ամայացել է կամ ծածկվել: Պարզվում է նաև, որ արձանը ոչ թե խուլ է, այլ մոռացված, և որ դա ոչ թե արձան է, այլ մի տրտում մահարձան («памятник унылый»), պարզվում է նաև, որ «հեզ ճամփան», «անպաճույճ տրեխը», «ըստ պատեհի» անպատեհ արտահայտությունը և մյուս անձաշակությունները պատկանում են թարգմանչին: Բայց ամենից առաջ տեսնում ենք, որ Պուշկինի «տաղի թեթևության, լեզվի հմայիչ սահունության», պոետական արվեստի և երաժշտականության հետքն անգամ չի մնացել թարգ-

մանության մեջ: Եթե դա տեղի է ունեցել այն տան մեջ, որն արժանացել է թարգմանչի առանձին հիացմունքին, ապա չպիտի զարմանալ՝ կարդալով հանձարեղ բանաստեղծին վերագրված այսպիսի տողեր.

Հիվանդ մորաքրոջ տուն գալով
Վլազենսկին էլ Նրան տեսավ,
Խոսեց հետը, ուշքը տարավ,
Նրա մասին, այդ տեսնելով,
Եվ շտկելով կեղծամ, մորուք՝
Հետաքրքրվեց մի թերուկ: (էջ 188)

Կամ՝

Գինու ծարավն է դեռ խնդրում
Հեղեղել ճարպը կոտլետի... (էջ 27)

Կամ՝

Ինձ փայլաշող մի կին խնդրող,
Պատում է ինձ ցատում ու դող,
Սուր էպիգրամ է սկսում
Իմ հոգու մեջ իսկույն բլթալ.
Իսկ դու արի՛, տու՛ր մադրիգալ: (էջ 108)

Եթե երբեմն մեծ ծիզեր գործադրելով կարելի է լինում հասկանալ այդ խառնաշփոթ, կցկտուր, անարվեստ և քերականության կանոնների դեմ ըմբոստացող նախադասությունները, ապա շատ այլ տողեր ու նախադասություններ վեր անածվել իսկական ռեբուսների:

Օրինակ.

Առավոտ է, բոլորն՝ ոտքի,
Բայց Տանյան չի գալիս մտքի: (էջ 89)

Вот утро: встали все давно,
Моей Татьяне все равно.

Կամ՝

Արձակին է տարիս քաշում,
Տարիս աշխույժ հանգն է քշում... (էջ 162)

Лета к суровой прозе клонят,
Лета шалунью рифму гонят...

Կանոնավոր հայերենով և ոչ բառացի թարգմանելու դեպքում թարգմանիչը մեր մեջ բերած տողերի իմաստը հազիվ պիտի կարողանար տեղավորել տասը վանկանի տողերի մեջ, և թերևս դարձյալ դուրս մնային որոշ բառեր, մինչդեռ Նա այդ ամենը խցկել է իր ընտրած 8 վանկանի տողերում, շքնչահեղձ անելով լեզուն ու միտքը:

Երբեմն էլ թարգմանիչը, Պուշկինի այս կամ այն նախադասությունից վերցնելով մեկ կամ երկու բառ, քմահաճ կերպով հորինում է նոր բաներ: Օրինակ.

На столик ставят воцаной
Кувшин с брусничною водой...

Թարգմանված է՝

Մոմած կծում հապանասի (!?)
Օշարակն էլ չի պակասի: (էջ 72)

В глуши звучнее голос лирный,
Живее творческие сны.

թարգմանված է՝

Այնտեղ քնարն է աննվաղ,
Եվ կենսախիղճ՝ ամեն ավուռն: (էջ 45)

Портреты дедов на стенах...

թարգմանված է՝

Պատին՝ արքայապատկերներ... (էջ 50)

Իր առաջաբանում հայտարարելով, թե «չի կարելի դուրս գցել ոչ մի եական նկարագիր», ընկ. Սևակը, անցնելով գործի, անխնա դուրս է գցել այն բոլոր «եական նկարագիրները». արտահայտություններն ու բառերը, որոնք չեն տեղավորվել իր ընտրած չափի մեջ: Ահա մի երկու օրինակ: Բնագրում կարում ենք.

Был вечер. Небо меркло. Воды
Струились тихо. Жук жужжал.

Առաջին նախադասությունը մի կերպ թարգմանելուց հետո («Երեկո էր անդորրաբեր»), մնացած երեք նկարագրական նախադասությունները խցկվել են մի տողի մեջ և ստացվել է այսպիսի մի ամփոփագիր. «Լսվում էր լոկ բզզոց, խոխոջ»: Եվ այդ «լոկ բզզոց, խոխոջ»-ից հալ ընթերցողը պիտի եզրա-

կացնի, թե Պուշկինը ցանկացել է ասել. «Երկինքն աղոտա-
նում էր: Ջրերը հոսում էին խաղաղ: Բզզում էր բզզեզը»:
Բնագրում կարդում ենք՝

Тут были дамы пожилые
В чепцах и в розах, с виду злые;
Тут было несколько девиц,
Не улыбающихся лиц...

Իսկ թարգմանչի ասելով՝ այնտեղ կային.

Հասակն առած կանայք դժխեմ,
Վարդերով ու թասակաճեմ, (!)
Ժպտամերժ մի քանի օրհորդ... (էջ 205)

Պարզ է, որ ոչ «դժխեմ»-ն է նշանակում с виду злые, ոչ «ժպտամերժ»-ը՝ не улыбающихся лиц, ոչ այդ զարմա-
նալի «թասակաճեմ»-ը՝ в чепцах, և ոչ էլ այդ տողերը որևէ բանով նման են Պուշկինի գրածին: Եվ այսպես շատ տեղ թարգմանիչը աղձատում է միտքն ու խոսքը, միայն թե «քաշում»-ը հանգ կազմի «քշում»-ի հետ, «դժխեմ»-ը՝ «թա-
սակաճեմ»-ի հետ, «միտք»-ը՝ «ոտք»-ի հետ:

Գ. Սևակը նույն կերպ վարվել է նաև այն նրբին ակնարկ-
ների հետ, որոնց ծակատագրով ևս նա շատ է մտահոգված իր առաջաբանում: Վերցնենք միայն մի օրինակ: Հայտնի է, որ Պուշկինը իր այս չափածո վեպը սկսել է գրել Բե-
սարաբիայում, ուր նա աքսորված էր ցարի հրամանով. այդ հանգամանքն է ակնարկում բանաստեղծը, երբ խոսելով Պե-
տերբուրգի և Նևայի մասին՝ գրում է.

Там некогда гулял и я;
Но вреден север для меня.

Խոսքին այն ձևը տալով, որ իբր թե հյուսիսը վնասակար է իր առողջության համար, Պուշկինը կարողացել է ակնարկել այն, ինչ անհնար էր ուղղակի ասել ցարական ցենզուրայի պայմաններում: Եվ ահա այդ նուրբ ակնարկը թարգմանության մեջ դարձել է.

Ես էլ այնտեղ գտա բերկրանք.
Բայց հյուսիսում ունեմ վտանգ: (Էջ 20)

Պա արդեն ակնարկ չէ, ոչ էլ մանավանդ նուրբ ակնարկ, այլ վատ հայերենով ուղղակի ասված խոսք: Այդ բոլորից հետո էլ, որպեսզի «վտանգը» գտնի իր հանգը, «ГУДЯЯ И Я»-ն դարձրել է... «գտա բերկրանք»:

Այնուհետև թարգմանիչը փորձում է հայ ընթերցողին համոզել, թե Պուշկինն ասել է.

...Իշխեց իրեն ու թոթովեց,
Մի երկու բառ՝ բերանը փակ... (Էջ 134)

Պուշկինը չէր կարող չիմանալ, որ անհնար է բառերն արտասանել բերանը փակ, ուստի նա ասում է— СВВОЗЬ ЗУБЫ МОЛВИЛА ТИШКОМ...

Վարելի է բերել նաև շատ այնպիսի օրինակներ, երբ Գ. Սևակը բառը թարգմանում է ոչ այն առումով, ինչ նկատի է ունեցել բանաստեղծը, այլ այն նշանակությամբ, որն իրեն հնարավորություն է տալիս «վանկեր տնտեսել»: Այսպես, օրինակ, վեպի նվիրերգության առաջին տողը՝ Не мысля гордый свет забавить— թարգմանել է՝ «ոչ նյութ տալը սեզ աշխարհին...»: Պարզ է, որ բանաստեղծը լույս է բառը գործածել է ոչ թե «աշխարհ» նշանակությամբ, ինչ-

պես այդ արել է թարգմանիչը, այլ նկատի է ունեցել բարձրաշխարհիկ հասարակությունը, որին անվանում է գոռոզ (ГОРДЫЙ) և դրանով արտահայտում իր բացասական վերաբերմունքը նրա նկատմամբ: Գիտենալով, որ ГОРДЫЙ բառն ունի նաև սեզ նշանակությունը, որը մի վանկով պակաս է «գոռոզ»-ից, թարգմանիչը հեշտությամբ գոռոզ բառը դարձրել է սեզ, այսինքն, հակառակ հեղինակի ցանկության, պարսավելու փոխարեն մեծարել է այդ աշխարհը, թեև խոսքն այստեղ, ինչպես ասացինք, ամենևին էլ աշխարհի մասին չէ:

Թարգմանիչն իր այս «մեթոդը» կիրառում է բուն վեպի առաջին իսկ տողից սկսած— «Мой дядя самых честных правил»: Հայտնի է, որ ДЯДЯ բառը ռուսերենում նշանակում է և՛ հորեղբայր, և՛ քեռի: Վեպի տեքստից պարզ է, որ բանաստեղծը այդ տողում նկատի ունի Օնեգինի հորեղբորը, քանի որ Եվգենին նրա տոհմից է սերում և նրա օրինական ժառանգն է: Բայց քանի որ թարգմանիչն անհրաժեշտ է եղել է կարճ բառ, իսկ հորեղբայրն ավելի երկար է, քան քեռին, առանց այլևայլության նա մեջ է բերել քեռուն:

Թարգմանության մեջ գրոտեսկային ձևերով են հանդես եկել «Եվգենի Օնեգին»-ի հերոսներից շատերը: Տատյանայի անվանակոչության խնջույքին հրավիրված հյուրերը, օրինակ, թարգմանության մեջ իրենց պահում են չտեսների ու սովյալների պես. բավական է ծաշ մատուցվի՝ և ահա «զույգերն շտապում են, որ տեղ բռնեն»։ այսինչ հեղինակն ասում է. «Идут за стол рук за рукою», այսինքն՝ ձեռք ձեռքի տրված, զույգ-զույգ մտնենում են սեղանին: Ինչ վերաբերում է Օնեգինին, ապա նա, ըստ թարգմանիչի, այնքան բոխ և անտաշ մի մարդ է, որ իրեն պահել չի կարողանում նույնիսկ թատրոնում: Ահավասիկ.

...Եվգինեն Է մտնում,
Անցնում՝ տրորելով շատ ոտ... (էջ 23):

Մենք կարծում էինք, թե ընկ. Սևակը ճիշտ թարգմանած լինի բնագրի գոնե այն տողը, որի մասին Պիսարևի և Նրա հետևորդների գրած հոդվածները կարող են մի ամբողջ հատոր կազմել: Ծորտատիրական կարգերը հիշեցնող հայտնի տողը— «Вот бегает дворовый мальчик»— (ահա վազվազում է ճորտ տղան) թարգմանված է՝ «բակում խաղում է մի տղա», այսինքն՝ дворовый мальчик-ը դարձել է բակում խաղացող տղա, թեև Պուշկինի մոտ խոսք էլ չկա բակի մասին:

Ավելորդ ենք համարում առանձին խոսել թարգմանության լեզվի մասին, որովհետև մեր բերած օրինակներն արդեն ցույց են տալիս, թե ինչպիսի լեզվով է ընկ. Սևակը թարգմանել Պուշկինին: Այստեղ կասենք միայն, որ նա, որպես լեզվաշինարար, մեր լեզվին նվիրաբերել է ոչ միայն թասակաձեմ, աճակից բառաձևերը, այլև հարյուրավոր այսպիսի տարօրինակություններ՝ սնաբեր, հյուրաբեր, գրգահառաչ, երկառավոտ, մեծախում: Դրա հետ միասին հորինել է՝ պոռթկուն բարիք, պայազատ արկածներ, նազան թախիծ, նենգացասում ժպտալ, կանանց հետ փախչող ոտքեր, վեց թերթի չափ գրված... երկտող, համառ փույթ, թախժոտ մըրմուռներ, «վարպետ սոսկ նմանման», «ժիր առկայծուն, թըռչող զուգեր», անեռ սիրտ, արփիաձեմ կիրք, անդող հմայք, սրդող խելք և այլ բաներ:

Այնուհետև, չտեսնված նորաձևությունների են ենթարկվել հայոց լեզվի հանրաժանոթ արտահայտությունները. թարգմանիչը ասում է ոչ թե «ակակջը ձայնի», այլ՝ «ուշքը

ձայնի»։ Նա կարծում է, որ եթե ասում ենք «քիթը կախել», ապա անհրաժեշտ է ցույց տալ կախելու ուղղությունը՝ «Լենսկին... քիթը կախեց գետին»։ Կարծես դա ոչ թե իդեոմատիկ արտահայտություն է, այլ ֆիզիկական գործողություն: Հաճախ էլ խոսում է այսպիսի տարօրինակ արտահայտություններով. փոխանակ ասելու «նա դեռ անկողնից չի ելել», ասում է՝ «բայց նա ներքնակ դեռ չի լքել», փոխանակ ասելու՝ «Օնեգին, դու հորանջում ես»— «Օնեգին, դու հորանջ ունես», փոխանակ ասելու՝ «դիմում էր դեպի առվակը»— «դիմում էր առվակին», փոխանակ ասելու «նա մեռել է»— ասում է «նա կյանք չունի»:

Օրինակները շատ են ու բազմատեսակ, բայց բավականա՛նանք այդքանով:

Այս է թարգմանության լեզուն և ընդհանուր որակը: Եթե տեղ-տեղ հանդիպում են սահուն տողեր, ապա դրանց պայմանական սահունությունն էլ թարգմանիչը ձեռք է բերել բնագրից հեռանալու հաշվին: Համեմատաբար ճիշտ է թարգմանված Տատյանայի նամակը, սակայն «Եվգենի Օնեգին»-ի այդ անզուգական հատվածի մեջ ևս թարգմանիչը չի կարողացել դրսևորել ո՛չ պոեզիա, ո՛չ էլ հույզ. ընթերցողին թըվում է, որ դա ոչ թե Տատյանայի հուզաթաթավ նամակն է, այլ մի կցկտոր հեռագիր:

Ինքնին հասկանալի է, որ «Եվգենի Օնեգին»-ի նման գործի թարգմանության առաջին փորձը, ով էլ լինե՞ր թարգմանիչը, չէր կարող միանգամից գերծ լինել թերություններից: Սակայն ներկա դեպքում խոսքը մասնակի և ուղղելի թերությունների մասին չէ. այս թարգմանությունը, կատարված լինելով ֆորմալիստական սկզբունքներով, ընդհանուր առմամբ անհաջողության է մատնվել: Դրությունը չեն կարող փրկել այն մի քանի տասնյակ համեմատաբար հաջող տողերը,

որոնք ցրված են անհաջող թարգմանված և գրական լեզվի ու արվեստի պահանջների դեմ խոյացող 6.000 տողերի արանքում:

Եվ ներկայումս, երբ մեր թարգմանչական արվեստն ավելի է կատարելագործվել ու մեր գրական լեզուն էլ աննախընթաց չափով զարգացել է, ծանոթանալով Գ. Սևակի թարգմանությանը, որին նա իր առաջաբանում հավակնում է տալ «գեղարվեստական կլասիկ լեզվի նմուշ» գնահատականը, հայ ընթերցողը իրավունք ունի պահանջելու, որ Հայպետհրատն ու մեր բանաստեղծները մտածեն գլուխ բերել «Եվգենի Օնեգին»-ի բարձրորակ թարգմանություն, որը կարողանա արտահայտել թե՛ Պուշկինի հանճարի փայլը և թե՛ մեր լեզվի անսպառ հնարավորությունները:

1951

ՄԻ ԱՆՎԱՅԵԼՈՒՉ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՌԹԻՎ՝

Ցանկանալով պատասխանած լինել Գ. Մահարու «Բաց նամակ բանաստեղծ Աշոտ Գրաշուն» քննադատականին, վերջինիս հասցեատերը «Գրական թերթում» հանդես է եկել մի առավել ընդարձակ պատասխան-նամակով: Քաղաքավարությունն, իհարկե, պահանջում է նամակներն անպատասխան չթողնել: Քաղաքավարությունը չէ, սակայն, որ եղել է Ա. Գրաշու խորհրդատուն: Դիմելով իր քննադատին, նա բացեիքաց հայտարարում է. «Ես հարկ չեի համարի պատասխանել ձեր նամակին, եթե դուք ապարդյուն փորձեր չանեիք սևացնելու մի շարք սկզբունքներ, որ սուրբ ու թանկ են ինչպես հայ պոեզիայի համար ընդհանրապես, այնպես էլ ինձ համար՝ մասնավորապես»:

Սո՛րբ ու թանկ սկզբունքներ... Ինչպես տեսնում ենք, Գրաշին այնքան է հուզված դրանց սևացման համար, որ իր քննադատին դիմելիս՝ քաղաքավարական Դուք-ը և Ձեր-ը գրում է փոքրատառով: Եվ այդ կերպ նրան «սպանելուց» հետո, մեջտեղ է քաշում Ավ. Իսահակյանի մահվան առթիվ նրա գրած մի հողվածը և գոչում. «Դուք ձեր նիզակը զուր եք ձոճում հեքիաթային հսկայի վրա»:

Ուրեմն, իր քննադատված գազելների և բայաթիների դատը մի կողմ թողած, Գրաշին հանդես է եկել պաշտպանելու հեքիաթային հսկային: Մենք դա կհամարեինք ամենաշատը զվարձալի մի ասպետություն, եթե որևէ մեկը հար-

1 «Գրական թերթը» տպագրելով Ս. Վահունու սույն հողվածը, դրանով ավարտել է Գ. Մահարու և Ա. Գրաշու բանավեճը պոեզիայի ժողովրդայնության մի քանի հարցերի շուրջը: Ժան. կազմողի:

ձակված լինելու ԽՍՀՄ-ի քաղաքացիական կոդեքսի վրա: Բայց դա, ըստ երևույթին, կարևոր չէ նրա համար: Մարդը կոպել է ուզում, իսկ այդ դեպքում բանաստեղծի համար ինչ մի դժվար բան է թշնամի ստեղծել: Եվ ահա, ասպետի ուսերից դերձակի մկրատ սարքելով, այնպես է կտրատում և իր ուզածի պես վերածնում իր քննադատի մտքերը, որ ԽՍՀՄ-ի կորուստը ողբացող Մահարուց ստացվի նրա դեմ նիզակ ճոճող:

Գ. Մահարին, օրինակ, գրել է. «Մաճկալի», «Որսկան ախպերի» դարաշրջանից մինչև «Երկրորդ լուսնի» էպոխան,— սխրալի, վիթխարի՝ ճանապարհ, որն անցավ ժողովրդական պարզունակ երգերի հեղինակ Ղազարապատցի Ավոն, տարիների և տասնյակ տարիների ընթացքում դառնալով հայկական Գյոթե, Տագոր, մնալով միշտ հայ, մնալով միշտ Ավետիք ԽՍՀՄ-ի»:

Կա՞ այստեղ որևէ առարկելի միտք, ԽՍՀՄ-ին սևացնելու միտում: Հրաշագործ մկրատն ապացուցում է, որ կա: Ա. Գրաշին մեջ է բերում այդ նախադասությունից պոկած միայն մի ծվեն, որպեսզի շինծու զայրույթով բացականչի. «Այդ հոյակապ երևույթը (խոսքը «Երգեր ու վերքեր» գրքի մասին է. Ս. Վ.) դուք բնութագրում եք «պարզունակ ժողովրդական երգերի հեղինակ Ղազարապատցի Ավոն «արտահայտությամբ»: Նախադասության սկիզբն ու վերջը, որոնք ավելի կարևոր են և պարզում են Մահարու միտքը, Գրաշին զամբյուղ է նետել:

Գ. Մահարին գրել է. «ԽՍՀՄ-ն մի ամբողջացած և մինչև վերջ կատարյալ հոյակապ ստեղծագործություն է, փղոսկրյա մի աշտարակ»: Վերցնելով միայն վերջին երկու բառը, Գրաշին ասում է. «Ինձ համար բնավ էլ զարմանալի չէ, որ դուք ԽՍՀՄ-ին համարում եք փղոսկրյա աշտարակ,

որ ինչպես հայտնի է, ժողովրդից կտրված անկենդան պոեզիայի քուրմերի խորհրդանիշն է»:

Դա դեռ ոչինչ:

Ավելի վրդովեցուցիչ է այն, որ նա ցանկացել է իր քննադատի դեմ նույնիսկ ծանր մեղադրանք հարուցել:

«Դեռ չէին թռչնել,— գրում է նա,— մեծ բանաստեղծի դագաղին դրված ժողովրդական ծաղկեպսակները, երբ «Գրական թերթում» (№ 39, 1957) տպագրվեց ձեր խորապես սխալ հոդվածը, ուր ասված է. «Մենոողները մենում են և թողնում իրենց փոխարինողներին: ԽՍՀՄ-ն չթողեց իր ետևից ոչ ոք, ԽՍՀՄ-ն էլ վերջանում է ժողովրդային հմայիչ ու անմահ պոեզիան»:

Իսկապես, կարելի էր զարմանալ, եթե Մահարին այդպես գրած լինելու: Բայց բացում ենք նրա այդ հոդվածը և կարդում. «Մենոողները մենում են և թողնում իրենց փոխարինողներին: ԽՍՀՄ-ն չթողեց իր հետևից ոչ ոք, թափուր մնաց այս անգամ Նահապետի գահը, որք մնաց նրա գայիստը: Կա, սակայն, խորհրդային պոետների նոր, անակաճ ջոկատը, որ ունի իր ընթացքն ու ճանապարհը»:

Ո՞ր է հապա այդտեղ մեր ընդգծված այն նախադասությունը («ԽՍՀՄ-ն էլ վերջանում է...» և այլն), որ Գրաշին դրել է միջակետից հետո, թեև Մահարու մոտ այդտեղ ստորակետ է դրված: Պարզվում է, որ նա դա կտրել է նույն հոդվածի մի այլ տեղից, բերել դրել հեղինակի միանգամայն պարզ և ճիշտ մտքի կես ճանապարհին, նրա ստորակետն էլ միջակետ դարձրել, որպեսզի ընթերցողն այն տպավորությունն ստանա, թե «ոչ ոք չթողեց» ասելով Մահարին ցանկանում է նսեմացնել ԽՍՀՄ-ին և ժխտել

¹ Այս և մյուս ընդգծումները մերն են. Ս. Վ.:

խորհրդային պետների գոյությունն ու դերը: Եվ իր կարծիքով մեղադրանքը պատրաստ է արդեն:

Հաշիվ չի տվել ինքն իրեն, որ մարդիկ կվերցնեն ու կըկարդան նաև բնագիրը և կտեսնեն, որ Մահարին ո՛չ թե նսեմացնում է Իսահակյանին, այլ ընդհակառակը, գտնում է, որ նա այնպիսի անփոխարինելի մեծություն էր, որ իր հետևից չթողեց ոչ ոք, որն ի վիճակի լիներ գրավելու հայ պոեզիայի Նահապետի գահը: Եթե Մահարին ասում է, թե «այս անգամ գահը թափուր մնաց», ապա այդ «այս անգամն էլ» հասկանալի է միանգամայն: Երբ Հովհաննես Թումանյանը թողեց Նահապետի գահը՝ կենդանի էր Ավետիք Իսահակյանը: Իսկ ո՞վ է, Աշոտ Գրաշու կարծիքով, այն մեծությունը, որ Իսահակյանից հետո կարող է իսկույն ևեթ բազմել այդ գահին: Մի՞թե Մահարին կարող էր ասել, թե այդ գահը ոչ այլ ինչ է, եթե ոչ գրողների միության դահլիճի աթոռներից մեկը, որի վրա ո՞վ ցանկանա կարող է նստել: Մի՞թե Մահարին կարող էր ասել, ցնծա՛, ո՞վ հայ ժողովուրդ, վախճանված Նահապետն ունի իր պատրաստի գահաժառանգը՝ հանձին Ա. Գրաշու: Չէ՛ր կարող ասել, և ինչ որ ասել է՝ ճիշտ է ասված: Մենք իմիջիայլոց, համաձայն չենք Մահարու այն մտքին, թե «Իսահակյանով էլ վերջանում է ժողովրդային հմայիչ ու անմահ պոեզիան», բայց, այնուամենայնիվ, ո՞ր խիղճը կորցրածը կարող է չընդունել, որ այդ խոսքն ասված է Իսահակյանի մեծությունն ու անփոխարինելիությունն ընդգծելու, այլ ո՛չ թե նրա դեմ նիզակ ծոծելու համար:

Ինչո՞ւ է, ուրեմն, Գրաշին, նենգափոխելով հանգուցյալի դեմ ուղղում նրա հիշատակին ասված ջերմ ու սրտառու խոսքը: Ի՞նչ նպատակ ունի այդ անօրինակ արարքը: Դրա

պատասխանը մենք արդեն տվել ենք: Դա յուրօրինակ հրետանային նախապատրաստություն է՝ հարձակումից առաջ ընթերցողի վրդովմունքը իր հակառակորդի դեմ գրգռելու համար: Միամիտներին սրտաշարժելու համար է հենց, որ նա իր հողվածը բացել է սրտաճմլիկ տեսարանով: Բայց այդ հնարները չեն կարող հաջողություն ունենալ: Ժանտթանալով իրերի վիճակին, ընթերցողները մեզ հետ միասին կասեն. «Ընկե՛ր Գրաշի, ի սե՛ր աստժո, հանգիստ թողեք Իսահակյանին, նա ձեր պաշտպանության կարիքը չի զգում, իսկ ձեր գրքի մասին Մահարու գրածը ոչ մի առնչություն չունի մեծ բանաստեղծի մասին գրված հողվածի հետ»:

Սակայն Գրաշու տակտիկան միայն պաշտպանողական չէ: Մեծանուն բանաստեղծին «պաշտպանելուց» հետո, նա ամբողջ ծակատով անցնում է հարձակման— այս անգամ հանո՛ւն պոեզիայի ժողովրդայնության սուրբ գաղափարի: «Ժողովրդայնությունը պոեզիայի մայրուղին է»,— այդ շունդայից լոզուգն է զարդարում ծակատը նրա հողվածի, որի մեջ, վերնագրից սկսած մինչև վերջին տողը՝ **ժողովրդայնություն** բառը և իր անունը, նրա համար հոմանիշներ են, հզոր մեծություններ: Հենց դրա համար էլ, Գրաշու կարծիքով, ո՞վ համարձակվում է քննադատել նրան՝ «գրքային պոեզիայի քուրմ է», դեմ է պոեզիայի ժողովրդայնությանը, դեմ է ոչ միայն Իսահակյանին, այլև Պուշկինին, Հայնեին, Թումանյանին, Սայաթ-Նովային, Տերյանին, Չարենցին և այն բոլոր մեծություններին, որոնց կողքին նա իր հողվածում բազմում է տա՛նումարդու համարձակությամբ:

Գիտենալու համար, թե ի՞նչ է հասկանում Գրաշին պոեզիայի ժողովրդայնությունն ասելով, բավական է տեսնել, թե ինչպես է նա հիմնավորում իր ժողովրդայնությունը: «Ես,— ան-

ընդհատ կրկնում է նա, — ժողովրդային են, որովհետև իմ ոտանավորները գրում են ժողովրդական երգերի ձևերով, հորինում են քառյակներ, բայթիներ ու մոլիսամազներ, ընդօրինակում հանգավորման աշուղական ձևերը»:

Որքա՞ն հեշտ միջոց ժողովրդային դառնալու: Որքա՞ն հեշտ է այդ մեկնաբանությամբ ժողովրդայնագերծ անել Դանթեին ու Բայրոնին, Դուրյանին ու Տերյանին, որոնք հիշյալ ձևերով երբեք չեն գրել, ինչպես նաև Գյոթեին ու Հայնեին, Լերմոնտովին ու Չարենցին, որոնք ընդամենը մի քանի բան են գրել ժողովրդական ձևերի նմանությամբ: Որքա՞ն հեշտ է այդ կերպ մեր պոեզիայի ժողովրդայնության ամենանհասանելի գագաթներ համարել Սկրտիչ Կորյունին և Աշոտ Գրաշուն, որոնցից մեկը քսան տարի շարունակ ժողովրդական առակներ ու ասացվածքներ է մշակում, իսկ երկրորդը մենամենակ գրել է ավելի շատ քառյակներ, քան Թումանյանը, Խսահակյանը և մեր բոլոր ժողովրդային բանաստեղծները միասին:

Մենք կարող ենք Ա. Գրաշուն շնորհավորել: Գրականության և պոեզիայի ժողովրդայնության նրա մեկնաբանությունը բավականաչափ կողմնակիցներ է ունեցել դեռ հարյուր տարի առաջ: Հենց այդ ժամանակ է Բելինսկին գանգատվել. «Բոլորը պոեզիայից պահանջում են ժողովրդայնություն և հետո՝ միայն առողջ միտք: Բայց շատե՞րն են արդյոք իրենց հաշիվ տալիս, թե ի՞նչ է այդ ժողովրդայնությունը, թեև այդ բառը բոլորին թվում է այնքան պարզ ու հասկանալի»:

Հարյուր տարվա խորքից Բելինսկու հարցը ուղղված է նաև Ա. Գրաշուն: Կարծես հենց նրա՛ն է մեծ քննադատը

շտապում բացատրել, որ. «Ամեն մի պոեզիա միայն այն ժամանակ է իսկական, երբ ժողովրդային է, այսինքն, **երբ իր մեջ արտացոլում է իր ժողովրդի դեմքը**»: Եվ կարծես կոահելով, որ Գրաշին գովերգելու է իր յարի հագած «ալվանն ու այլ», Բելինսկին մեջ է բերում Գոգոլի ծմարտացի ասույթը. «Իսկական ազգայնությունը սարաֆանի նկարագրության մեջ չէ, այլ հենց ժողովրդական ոգու մեջ»: Իսկ ժողովրդի դեմքն ու ոգին ներկայացնելու միջոցը միայն ժողովրդական պոեզիայի ձևերի նմանությամբ գրելը չէ: «Պուշկինը, — գրում է Բելինսկին, — միանգամայն ազգային բանաստեղծ է, որն իր հոգում ամփոփել է բոլոր ազգային տարրերը: Նա երևում է ոչ միայն այն ստեղծագործություններից, որոնց մեջ զուտ ուսական բովանդակությունը նա արտահայտել է ժողովրդական ձևով և ուր նա մրցակից չուներ. այլ **է՛լ ավելի այն ստեղծագործություններից**, որոնք ոչ բովանդակությամբ, ոչ էլ ձևով, թվում է, ոչ մի ուսական բան չեն կարող ունենալ»:

Ուրեմն, ժողովրդայնության չափանիշն այն չէ, թե գրողը որքա՛ն է օգտվում ժողովրդական բանահյուսության ձևվերից, ոչ էլ այն, թե նրա գրածը անպայման ի՞ր ժողովրդի մասին է, թե ոչ: Ի՛նչ ձևերով և ի՛նչի՛ մասին էլ որ գրած լինի գրողը, նրա ժողովրդայնության միակ չափանիշն այն է, թե արդյո՞ք նա իր հոգում ամփոփել է ազգային բոլոր տարրերը, արտահայտե՞լ է արդյոք իր ժողովրդի դեմքն ու ոգին, նրա մտածողությունը, զգացողությունն ու հոգեբանությունը: Եթե այդպես չլիներ, մենք անարժեք բաներ պիտի համարեինք Թումանյանի և Խսահակյանի այն բոլոր գործերը, որոնց ձևի և կառուցվածքի նախօրինակներ չենք կարող գտնել ժողովրդական բանահյուսության մեջ («Անուշ», «Հին օրինություն», «Աղավնու վանքը», «Լոռեցի Սաքուն»), կամ որոնք

երբեմն հայկական չեն ո՛չ իրենց ձևով, ո՛չ բնանկարով, ո՛չ էլ նույնիսկ հերոսներով («Աբու-Լալա Մահարի», «Ասպետի սերը», «Հավերժական սերը»), բայց որոնց տեսակարար կշիռը շատ ավելի մեծ է նրանց ստեղծագործության մեջ: Եթե այդպես չլիներ, մենք ժողովրդայնագուրկ պիտի համարեինք Ե. Չարենցի ամենաժողովրդային գործերը («Ամբոխները խելագարված», «Լենինն ու Ալին», «Խմբապետ Ծավարշը», «Ամենապոեմ»), որոնց ձևի և կառուցվածքի նախօրինակները չեն եղել ո՛չ մեր բանահյուսության, ո՛չ էլ մեր ամբողջ գրականության մեջ: Եթե այդպես չլիներ, մենք պետք է դեն նետեինք այն ամենաժողովրդային գործերը, որոնցով Թումանյանը, Իսահակյանը, Չարենցը հայ ժողովրդի բանաստեղծական արվեստը հասցրին համաշխարհային պոեզիայի ամենաբարձր մակարդակին: Եթե ժողովրդայնությունը Գրաշու ասածը լիներ, մենք պետք է մերժեինք այդ ամենը և նրանց հեղինակներին մեծարեինք միայն «Մաճկալի» և «Հորովելի» համար, ինչպես փորձում է անել Գրաշին, դեմագոգիայի առարկա դարձնելով **ժողովուրդ** և **ժողովրդային** բառերը:

Այժմ, երբ տեսանք, թե ո՛րն է իսկական ժողովրդայնությունը և ինչո՞վ է տարբերվում Գրաշու պաշտպանած նախկին և կեղծ ժողովրդայնությունից, դառնանք նրա շատ չարաշահած այն մասնավոր հարցին, թե բանաստեղծն ինչպե՞ս պետք է օգտագործի ժողովրդական պոեզիայի ձևերը. արդյոք մեխանիկորեն պետք է վերցնի և պատճենահանի՞, ինչպես անում է Գրաշին, թե՞ ունենա ստեղծագործողի և արվեստագետի մոտեցում:

Դարձյալ ստիպված ենք օգնության կանչելու Բելինսկուն, բանի որ Գրաշին միայն մեծերին է հավատ ընծալում: Անդրադառնալով Լերմոնտովի «Երգ Կալաշնիկովի մասին» պո-

եմին, որը գրված է ժողովրդական բիլինաների ձևով, Բելինսկին ասում է. «Որքան էլ ուշի ուշով գննելու լինեք Լերմոնտովի պոեմը, չեք գտնի ոչ մի ավելորդ կամ պակաս բառ, գիծ, տող, պատկեր, ոչ մի թույլ տեղ, ամեն ինչ անհրաժեշտ է, կատարյալ, ուժեղ... Այդ տեսակետից այդ պոեմը ոչ մի կերպ չի կարելի համեմատել այն ժողովրդական լեգենդների հետ, որ իրենց վրա կրում են դրանց հավաքող Կիրշա Ռանիլովի անունը: Ռա մանկան թոթովանք է, հաճախ բանաստեղծական, բայց հաճախ էլ պրոզայիկ, ոչ քիչ դեպքերում պատկերավոր, բայց հաճախ սիմվոլիկ, անձոռնի իր ամբողջության մեջ, լի միևնույն բանի անհարկի կրկնություններով»: Այնուհետև. «Այդ անարվեստ և պարզամիտ ստեղծագործությունների անանուն հեղինակները ամբողջություն էին կազմում դրանց մեջ բուրոդ ժողովրդայնության ոգու հետ. նրանք չէին կարող անջատվել դրանից. ժողովրդայնությունը նրանց մեջ քողարկում էր ինքն իրեն»: Իսկ ինչպե՞ս է վարվել այդ դեպքում հանձարեղ բանաստեղծը: «Բայց մեր բանաստեղծը,— շարունակում է Բելինսկին,— ժողովրդայնության թագավորությունն է մտել որպես նրա կատարյալ տիրակալ և, համակված նրա ոգով, ի մի ձուլվելով նրա հետ, նա ցույց է տվել նրա նկատմամբ **միայն իր հարազատությունը, այլ ոչ թե նույնությունը**»: Եվ դրա համար էլ, ասում է նա, «Լերմոնտովը այդ պոեմում հանդիսանում է ոչ թե ժողովրդայնության անարվեստ երգիչ, այլ իսկական արվեստագետ»: Այդպես են վարվել և մեր Թումանյանն ու Իսահակյանը, գործին մոտեցել են որպես արվեստագետներ, ժողովրդական պարզունակ ձևերի վրա կառուցել անզուգական կոթողներ:

Միանգամայն հակառակ մոտեցում ունի նրանցից մեկի «պաշտպանը»: Նրա կարծիքով, նախ, ժողովրդական երգերը

միանգամայն անթերի բաներ են, կատարելություն, կատարելությանց, մի տեսակ ֆետիշ, և բանաստեղծը նա է, ով առանց հոգնելու կբազմացնի նրանց պատճենները: Լսել է, օրինակ, որ ժողովրդական քառյակի առաջին երկու տողերը սովորաբար անհմաստ են լինում, ֆոնի դեր են կատարում. մտածել է, որ բանաստեղծն էլ պարտավոր է այդպես հորինել և, քանի որ անհմաստություններ սարքելուց հեշտ գործ չկա, գրել է մեկը-մեկին նման 243 քառյակ, այսինքն՝ 892 տող, որի կեսը՝ 446 տող, անհմաստ է ըստ այդ տեսության, իսկ մնացած կեսի իմաստը շատ դեպքերում կա՛մ կասկածելի է, կա՛մ անընդունելի: Եվ երբ Մահարին բերում է նրա քառյակի առաջին երկու տողը, նա դա համարում է թռչունի վրայից «կոպիտ ձեռքով պոկած փետուրներ», և իր քնքուշ ձեռքով հրապարակ է հանում ամբողջ թռչունը.

Կուզենայի լույս հանեմ ես,
Անմահական բույս հանեմ ես,
Սիրոս սիրո ուռկանն ընկավ,
Ինչպե՞ս քաշեմ. դուրս հանեմ ես:

Ի՞նչ փոխվեց. մի՞թե քառյակը նորից արտագրելով անհմաստ տողերը դարձրեց իմաստուն: Էլ չասած, որ վերջին տողերում արտահայտված ցանկությունը շատ ավելի սազական է մի որևէ միջնադարյան ճգնավորի, որը իր սրտում աշխարհային որևէ զգացում նկատելիս ձեռք ու ոտք է ընկնում, թե աման, ինչ անեմ, ինչպե՞ս ազատվեմ սատանայի գայթակղությունից, սիրոս սիրո ուռկանն է ընկել, ինչպե՞ս քաշեմ ու դուրս հանեմ: Ողջամիտ աշխարհիկ մարդը այդպես անառիթ չէր խուսափի սիրո զգացումից: Այսպիսով, վերջին տողերի իմաստն էլ բավական հեռու է ժողովրդական ընկալումից:

Բայց հաճախ անհմաստ են նրա քառյակների նաև վերջին տողերը, ինչպես օրինակ.

Թե չցանես սովը կգա,
Հառաչանքի հովը կգա,
Մեզ-մշուշի ճանապարհով
ԱՆՁՐԵՎՆ ԱՌԱՋ ԹՈՎԸ ԿԳԱ:

Ահա և մի ուրիշը.

Մի բուռ հող ցրեք վրան,
Վարդ քաղեք, փոք վրան,
Ինձ թաղեք սիրո ճամփին,
Անունս գրեք վրան:

Նախքան հասկանալը, թե ինչի՛ վրա է գրվելու խնդրողի անունը, ընթերցողը դեռ երկար պիտի մտածի և դարձյալ չհասկանա, թե ի՞նչ ասել է սիրո ճամփա և ի՞նչ մի մեծ բավականություն է այդ ճամփին թաղվելը:

Վերցնենք, թեկուզ մի ուրիշը, որի մեջ ամեն ինչ հասկանալի է.

Արտասուքը գալիս է,
Հանց գետ ափին տալիս է,
Մայրը որդու լուռ շիրմին
Սև սուգ հագել՝ լալիս է:

Իսկական բանաստեղծի ամեն մի քառյակ գեղարվեստական բյուրեղացում է որևէ փիլիսոփայական մտքի, որևէ մըտածում: Ո՞րն է, սակայն այդ քառյակի միտքը կամ խոհը: Ի՞նչ մի հայտնություն է, թե մայրը որդու շիրմի վրա լալիս է, այլ ոչ թե ծափ տալիս ու պարում:

Ահա մի օրինակ, թե իր քառյակների «մարգարիտները» քննադատից պաշտպանող Գրաշին ինչպե՛ս է մշակում ժողովրդական բառ ու բանի մարգարիտները.

Անպարտ առյուծ է պառկած,
Հպարտ առյուծ է պառկած,
Կտրիճ մարդու սրտի մեջ
Մի հաստ առյուծ է պառկած:

Ղրա հիմքում ընկած է ժողովրդական այն հումորիկ խոսքը, թե «ամեն մարդու սրտում առյուծ ըմ կա պառկած», այսինքն թե, ամեն մարդ, քաջ լինի, թե վախկոտ, տեղն եկած տեղը քաջ է ու կտրիճ: Ի՞նչ է դուրս բերել դրանից Գրաշին: Ըստ նրա, այդ առյուծը, այսինքն կտրիճությունը, պառկած է կտրիճ մարդու սրտում, այսինքն կտրիճ մարդ կարող է լինել... կտրիճը: Բացարձակ անմտություն: Այդքանով չբավականացած, նա առյուծին, որ ժողովրդական խոսքի մեջ փոխաբերական իմաստով է գործածված, կպցրել է «անպարտ» և «հպարտ» էպիտետները ու «մի հատը», փոխաբերականին տալով ֆիզիկական գոյություն, կարծես թե ժողովրդի ասածը իսկական առյուծներին և նրանց թվին ու հատկություններին է վերաբերում: Ինչպես տեսնում ենք, մշակումն այն է եղել, որ ժողովրդի խոսքի վրա լցրել է երկու այդքան ջուր և դրա մեջ խեղդել և՛ իմաստ, և՛ հումոր: Ծիշտ այդպես էր մշակում անցյալ դարում ստեղծագործող մի հայ հեղինակ, որը «էշը դատի ձին ուտի» առածից դուրս էր բերել.

Կդատի խեղճ իշուկը
Կպարծի մեր գիծուկը,

Գիծուկը ձի է, Խիկար,
Դու տես իշուն խշխշուկը:

Ինչպես ասվեց, իսկական բանաստեղծները դրսևորել են իրենց հարազատությունը, այլ ոչ թե նույնությունը ժողովրդական ձևերի նկատմամբ: Մենք գոհ կլինեինք, եթե Գրաշին դրսևորած լիներ գո՛նե իր նույնությունը: Նա պարզապես փչացնում է ժողովրդի բերանից ելած խոսքը, մթագնում կամ իմաստազրկում պարզ ու հասկանալի բաները, բազում քառյակների մեջ զանգրացնում ու մանիկյուրի ենթարկում նահապետական հարսների և հովիվների զգացմունքները, ժողովրդական մտածողական ձևերին խառնում հույժ ինտելիգենտական սեթևեթանքներ, մշակում է ի՛նչ որ գլուխը գա, միայն թե պատրաստ ունենա երեք հանգ-լույս հանեմ, բույս հանեմ, դուրս հանեմ: Կե՛ղծ, սախարինով սարքած, սնամեջ ժողովրդայնություն, որի միայն կեղևը կարող է խաբել միամիտներին: Եվ զարմանալի չէ, որ նա հեշտությամբ կարողացել է հորինել մեկը մյուսից չտարբերվող հարյուրավոր... ներողություն, 243 քառյակ: Փա՛ռք աստծո, որ գլխի ընկանք և հարյուրավոր չասացինք: Մահարին արդեն արել է այդ սխալը, որը Գրաշին անվանում է անմաքուր գործ, կարծես թե մարդը բանկի չեկ է կեղծել:

Մենք կարող էինք մեկ առ մեկ քննել նրա բոլոր քառյակները, բայց հողվածի սահմանները մեզ շտապեցնում են համոտես անել նաև նրա ութնյակները: Ահավասիկ մեկը.

Գրչի եղբայրներ եղեք դուք ինձ,
Սոսինե՛ր, բարակ պահասակ (!),
Բարդինե՛ր, կեցած դասակ-դասուն,
Գրչի եղբայրներ եղեք դուք ինձ:

Լավ երգի համար քնքշաթախիծ,
Պուրակնե՛ր, հյուսեք դափնեպսակ,
Գրչի եղբայրներ եղեք դուք ինձ,
Սոսինե՛ր, բարակ սլահասակ:

Երբևէ տպագրական մեքենան բազմացրե՛լ է այդպիսի գալիմաթիա՝ խառնված անօրինակ սնապարծության հետ: Գրչի եղբայր լինել, ինչպես հայտնի է, կնշանակի լինել գրող, մի բան, որ մեր կարծիքով շատ վեր է սոսիների և բարդիների համեստ ուժերից: Բայց եթե Գրաշին կարծում է, որ իր բուսական գրչի եղբայրների պարտականությունն է իրենց ժողովրդային եղբոր «լավ» և «քնքշաթախիծ» երգի համար փառքի դափնեպսակ հյուսել, ապա ինչու չի դիմում ուղղակի դափնեծառերին, չէ՞ որ հենց դրա՛նք կարող էին կատարել նրա իղձը:

Բայց միայն այդպիսի արտառոց առաջարկներով չէ, որ նա դիմում է ծառերին, պուրակներին ու անտառներին: Ահա մի ուրիշը.

Ի՛նչ կլինի, անտառնե՛ր,
Գեթ մի անգամ գաք ինձ հյուր,
Չեզ կընդունեմ, որպես քույր,
Քնքշազանգուր անտառնե՛ր:

Սիրում եմ ձեզ, կատարնե՛ր,
Անուշ զեփյո՛տ, բո՛ւյր, աղբյո՛ւր,
Ի՛նչ կլինի, անտառնե՛ր,
Գեթ մի անգամ գաք ինձ հյուր:

Գրաշու մոտ ամեն ինչ հակառակն է: Մինչև հիմա բանաստեղծներն իրենք են մտքով սլացել դեպի կարոտած վայ-

րերը, բայց մեր նորարարը անտառներին երկու անգամ աղաչում է, որ նրանք իրենք վեր կենան ու՛ գան իր տունը, ըստ որում խոստանում է ընդունել որպես քույր և, իհարկե, հյուրասիրել: Ի՛նչ է դա, բանաստեղծություն, թե պարողիա մի ուրիշի անհաջող բանաստեղծության վրա:

Մի այլ ութնյակում հայտնագործել է, թե «Այս կաղնին ինձնից երկար կապրի» և անընդհատ կրկնելով աշխատում է հաստատել այդ «միտքը», որի դեմ առանց այն էլ ոչ ոք չէր կարող վիճել: Մի ուրիշ ութնյակի ամբողջ իմաստն այն է, որ՝ «Եթե ես վիշտ ունենամ, պիտի թաղեմ կաղնու տակ», թեև, ի դեպ, անհասկանալի է, թե ինչու նույն կերպ չի վարվել Մահարու պատճառած վշտի հետ: Եվ այդպես անվերջ:

Հրաշք էր պետք, իհարկե, որ այրօրինակ «հղացումները» և տարօրինակությունները իսպառ բացակայեին նույն մարդու գրած այն բանաստեղծություններից, որ նա անվանում է գազելներ և տաղեր: Ոչ միայն չեն բացակայել, այլև ընկերացել են նոր, «մեծ կտավի» տարօրինակությունների, որոնք իրենց չէին կարողացել դրսևորել քառյակի և ութնյակի անձուկ սահմաններում: Դրանց մեջ ևս՝ նույն կեղծ, արտաքո ժողովրդայնությունը, որը, հեղինակի կարծիքով, ստեղծվում է միայն ու միայն ժողովրդական ու աշուղական ձևերի ստրկական ընդօրինակմամբ: Այդ ոտանավորների ոճական և կառուցվածքային առանձնահատկությունների մասին նրա քննադատն արդեն բավական խոսել է իր բաց նամակում, այնպես, որ մենք կարող ենք նորից դառնալ այն հարցին, թե ինչպե՞ս ընդունեց Գրաշին քննադատությունը:

Որոշած լինելով ոչինչ չընդունել և հողմացրիվ անել իր քննադատի բոլոր արդարացի դիտողությունները, Գրաշին դիմել է բազմազան միջոցների, որոնցից առաջինը կարելի է

անվանել կլասիկապոլիտիզմը: Հենց որ Մահարին նրա գրքից մեջ է բերում որևէ անհեթեթություն, Գրաշին իսկույն մեկ կամ մի քանի կլասիկի անուն է տալիս, նրանցից քաղում իր կարծիքով համաձայն մի արտահայտություն, որպեսզի, նախ, փակած լինի քննադատի բերանը, հետո էլ ցույց տա, թե, տեսե՛ք, իմ այս անհեթեթությամբ ես այսինչ կլասիկի թայն եմ:

Հենց որ Մահարին նրան դիտողություն է անում, թե չի կարելի է ասել «հողմերի քայլք», որովհետև, իսկապես, հողմը ենթադրել է տալիս արտակարգ արագություն, սլացք, իսկ «քայլքը», ընդհակառակը, թուլացնում է այդ տպավորությունը,— հենց որ Մահարին ասում է այդ, Գրաշին իսկույն վազում-բարձրանում է կլասիկների կտուրը և իր քննադատի հետ խոսում վերից՝ ձայնը նմանեցնելով տանտիրոջ ձայնին: Այդպես հանգիստ չի տվել Պուշկինին, Հայնեին, Չարենցին, Տերյանին և ուրիշների:

Եվ բնավ հոգը չէ, որ իրեն կասեն կլասիկներից բերված այդ օրինակները, նախ, նման չեն ձեր մարգարիտներին, իսկ հետո ո՞ւմն եք ուզում հավատացնել, թե ամենամեծ կլասիկի վաստակի մեջ էլ չեն կարող պատահել հատ ու կենտ անհաջող բառեր ու դարձվածքներ կամ նույնիսկ ամբողջապա՛ն գործեր: Կլասիկները դրանցով չեն կլասիկ դարձել, ինչո՞ւ եք դուք, նրանց անունը տալով, ի մի հավաքում նաև այն բոլորը, ինչ որ ձեր կարծիքով նման է ձեր սխալներին և անհեթեթություններին, և դրա հիման վրա մշակում սխալ ու վատ գրելու հատուկ իրավունք:

Ժխտելու նրա երկրորդ միջոցը հայիությանքն է: Այդ միջոցին դիմում է այն դեպքերում, երբ կլասիկների գրպաններում գտած չի լինում իր ցանկացածը: Եվ ահա, հենց որ Մահարին նրան ասում է, թե այժմանը չի կարող «ձեմել ժայռին», որով-

հետև, իսկապես **ձեմելը** ենթադրել է տալիս ձեմելու տեղ, արձակ տարածություն,— հենց որ նա այդ ասում է, Գրաշին իր իսկ գրպանից հանում է ոչ հեռավոր անցյալում իրենց տխուր դերը արդեն կատարած պիտակները և բացակայեցնում. «Դուք դժվար թե ընկալեք գեղեցկությունը լեռան այժմամի, որը հազար անգամ ավելի հեշտ է **ձեմում բարձրաբերձ ժայռերով** (լեզվի՛ն նայեցեք, Ս. Վ.), քան դուք գրական շարդարի հարթ ու տրորված ճանապարհներով»:

Երրորդ միջոցը դեմագոգիան է: Հենց որ Մահարին ասում է, թե Գրաշին շատ է չարաշահում «շող թափիր, ցող թափիր, հող թափիր» և նման հանգերը, իսկույն նա մեջ է բերում այդ հանգերով կառուցած քառյակներից մեկը, որի մեջ **պանդուխտ** բառը կա և, չհասկանալու տալով, թե խոսքն ինչի մասին է, պատասխանում է. «Այս քառյակում խտացված է հայ ժողովրդի պատմական ողբերգությունը անցյալում: Բայց ինչո՞ւ միայն անցյալում, այսօր էլ հայ ժողովրդի մի զգալի հատվածը պանդխտության ծամփեքին է աշխարհով մեկ սփռված»: Ուրեմն դուրս է գալիս, որ Մահարին քննադատում է ոչ թե նրա հանգերը, այլ նիզակ է ծոծում պանդուխտների դեմ: Չի էլ մտածում, որ ընթերցողը հնարավորություն ունի նորից կարդալ Մահարու գրածը, որ այդ ընթերցողը կասի նաև, թե մեր պոեզիայում այնքան շատ են պանդուխտի ջերմ ու սրտառուչ, արվեստով հորինված երգերը, որ դուք իզուր եք ձեր ինկուբատորից հանում նրանց մահաժին ճտերը:

Ժխտելու նրա չորրորդ միջոցը— բերանը ջուր առնելն է, որպեսզի ոչ մի կերպ չասի, թե ընդունում է իր քննադատի նշած այն բազմաթիվ և ավելի լուրջ թերությունները, որոնց վրայից լոք է տվել իր հողվածում:

Կա նաև ժխտման այդ բոլոր միջոցների սինթետիկ տեսակը, որին նա դիմում է իր հանգերը պաշտպանելիս: Հենց որ Մահարին ասում է, թե նա անընդհատ կրկնում է իր միօրինակ հանգերը, ապա Գրաշին նախ դիմում է կլասիկներին թայդաշուություն անելու միջոցին, այնուհետև գործն այնպես է ներկայացնում, թե Մահարին դեմ է ոչ թե Գրաշու հանգաստեղծման ձևերին, այլ լիահնչյուն հանգերին և ընդհանրապես հանգերին: Դրանից հետո դիմում է բոլորովին նոր մի միջոցի: Հենց որ Մահարին ասում է, թե Գրաշին հանգի համար շարունակ օգտագործում է միևնույն բառերը, ապա Գրաշին գոչում է, թե ի՞նչ կա որ, Տերյանն էլ շատ է գործածում «մեռել» բառը, թեև իր բերած օրինակներից ինքն էլ է տեսնում, որ Տերյանն այդ բայը շատ է օգտագործում ոչ թե **հանգի համար**, այլ տողամիջում («Տխուր մեռան երազները» և այլն):

Այդ բոլոր հնարները մի կուշտ գործադրելուց հետո, Գրաշին առաջ է մղում պահեստում պահած ծանր հրետանին: Խանդաղատանքով մեջ է բերում Խահակյանի հայտնած կարծիքները նրա բանաստեղծությունների և աղբյուրաբանական բայաթիների թարգմանության մասին, կարծես թե մեծ բանաստեղծը 17 տարի առաջ այդ մի քանի տողը գրել է նրա համար, որպեսզի այլևս ոչ ոք իրավունք չունենա Գրաշուն ասելու, թե աչքիդ վրա հոնք կա: Բնավ հոգը չէ, որ բոլորը գիտեն, թե որքան բարի մարդ էր Խահակյանը, թե ինչպես, հայրական մտահոգությամբ, խրախուսելու համար, նա հաճախ գովում էր նույնիսկ միջակ շնորհքի տեր մարդկանց: Գրաշու հոգը չէ, որ մարդիկ այն էլ կասեն, որ կլասիկների մեծությունը բնավ էլ սրա-նրա մասին նրանց հայտնած կարծիքների մեջ չէ: Հովհ. Թումանյանը, օրինակ, ժամանակին մի մեծ հողված է գրել, թե սկսնակներ Խաչատրյանը

և Հ. Մազմանյանը պիտի դառնան պոեզիայի աստղեր, սակայն հենց Թումանյանի աչքի առաջ նրանցից առաջինը ոչինչ չդարձավ, իսկ երկրորդը դարձավ արձակի թարգմանիչ:

Գրաշին չի մտածել և այն մասին, որը բոլորից կարևորն է և որի մասին սրա քննադատը չի խոսել: Իսկ դա նրա «Սարերի սրինգը» ժողովածուի բովանդակության հարցն է: Ուրախանում է արդյոք, որ մեր օրերում հրապարակ է հանել 440 էջանոց այնպիսի մի հատոր, որի վրա էթե նշված չլիներ հրատարակության թվականը և մեջը չլինեին մեկ-երկու այժմեական ոտանավորներ, ապա հեղինակին չճանաչող ընթերցողները պետք է կարծեին, թե գործ ունեն անցյալ դարի 90-ական թվականների մի մոռացված հեղինակի հետ: 2է՞ որ չի կարելի մեր օրերում գլուխ պահել շարունակ սագի նույն լարը ճընկճընկացնելով, ինքնահնար առասպելներ մշակելով, հնաբույր քառյակներ, պանդխտի երգեր, ջանգլուումներ, բայաթիներ և աշուղական բանաստեղծություններ բազմացնելով: Դա ժողովրդայնություն խաղալ է, բայց ոչ ժողովրդայնություն:

Դա զավեշտական գբաղմունք է, և մարդիկ ճիշտ են ասում, թե մեզ հարկավոր չեն համալսարանավարտ աշուղներ: Տիեզերքի նվաճման դարում 19-րդ դարի հայ գլուղացու չուխա հագնելով և աղբյուրանցու փափախ դնելով, ժողովրդային դառնալ չի լինի:

Գրաշին չի ցանկացել մտածել այդ ամենի մասին: Դրա փոխարեն ավելի հարմար է համարել հոխորտալ. «Ես անհողողդ կերպով կանգնած եմ պոեզիայի ժողովրդայնության դիրքերի վրա և խորապես համոզված եմ, որ **գրախոս գրասերները** չեն կարող բանաստեղծին կտրել հարազատ հողից»:

Քննադատության խոսքը լսելու փոխարեն, նա ավելի

հարմար է համարում հայտարարել, թե «Սարերի սրինգը» իմ արևելյան դիվանն է...», լսած լինելով, որ Գյոթեն էլ մի այդպիսի դիվան ունի:

Մի՞թե նրան փրկում է և այն մեծադորդ հայտարարությունը, թե «իմ ուսուցիչը հայ լեզվաստեղծ ժողովուրդն է՝ իր դարավոր դասական գրականությամբ և անսպառ բանարվեստով»:

Ձե՞ որ խոսքը ուսուցչի մասին չէ, այլ նրա դասը չսերտած աշակերտի: Ուսուցչի բարեմասնությունները չեն կարող արդարացնել մեկին, որն առանց իմանալու, թե ինչ է պոեզիայի ժողովրդայնություն ասածը, իր պրակտիկայով ու տեսությամբ փորձում է մարդկանց ժողովրդայնություն սովորեցնել, — մի աշակերտ, որ իր ինքնապաշտպանականի մեջ հայտնագործում է այնպիսի բաներ, որոնք կշարժեն ամեն մի աշակերտի ծիծաղը, ինչպես օրինակ՝ «ժողովրդական գրական ժանր» և «քառյակի ժանր»:

Պատկառելի ուսուցիչը նրան խրատելով՝ կասի. «Նմանությամբ, մանավանդ կարծեցյալ նմանությամբ, մի պարծենա: Հողմադացն էլ իր պտտաթևերով նման է օդանավի, բայց ո՞վ է տեսել, որ հողմադացը թռչի»:

1954

«ԴԺՈՒՔ» — «ՔԱՎԱՐԱՆ»

Դանթեի նկարագրած դժոխքը եթե գոյություն ունենար, ամենայն հավանականությամբ այնտեղից Հայպետհրատի դիրեկտորի և գեղարվեստական գրականության բաժնի վարիչի հասցեով կստացվեր նման մի հուզիչ հեռագիր.

«1948 թվականին հրատարակչությունդ հրատարակել է իտալացի բանաստեղծ Դանթեի «Աստվածային կատակերգության» առաջին մասի, այսինքն «Դժոխք»-ի հայերեն թարգմանությունը, որի շնորհիվ քաղաքացի Դանթեն վերջապես պատժվեց մեր դժոխքը նկարագրելու հանդգնության համար: Պետք է ասել, դա այնպիսի թարգմանություն է, որ մինչև հիմա մեր ամենափորձված սատանան անզամ բան չի հասկացել: Այդ հանգամանքը նկատի ունենալով, Դժոխհրատը իմ ցուցումով վերահրատարակել է վերոհիշյալ թարգմանությունը, որը որպես գերագույն պատիժ կարգալու ենք տալիս մեր հայերեն իմացող դատապարտյալներին և պահանջում պատմել հասկացածը: Հետևանքները հիանալի են: Շատերը գիշեր-ցերեկ տնքում են գլխացավից, ոմանք էլ հուսահատությունից նետվում են Տարտարոսի կրակների մեջ: Ամուր սեղմեցեք թարգմանիչ Արբուն Տալացու ձեռքը: Լսել եմ, որ նա թարգմանել է «Աստվածային կատակերգության» նաև երկրորդ մասը՝ »Քավարան»-ը: Խորհուրդ եմ տալիս դա էլ հրատարակել:

Ընդունեցեք հարգանացս հավաստիքը:

Դժոխքի վարչության պետ՝ ՍԱՂԱՅԵԼ:

Բայց քանի որ դժոխքը գոյություն չունի, Հայաստանի դիրեկտորն ու գեղարվեստական գրականության բաժնի վարիչը, իհարկե, չստացան հեռագիրը, թեև, այնուամենայնիվ, չզլացան կատարել այն խորհուրդը, որը կարող էր տալ Սահայելը: Վերցրին և, ոչ մի ուշադրություն չդարձնելով ոեցե՛ն-գետների կարծիքին, տպարան ուղարկեցին նաև «Քավարան»-ի մերժված թարգմանությունը, որն արդեն լույս է տեսել և վաճառվում է 10 ու 15 կոպեկով: «Դժոխքն» արժեք 35 ուրբ-լի: Չնայած գների տարբերությանը, երկու տեղում էլ բավականությունները նույնն են: Բացենք այդ Քավարանի դուռը, որը ոսկեգօծ կազմի ձև ունի, և պատահական օրինակներով տեսնենք, թե ինչ լեզվով է խոսում այնտեղ Դանթեի թարգմանիչը.

Հետևելով նրան՝ ծակատըս համակ
Հակել էի որպես մի մարդ խոհաբեռն,
Որ քայլում է աղեղ արած իր քամակ:

Նախ ծաշակում է բարիքները ումպետ,
Եվ պատըրված՝ վազում նրանց ետևից,
Եթե նրան զսպե սանձ կամ մի պետ:

Մինչ քանի դեռ մեծ օժիտը պրովանսյան
Ամոթից չէր գրկել գարմիս, նա, ծիշտ է,
Աննշան էր, բայց գոնե չէր տալիս գլան:

Ջի որքան շատ են ասողները «մեր» անդ,
Այնքան անձնյութ ոք տեր է շատ բարիքի,
Եվ այնքան շատ է բորբոքվում սիրո խանդ:

Ջի ձեր իղձերը ձգտում են այն բարյաց,
Որոնց վայելքը պակասում է բաժանմամբ,
Արժարժվում է ձեր մեզ նախանձի անձկայրաց:

Ճարունակե՛նք արդյոք: Սիրտ անենք շարունակել, միայն
թե այն ընթերցողների համար, որոնց գլուխը դեռ պտույտ չ՛
գալիս.

Մի անգամ ես տեսնում եմ Տերն այգանված,
Նորոգված եմ տեսնում քացաղն ու լեղին,
Եվ մինչև ողջ ավազակաց՝ սպանված:

Նախ մի հառաչ և ցավագին մի «ավա՛ղ»
Արձակեց. հուսկ ասաց. «Եղբայր իմ,
աշխարհն,

Ուրկից ես դու գալիս, է կույր, աղավաղ:
Գիտցիր, որ կառքն, որ շարդեց օձը գագիր,
Էր և չէ, բայց թող հանցապարտն իմանա,
Որ աստժո վրեժն ապուրով չի կասիր:
«Այստեղ հարկ է մեզ լինել փոքր ինչ
ճպարկ,

— Սկսավ ասել առաջնորդն իմ— մատչելու
Համար մերթ այս, մերթ այն ափին
խուսաբուկ»:

Հանուն մարդասիրության կանգ առնենք այստեղ: Դժվար
չէ պատկերացնել, թե ինչ ցավեր է զգացել անգամ այն մե-
քենան, որը տպագրել է 1567 այդպիսի եռատող: Այդ եռա-
տողերը, կամ չղեր քրքրող սրածայր սրածանիները պատրաս-
տելիս թարգմանիչը ունեցել է միայն մեկ նպատակ՝ մի կերպ
տեղը բերել հանգը, այնպես որ ստացվի՝

ումպետ— պետ
ավաղ— աղավաղ
այգանված— սպանված
մական— ապական
համակ— քամակ:

Պրանից հետո հանգերի միջև ընկած տարածությունները բազմաթիվ դեպքերում լցրել է ինչով պատահի՝ գրաբար մեռած ձևերով ու բառաձևերով, ինքնահնար, խեղանդամ բաներով, ինչպես նաև հազարավոր այնպիսի բառերով, որոնք վաղուց ի վեր փտել են Մխիթարյան միաբանության վարդապետների ոսկորների հետ միասին: Կարծես թե ինչ-որ մեկը այդ թարգմանչին հրավիրել է Հայպետհրատ և տվել այսպիսի հատուկ հանձնարարություն. գրչակոթիդ ծայրին ցախավել կապիր և նորից փորփրիր ու շաղ տուր այն լեզվական աղբը, որ հարյուր տարի շարունակ մեր գրականության ասպարեզից մաքրել են Խաչատուր Աբովյանն ու նրա հետնորդները: Արտառոց աղճատումների մի կույտ՝ ահա հայոց լեզվի պատկերը այդ թարգմանության մեջ, և ոչ մի պեղում չի կարող նրա տակից լույս աշխարհի հանել բանաստեղծական արվեստի, մտքի, տրամաբանության կամ ճաշակի որևէ շոշափելի բեկոր: Պրա փոխարեն ընթերցողը կտեսնի այնպիսի բաներ, որ ոչ ոք չի տեսել հայ տառերի գյուտի օրվանից մինչև մեր օրերը: Հանգն ու վանկը տեղը բերելու համար մեր թարգմանիչը կատարել է նույնիսկ այսպիսի տողադարձումներ.

Պոք, ապրողներդ, ամեն պատճառ
վերագրում

Եք լոկ երկնին...

Արդեն օրվա չորս նաժիշտները ետև

էին մնացել...

Արդեն օրվա չորս նաժիշտները ետև

էին տալիս ցավն ու ցասույթն ամբարված:

Եվ ես նրան. «Ինչ որ խնդրում ես՝ պարտ եմ

Ջգում անել...

Այսպիսի անգրագիտությունների համար դպրոցում աշակերտի գրածի վրա «2» կդնեին, իսկ Հայպետհրատում ամեն մի տողի վրա դրել են 14 ուրվի:

Անգրագիտությունների և անձաշակությունների այդ երկու ժողովածուն հրատարակելու համար Հայպետհրատը ծախսել է 299 հազար ուրվի, բացի դրանից թարգմանիչը ստացել է 100 հազար ուրվուց ավել: Եթե դա տրված լիներ մի այլ տեղ, կհամարվեր վնասարարություն, իսկ Հայպետհրատում դա համարվում է կուլտուրայի զարգացմանը նպաստող գործ...

Ասում են, որ Արբուն Տայացին ներկայումս մտադիր է թարգմանել «Աստվածային կատակերգության» 3-րդ և վերջին մասը՝ «Դրախտը»: Ըստ երևույթին նա չի բավականացել, որ Պանթեի հանձարը արդեն նահատակվել է երկու երրորդով: Երևում է մարդը կտտորակներ չի սիրում, եթե սպանել է, ապա ինչու չսպանել ամբողջը:

Բայց թող նեղություն չքաշի: Այժմ արդեն ընթերցողներն իրավունք ունեն պահանջելու, որ Պանթեի թարգմանիչը կըրնատի իր դժոխք-քավարան-դրախտ մարշրուտը, առանց դրախտ մտնելու կանգ առնի քավարանում և այնտեղ քափի իր մեղքերը:

1957

ԵՐԲ ԼԵՂԻՆԱԿԻ «ՀՈԳԻՆ ԶԱՂՏԱԾ Է»...

Լույս է տեսել Արմանի «Խութեցի Հովնան» ժողովածուն, որը, բացի համանուն պոեմից, պարունակում է 40 բանաստեղծություն: Դրանց մեջ կան զգացմունքով գրված մի քանի գործեր, ինչպիսիք են «Շոգենավը», «Բալլադ մի խաղողի վազի մասին», «Գնում ես Մայր Հայաստան», «Նամակ տարագիր բարեկամից» և «Կրկնատեսիլ» բանաստեղծությունները, որոնք, թեև պրիմիտիվ արվեստով, դրսևորում են հայրենադարձ հայի զգացմունքները սովետական հայրենիքի նկատմամբ: Դժբախտաբար՝ միայն այդքանը: Եվ ահա, այդ մի քանի շատ թե քիչ հաջող բանաստեղծությունները 136 էջանոց գրքում կորել են այնպիսի գործերի բազմության մեջ, որոնք հուզական և խորիմաստ չլինելու հետ միասին, տառապում են ժամանակից և իրականությունից կտրվելու, զորքայնության ու էպիգոնության արատներով և ամեն քայլափոխում մեղանչում են արվեստի, լեզվի և նույնիսկ տրամաբանության տարրական կանոնների դեմ: Այդ գործերի գեղարվեստական արժեքին ծանոթանալու համար բավական է կարդալ «Հ. Թ.» 6 տողանոց բանաստեղծությունը, որ նվիրված է Հովհաննես Թումանյանին և սկսվում է այսպես.

Իմաստուն խոսքերը քո թևավոր
Լուսարգանդ երգերը քո նաիրյան
ՀՈԳԻՆՍ ԸՆՑՆ ԵՂԱՆ ԸՆՆԱՊԱՋՈՐ:

Պարզվում է, որ այդ հանապազոր հացի մեջ հեղինակը դրել է բոլորովին նոր տեսակի պանիր: Ահավասիկ.

Նստել եմ քո սեղանին ահա կրկին,
ԵՐԳԵՐԻՊ ԼԱՎԱՅՆԵՐԻՆ տաք ու բուրյան
ՓԱԹԱԹԵԼ ԻՄ ՊՈՆԵՏԻ ԶԱՂՏԱԾ ՀՈԳԻՆ...

Անհասկանալի է, իհարկե, թե ինչո՞ւ պոետի «քաղցած հոգին» այդ զարմանահրաշ լավաշներն ուտելու փոխարեն փաթաթվել է նրանց մեջ: Համենայն դեպս գուցե հենց դա է պատճառը, որ վերոհիշյալ հոգին չի կարողանում տեսնել մեր իրականությունը և նորը երգելու համար չի գտնում որևէ թարմ ու հաջող էպիտետ, պատկեր կամ մտահղացում: Դրանց փոխարեն նրա գործերում աջ ու ձախ փոված են թագավորների, իշխանների, աստվածների ու չաստվածների, հնադարյան քաղաքների անուններ: Ծարանը սկսվում է Հայկով, ապա հերթով գալիս են Տիգրան Մեծը, Մեծն Արտաշեսը, Տրդատը, Վարդանը, Բագրատունիք, Վանատուրը, Վահագնը, Հիսուսը, Խորենացին, Մաշտոցը, իսկ դրանց հետևում են քրմերն ու քրմապետերը, խունկն ու կնդրուկը... Չեն մոռացվել Տիգրանակերտը, Արտաշատը, Աշտիշատը և այլն և այլն... Այդ բոլորի նման հին է նաև հեղինակի վերաբերմունքը դեպի մեր պատմությունն ու անցյալը. նրա համար Հայաստանը ոչ այլ ինչ է, եթե ոչ «երկիր Հայկի, Մեծն Տիգրանի և Տրդատի», որտեղ ամեն ինչ լավ է եղել ու իդեալական: Նրան հանգիստ չեն տալիս նույնիսկ «հեթանոս նախնիքը», որոնց փառաբանմանն է նվիրված «Նավասարդյան» փքուն բանաստեղծությունը.

Ծաղիկներով պծնել են մեռյալն համակ գեղակերտ
Ու մրգերով ողողել կուռքի սեղանը մարմար,
Աստվածների նմանող քրմապետներ հերթ ի հերթ
Խունկ են լցնում ու կնդրուկ ատրուշանի մեջ մարմար:

Այնուհետև՝ «արքան Արտաշես, աշխարհակալն այն ահեղ, ցուլ է զոհում մեծ կուռքին»։ Իսկ արքա Արտաշեսը չի կարող լուր գնալ առանց «ալանաց դուստր» Սաթենիկի, սրան էլ պետք է հետևեն «բլուր ազատներ ու ռամիկ», «լոթն օր լոթն գիշեր» պիտի թնդա «խրախճանքն այս ռոշնական», հացն ու գինին պիտի ծով լինի, կուշտ պետք է լինի «գորքը տերունական», մի խոսքով՝ իսկական դրախտ, որտեղ պակասում են միայն հրեշտակները... Անցյալի իդեալականացման այս ձեվերը, որոնք առնված են ազգայնամուլ-տիրացուական «պոեզիայի» մարզից, միմիայն պարարտ հող են նացիոնալիզմի ռեցիդիվների համար։ Հեղինակն այնքան է տարված անցյալի պատկերներով, որ սովետական ժողովրդի մղած Հայրենական մեծ պատերազմի և սովետական բանակի մասին կարողացել է հորինել միայն դժգույն ու տարտամ ռտանավորներ. («Առաջին գիշերը», «Նամակ», «Պատասխան», «Հաղթանակի օրը» և այլն), որոնք ունեն այս որակի տողեր.

Ես Վասյան եմ ուկրաինացի, Սերգոյի վաշտից,
Բանակում մի օր քեզ նման լացի մի ահեղ վշտից...

Կամ՝

Մի տխրիր, Վասյա, կհասնի օրը դատաստանի:
Սեղմի՛ր հրացանդ, խիզախի կամքդ (!),
Լաց մի լինի... և այլն:

Սակայն մագաղաթյա մատյաններից առնված պատկերները և էպիտետները, քրմապետներն ու քուրմերը, մեհյանները, առասպելական ու պատմական անունները հեղինակին հետա-

պնդում են նաև այն ժամանակ, երբ նա խոսում է առօրյա հարցերի կամ այնպիսի մարդկանց մասին, որոնք իրենց կյանքում որևէ քուրմ չեն տեսել: Նրա համար քուրմ է նույն-իսկ բանաստեղծ Դանիել Վարուժանը («քուրմ անմահ, հայ դպրության բազմաքանքար»), նրա համար մեր ժամանակը նոր մեհյան է, որի «հին քուրմն է»... Ալեքսանդր Ծիրվան-զադեն, որին քիչ առաջ նա անվանել է նաև «ազգի նամուս» (!) Ծիրվանզադե, կամ «Նավթահորում հեք բանվորի վշտի ընկեր» (ի դեպ, այդ աշուղական բանաստեղծության մեջ Ծիրվանզադեն ունի ԳՐԵ ՄՈՒՐՃ (!!!), որի տակ մարդկանց ցավերը «լեզու են առնում և բողոք դառնում»): Նույնիսկ Հրազդան գետի մասին խոսելիս, նա գտնում է, որ այդ գետը «քաջ Վարդանի նման աննենգ ռազմավար (?) է և նրա նման զորք հավաքելով է գալիս:

Հեղինակը հաճախ դիմում է ֆոլկլորի և աշուղական պոեզիայի ձևերին («Այգաբաց», «Դեղձի կուռք», «Իմ սիրեկան», «Վերջին գազելը Սայաթի»), սակայն այդտեղ էլ հույժ գրական բառամթերքի և բարբառների խայտաճամուկ խառնուրդից առաջանում են այսպիսի ստեղծագործություններ.

Վեր կաց, մարա՛լ, վեր կաց յա՛ր ջան,
Դուող եմ բախում ես ՍԻՐԱԶԵՐ,
Վեր կաց անգին իմ սիրեկան,
Մի տես ո՞վ է շեմքիդ կանգնել...
(«Այգաբաց»)

Ինչ խոսք, որ մարալ լարը վեր կենալիս առաջին հերթին պետք է քրքրի «Հայկազյան բառարանը», որպեսզի տեսնի,

թե ի՞նչ է նշանակում այդ «սիրաջերը»: Այնուհետև պիտի զարմանա նույն երգի այս տողերի վրա.

Արև արքան մտավ այգի,
Խորշիններում առատ հինա,
Հինան բաշխեց ծառ ու ծաղկին,
Համբուրվում են նրանք հիմա...

Դրանից հետո էլ յարը շատ պիտի կարմրի, կարդալով այն պոռնոգրաֆիկ հատվածները, որ տեղ են գտել «Դեղձի կուլթ» և «Խաղողի այգին» ոտանավորներում:

Այս ամենը ժողովրդական ստեղծագործության ծաղրանք-կարային նմանությամբ հորինված այնպիսի էրզազ-պոեզիա է, որ կարող է միայն ճաշակ փչացնել: Գրքում կա նաև ժողովրդին անհեթեթություններ վերագրելու մի արտաոռց փորձ: Խոսքը վերաբերում է «Պատնեշը» բանաստեղծությանը, որի վերնագրի տակ գրված է «Հին ասք»: Ըստ այդ տարօրինակ ասքի, Սևանա լիճը «մի ծով է եղել Սև ծովի նման», սակայն թշնամուց պաշտպանվելու համար, մեր նախնիները նրա դեմ քարերից պատնեշ են կապել, վերածել լճի, որն իբր թե «չունի ոչ մի ելք»:

Ինչ վերաբերում է բանաստեղծությունների լեզվին, ապա բերված օրինակներից էլ երևում է, որ դա գրաբար ձևերի, ժամանակակից գրական լեզվի և զանազան բարբառների բառամթերքի ոչ այնքան ճաշակավոր մի խառնուրդ է, որի մեջ նույնիսկ միևնույն գործում՝ ահաբեկյալ, հանց, գերթ, հանապազոր, պարմանի, ոռշնական, լհայց, դշխո, վարձակ, վին ու մեհյան, ցորյան ու անեգրական բառերին հարևանու-

թյուն են անում յարը, իգիթը, լաճը, էսը, էնը, մուրազը, քամակը քովե-քովը, համովն ու դամովը և այլն:

Գեղարվեստական խիստ ցածր որակ ունի նաև «Խութեցի Հովնան» մեծածավալ պոեմը, որը փորձ անելով անդրադառնալ այն հերոսական ապստամբությանը, որ 9-րդ դարում Տարոնի ժողովուրդը Խութեցի Հովնանի գլխավորությամբ բարձրացրեց Բաղդադի խալիֆայության ոտնձգությունների դեմ, չի կարողացել բացահայտել այդ ընդվզման սոցիալական պատճառները, չի կարողացել ստեղծել դեպքերի պատմական միջավայր ու մթնոլորտ: Չկան մարդկային փոխհարաբերություններ, սոցիալական ներհակություններ, բախումներ, չկա գործողություն և սյուժե: Գործը ոչ մի քննադատության չի դիմանում մանավանդ կոմպոզիցիայի տեսակետից: Բնության բազմաթիվ նկարագրություններ և ժողովրդական բառ ու բանի հետևությամբ գրված երգերը, որոնցից մի քանիսը վատ չեն առանձին-առանձին վերցրած, չունեն որևէ կոմպոզիցիոն կապ, չեն նպաստում դեպքերի զարգացմանը: Գլխավոր հերոսի՝ Հովնանի մասին ընթերցողը պետք է գաղափար կազմի զանազան հատվածներում ցրված էպիստեմներից և գովասանքի խոսքերից, որոնք մնում են գեղարվեստորեն չապացուցված: Այսպիսով գեղարվեստական պատկերացմանը փոխարինել է գովքասացությունը, էպիկական գործին՝ օդան: Հեղինակը Հովնանի մասին մի քիչ ավելի շատ է հիշատակում պոեմի վերջում, որպեսզի հայտարարի, թե նա հաղթեց, ընդ որում հաղթանակը ձեռք է բերվում շատ հեշտ՝ ինչպես օպերետային բեմի վրա: Գրված է ծանր չափածոյով, լի է բռնահանգերով, տարօրինակ համեմատություններով և լեզվական արատներով:

Ինչպես տեսանք, ընդամենը մի քանի համեմատաբար հա-
ջող ոտանավորների հետ միասին, հեղինակը ընթերցողին
մատուցել է բազմաթիվ այնպիսի կարճ ու երկար «երգերի
լավաշներ», որոնք արվեստի և գաղափարականության տե-
սակետից ո՛չ տաք են, ո՛չ էլ բուրյան:

1947

ՀԱՍՏԱՌՈՏ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱԹՋՆԵՐ, ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐ,
ՊԱՌՆԱՍԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ

1945

Արթնացնող ժամացույցը: «Սովետական Հայաստան» 270, էջ 3
Մի ակումբի պատմություն: «Սովետական Հայաստան» 15 հուլիսի,
էջ 4
Գրականասեր արտելապետները: «Սովետական Հայաստան» 4 նո-
յեմբերի, էջ 3
Չկա չարիք առանց բարիքի: «Սովետական Հայաստան» 20 դե-
տեմբերի էջ 3
Զմոռանանք նաև կոծակները: «Սովետական Հայաստան» 22 օգոս-
տոսի, 173

1946

Բարեղամ Իգնատիչը թամադա: «Սովետական Հայաստան» 26
ապրիլի, էջ 3
Բարեղամ Իգնատիչի նոր հնարագիտությունը: «Սովետական Հա-
յաստան» 24 ապրիլի, էջ 4
Հեռագրական մահ և ամուսնություն: «Սովետական Հայաստան»
1 մարտի, էջ 3

Գրպանի գրական-բացատրական բառարան: «Գրական թերթ» 20
հունվարի, էջ 4
Բազմատիրաժ թյուրիմացություն: «Սովետ. Հայաստան» 8 դեկտ, էջ 3
Չմեռալին գիշերվա երազը: «Գրական թերթ» 20 հունվարի, էջ 4

1947

Գլխավոր ագրոնոմի անգլուխ արարքը: «Սովետական Հայաստան»
20 ապրիլի, էջ 3
Նշանավոր օրեր: «Գրական թերթ» 31 մարտի, էջ 4
Գրական բացատրական բառարան: «Գրական թերթ» №8, էջ 4

1948

Թե ինչ մնաց մի կաթիլ մեղրից: «Գրական թերթ» № 37, էջ 4
Վիճելի սենյակի և անվիճելի չինովնիկության մասին: «Սովետա-
կան Հայաստան» 27 հուլիսի, էջ 3

1949

Ձյուն է գալիս փաթիլ-փաթիլ: «Սովետական Հայաստան» 29 հուն-
վարի, էջ 3
«Կցել գործին»: «Սովետական Հայաստան» 2 դեկտեմբերի, էջ 3
Հավերի, աղվեսների և այլոց մասին: «Սովետական Հայաստան»
25 հուլիսի, էջ 3

1953

«Դժոխք»—«Քավարան»: «Սովետական Հայաստան» 24 փետրվա-
րի, էջ 3

1954

Ընկեր դահլիճը: «Ոգնի» մարտ, № 1

1957

Մեծ դառնություն շաքարի գործարանում: «Սովետ. Հայաստան»
15 սեպտեմբերի, էջ 2

1960

Բաց նամակ Երջադսովետի գործկոմի նախագահին: «Գրական
թերթ» 11 մարտի
Քո դեմքն էլ պարզվեց: «Սովետ. գրականություն» №1, էջ 170

1961

Անուղղելի ուղղում: «Ոգնի» №4, էջ 3

1962

Փլավից մինչև մտքերի շիլափլավ: «Ոգնի» № 23
Ծիծաղելը բավական չէ: «Սովետական Հայաստան» 4 դեկտեմբերի,
էջ 4
Բարձրավոլտ կամայականություն: «Սովետական Հայաստան»
4 դեկտեմբերի, էջ 4

1964

Գլոբուսը: Հայպետհրատ:

1967

Բաց նամակ հանդերձյալ աշխարհից: «Սովետական Հայաս-
տան» 16 փետրվարի, էջ 4

1976

Մնափառության ոլորտներում: «Սովետական Հայաստան» 10 «գոստոսի, էջ 4

1980

Ինչու եմ խնայում անվիճելի անտաղանդին: «Ոգնի» № 23: Արտատպություն «Սովետական գրականություն» ամսագրից:

ՀՐԱՊԱՐԱԿԱՌՈՍԱԿԱՆ, ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐ

1940

Գրական թալան: «Սովետական Հայաստան» № 164, էջ 2

1941

Ի. Ս. Տուրգենևի «Արձակ բանաստեղծություններ» գրքի հրատարակության առթիվ: «Սովետ. գրականություն» № 2, էջ 88—89
Հայրենի վտակներ: «Սովետ. գրականություն» № 3, էջ 85—90

1945

Գրական խոտանի դեմ: Յ. Շոդենցի և Բ. Կարապետյանի գրքերի մասին: «Սովետական Հայաստան» 25 հուլիսի, էջ 4
Գրական խոտանի մի ռեկորդային նմուշ: «Ավանգարդ» 31 հուլիսի, էջ 4

1947

Երբ հեղինակի հոգին քաղցած է: «Սովետական Հայաստան» 8 հուլիսի, էջ 3
Մի արտառոց առաջաբանի առթիվ: «Գրական թերթ» № 19, էջ 4

1948

Սովետական գրողին անվայել քայլ: «Սովետական Հայաստան» 31 հունվարի, էջ 3
Գրական առողջ սերունդ.— Հր. Հովհաննիսյանի, Վ. Դավթյանի և Սաղ. Հարությունյանի անդրանիկ ժողովածուների առթիվ: «Գրական թերթ» №№ 15—16, էջ 2. 3
Անպատասխանատվություն, թե անկարողություն.— «Ով է Ռուսիայում լավ ապրում» գրքի թարգմանության առթիվ: «Սովետ. գրականություն» № 11, էջ 155—163
Նոր ծանապարհի և այդ ծանապարհը հատող բավիղների մասին: «Սովետ. գրականություն» № 10, էջ 103—111

1951

«Եվգենի Օսեգին»-ի հայերեն թարգմանության մասին: «Սովետ. Հայաստան» 30 մայիսի

1953

Թարգմանչի «Նոտան» քննադատին: «Գրական թերթ» 28 փետրվարի
Ծճմարտացի գիրք Խ. Աբովյանի մասին: «Ավանգարդ» 12 մայիսի

1955

Հնդիկ մեծ բանաստեղծի գիրքը հայերեն: «Սովետ. Հայաստան» 2 դեկտեմբերի

1956

Բարձրաձայն մտորում: «Գրական թերթ» 30 ապրիլի
«Օկտյաբր» ամսագրի մի արտառոց հոդվածի մասին: «Սովետ. Հայաստան» 25 նոյ, էջ 2

1958

Մի անվայելուչ պատասխանի առթիվ: «Գրական թերթ» 8 մարտի

1959

Գրական խարդախության ոլորտներում: «Գրական թերթ» 20 ապրիլի

1960

«Հուսաբերի» հուսակտուր ողբը: «Սովետ. Հայաստան» 22 դեկտեմբերի, էջ 4

1961

Նաիրի Զարյան: «Սովետական Հայաստան» 21 մայիսի, էջ 3
Մեր մայրենի լեզվի մասին: «Սովետ. Հայաստան» 3 հունիսի, էջ 3—4
Մեր թարգմանական գրականության մասին: «Երևան» 10 դեկտեմբերի, էջ 3—4

1962

Ծիծաղելը բավական չէ: «Սովետական Հայաստան» 4 դեկտեմբերի, էջ 4

1963

Գեղարվեստական թարգմանության հարցեր: «Գրքերի աշխարհ» 31 մայիսի, էջ 4

1973

Ինչպես եմ թարգմանել «Դեկամերոնը»: «Գրքերի աշխարհ» 15 մարտի, էջ 5

ՀՈԴՎԱԾՆԵՐ ՍՈՒՐԵՆ ՎԱՀՈՒՆՈՒ ՄԱՍԻՆ

1934

Է. Թոփչյան.— Սուրեն Վահունու բանաստեղծությունների մասին: «Գրական թերթ» 10 փետրվարի, էջ 2
Ն. Զարյան.— Ս. Վահունու ստեղծագործությունների մասին: «Գրական սերունդ» № 2—3, էջ 57—60

1938

Ա. Պապյան.— Ս. Վահունու «Ռազմի երգերը»: «Գրական թերթ» 31 մայիսի, էջ 4

1944

Գ. Հովսեփյան.— «Ղեպի արևմուտք» գրքի մասին: «Սով. Հայաստան» 18 հունվարի
«Ղեպի արևմուտք»— գրախոսական: «Սովետ. գրականություն» № 2—3, էջ 113—114

1946

Վնասակար ընդհանրացումներ: «Սովետական Հայաստան» 19 նոյեմբերի, էջ 2

1949

Դ. Դեմիրձյան.— Ս. Վահունու «Երգերի գիրք» գրքի մասին: Սովետ. Հայաստան» 17 նոյ., էջ 3
Գ. Ստեփանյան.— «Երգերի գիրք»: «Սովետ. գրականություն» № 4, էջ 101—110
Ա. Դարբենի.— Ս. Վահունի «Երգերի գիրք», «Ավանգարդ» №1, էջ 3
Ս. Աղաբաբյան.— «Ասք Իգորի ծակատամարտի մասին» էպոսը հայերեն: «Ավանգարդ» 12 դեկտեմբեր

1953

Ղ. Ղեմիրժյան.— «Ղեկամերոնը» հայերեն: «Գրական թերթ»
15 օգոստոսի, էջ 2

1956

Ս. Աղաբաբյան.— Համառոտ ակնարկ Ս. Վահունու կյանքի ու ստեղծագործության մասին: «Սովետիայ գրականության պատմություն» ռուսերեն լեզվով «Նաուկա», էջ 191—192
Ս. Սարյան.— Հետպատերազմյան սովետական գրականությունը: Երևան ԳԱ, էջ 124—129

1959

Ռ. Վարթազարյան.— Ս. Վահունու «Ղեպի արևմուտք» գիրքը: Գրականության մասին. Հայպետհրատ, էջ 173—176

1960

«Ղեկամերոնը» Ս. Վահունու թարգմանությամբ: «Գրական թերթ»
9 դեկտեմբերի
Ս. Սողոմոնյան.— Սուրեն Վահունու ծննդյան 50-ամյակի առթիվ: «Ս. Հ.» 27 դեկտեմբերի
Վ. Մնացականյան.— Երբ սիրով ես ետ նայում: «Ավանգարդ»
29 դեկտեմբերի, էջ 4

1961

Տաղանդավոր բանաստեղծը: «Սովետական Հայաստան» ամսագիր
№ 1, էջ 17

1970

Տ. Պապյան.— На страже времени: Ս. Վահունու 60-ամյակի առթիվ «Կոմունիստ» 31 հոկտեմբերի, էջ 3

Ս. Սողոմոնյան.— Ինքնատիպ տաղանդ. Ս. Վահունու 60-ամյակի առթիվ: «Գրական թերթ» 6 նոյեմբերի, էջ 3

Վ. Պետրոսյան.— Ժամանակի արձագանքը. Ս. Վահունու 60-ամյակի առթիվ: «Սովետական Հայաստան» 27 դեկտեմբերի, էջ 4
Արտ. Զալանթարյան.— Նոր հաճելի հանդիպում Շվեյկի հետ:

«Սովետական Հայաստան» 10 փետրվարի, էջ 3
Ս. Վահունին լավագույն թարգմանության մրցանակակիր: «Սովետական Հայաստան» 17 հուլիսի, էջ 4

Շահեն Թաթևկյան.— Հաշեկի գլուխգործոցը հայերեն: «Գրական թերթ» 16 օգոստոսի, էջ 2

Մելիքսեթ Մելքոնյան.— Գրականության անխոնջ մշակը: «Գրական թերթ» 26 դեկտեմբերի:

Ս. Մանուկյան.— Կեսդարյա գրական վաստակ: «Սովետական Հայաստան» 28 դեկտեմբերի

1982

Հովհաննես Հարությունյան.— Նոր թարգմանություն: Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհասի» թարգմանության մասին: «Գրական թերթ», էջ 4

1985

Ա. Խաչիկյան.— Սուրեն Վահունու «Գիրք անցած ծանապարհի» ժողովածուի առաջաբանը: Երևան «Սովետական գրող», էջ 3—19
Սևակ Արզումանյան.— Նրա կյանքի գիրքը: Ս. Վահունու «Գիրք անցած ծանապարհի» ժողովածուի մասին: «Գրական թերթ»

1990

Սերո Խանգաղյան.— Բանաստեղծ էր՝ սիրելի, երգիծող էր՝ խիզախ, թարգմանիչ էր՝ վարպետ: «Գրական թերթ» 13 հուլիսի, էջ 3

Ռուբեն Ջարյան.— Խոսք ընկերոջ հիշատակին: «Երեկոյան Երե-
վան» 17 հուլիսի, էջ 3:
Գևորգ Հայրյան.— Բանաստեղծը, երգիծաբանն ու թարգմանիչը:
«Խորհրդային Հայաստան» 1 օգոստոսի, էջ 3
Արամայիս Սահակյան.— Երգիծաբանի հուշարձանին: «Ոգնի»
հունիս Մ11, էջ 3

ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1930

Երկու երգ. Կոմերիտական գրողներ շարքից, «Պետհրատ» 36 էջ

1937

Ա. Ս. Պուշկին. Բախչիսարայի շատրվանը. թարգմանություն, «Հայպետ-
հրատ», 79 էջ

1938

Ռազմի երգեր: Բանաստեղծությունների ժողովածու, «Պետհրատ», 73 էջ

1943

Պեպի արևմուտք: Բանաստեղծությունների ժողովածու, «Հայպետհրատ»,
51 էջ

1948

Ասք Իգորի ծակատամարտի մասին: Թարգմանություն: «Հայպետհրատ»,
126 էջ

1949

Երգերի գիրք: Հատընտիր: «Հայպետհրատ», 126 էջ
Լոպե Պե Վեգա. Պարտիզայանի ջունը, «Հայպետհրատ», 136 էջ

1960

Բոկաչչո Ջիովանի. Ղեկամերոն: «Հայպետհրատ», 818 էջ

1966

Ղյումա Ալեքսանդր.— Կոմս մոնտե Քրիստո: Հատոր Ա. «Հայաստան»

1973

Հաշեկ Յարոսլավ. Քաջարի գինվոր Շվեյկի արկածները համաշխարհային
պատերազմի ժամանակ: «Հայաստան»

1978

Բալլադներ: «Սովետական գրող»

1981

Ա. Ս. Գրիբոյեդով. Խելքից պատուհաս: «Սովետական գրող», 168 էջ

Գիրք անցած ճանապարհի: Չափածո և արձակ երկերի ժողովածու: «Սո-
վետական գրող», 385 էջ:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

Կազմողի կողմից 5

ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱԾՔՆԵՐ

ԲԱՐԵՂԱՄ ԻԳՆԱՏԻՉԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Արթնացնող ժամացույց	10
Բարեղամ Իգնատիչը թամադա	15
Հեռագրական մահ և ամուսնություն	19
Բարեղամ Իգնատիչի նոր հնարագիտությունը	24
Խոսող նամակը	30
Բարեղամ Իգնատիչը բուժվեց	36
Բացօթյա հաճույքներ	41

ՖԵԼԻԵՏՈՆՆԵՐ

Գրականատեր արտելապետները	47
Չկա բարիք առանց չարիքի	51
Մի ակումբի պատմություն	55
Չմոռանանք նաև կոծակները	58
Չմեռային գիշերվա երազ	61
Բազմատիրաժ թյուրիմացություն	66
Գլխավոր ագրոնոմի անգլուխ արարքը	68
Կիճեյի սենյակի և անվիճեյի չինովնիկների մասին	72

Թե ի՞նչ մնաց մի կաթիլ մեղրից	76
«Կցել գործին»	78
Չլուն է գալիս փաթիլ, փաթիլ...	80
Հավերի, աղվեսների և այլոց մասին	83
Ընկեր դահլիճը	85
Մեծ դառնություն շաքարի գործարանում	89
Գլորուսը	94
Փլավից մինչև մտքերի շիլա-փլավը	97
Անուղղելի ուղղում	101
Բարձրավուտ կամայականություն	105
Բաց նամակ հանդերձյալ աշխարհից	108
Մնափառության ոլորտներում	121
Ինչու եմ խնայում անվիճեյի անտաղանդին	125

ՊԱՌՆԱՍԱԿԱՆ ԿԱՏԱԿՆԵՐ

Ջաղվածք	133
Մի մեղալակիր պովետի	134
Ակվարիում	134
Վավերացում	135
Բանաստեղծ N-ը	135
Խորհուրդ հեղինակին	135
Պորտրետ	135
Դեղատոմս՝ էպիգրամ գրելու համար	136
Հարց ու պատասխան	136
Ա-ին	137
Քո դեմքն էլ պարզվեց...	137
Աղվեսը առակագիր	138
Գրպանի գրական-բացադրական բառարան	139
Նշանավոր օրեր	145
Լրացուցիչ միջոցառումներ գրող N-ի ծննդյան 50-ամյակը հավերժացնելու համար	149

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀՈՂԿԱԾՆԵՐ

Թիթաղելը բավական չէ	153
«Եվզենի Օնեգին»-ի հայերեն թարգմանության մասին	164
Մի անվայելուչ պատասխանի աղթիվ	177
«Դժոխք» — «Քավարան»	197
Երբ հեղինակի «Հոգին քաղցած է»...	202
ՀԱՄԱՌՈՑ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ	209

ՍՈՒՐԵՆ ՎԱՀԱՆԻ ՎԱՀՈՒՆԻ

«ԲԱՐԵՂԱՄ ԻԳՆԱՏԻՉԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ»

ԵՐԳԻԾԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

ВАГУНИ СУРЕН ВАГАНОВИЧ

«ПРИКЛЮЧЕНИЯ БАРЕГАМА ИГНАТЬИЧА»

(на армянском языке)

Издательство «Знание»
Ереван, 1990

Խմբագիր՝ Ա. Վ. Խաչիկյան
Նկարիչ՝ Մ. Տ. Սոսոյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Մ. Թորոսյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Մ. Հովհաննիսյան

Հանձնված է շարվածքի 10. 08. 1990 թ.

Ստորագրված է տպագրության 21. 09. 1990 թ.

Չափսը՝ 70×108^{1/32} թուղթ № 2

Տառատեսակը՝ Արմենուիի: Տպագրության եղանակը բարձր: Հրատ. 8,16

Մամուլ: Տպագրական 14 մամուլ: Տպաքանակ 10.000: Պատվեր՝ 1275:

Գինը՝ 2 ռ. 70 կ:

«Գիտելիք» հրատարակչություն, Երևան 10, Աբովյան 8

Издательство «Знание», Ереван-10, Абовяна 8

Հայաստանի Հանրապետության հրատարակչությունների, պոլիգրաֆիայի
և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան,
Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета Республики Армения по делам изда-
тельств, полиграфии и книжной торговли, Ереван-10, ул. Алавер-
дяна, 65.